Սիրական (Սիրակ) Վառլամի Չախալյան

Ծնվել է 1949 թվականի հունվարի 25-ին Ձավախքում: 1969թ. ցերեկային ուսուցմամբ ավարտել է Երևանի ռադիոէլեկտրակապի տեխնիկումը, 1979թ. ինժեներ - կոնստրուկտորի մասնագիտությամբ, երեկոյան ուսուցմամբ՝ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը, միաժամանակ հեռակա ուսուցմամբ, ինժեներ – տնտեսագետի մասնագիտությամբ՝ Մոսկվայի համամիութենական էլեկտրակապի ինստիտուտը (1985-1988թթ. ասպիրանտուրային ուսուցում է անցել նույն ինստիտուտում):

1969-71թթ. ծառայել է Խորհրդային բանակում:

1972թ.-1979թթ. որպես ավագ ինժեներ աշխատել է Երևանի միջքաղաքային հեռախոսային կայանում:

1979թ. ստանձնել է ՀԽՍՀ կապի նախարարության ռադիոֆիկացիայի և էլեկտրակապի բաժնի պետի պաշտոնը: 1980-1986թթ. համատեղության կարգով դասավանդել է մասնագիտական առարկաներ՝ Կապի տեխնիկումում: 1989թ. նշանակվել է Մասիսի շրջանի կապի հանգույցի տնօրեն, 1998թ.՝ «Արմենտել» ՓԲԸ հատուկ կապերի սպասարկման կենտրոնի տնօրեն:

Արցախյան ազատամարտի տարիներին թիկունքային աշխատանք է կատարել կամավորականների պայքարին օժանդակելու համար: «Մոնթե Մելքոնյանի անվան թանգարան-գիտական կենտրոնի կառուցում» ծրագրի իրականացման նպատակով՝ 2012թ. համախոհ ընկերների հետ ստեղծել է «Մոնթե Մելքոնյան թանգարան» հիմնադրամը և ստանձնել դրա տնօրենի պարտականությունները: Ձգտել է «Մոնթեն նայում է Արարատին» իր գրքով շարունակել հիմնադրամի՝ հայ նոր սերնդի հայրենասիրական դաստիարակության, ազգային ոգու ամրապնդման նպատակադրումը:

Հեղինակը մեծապես շնորհակալ է սույն հրատարակությանը էապես օժանդակած իր ուսանողական ընկերոջը՝ ազնվասիրտ Հովհաննես Սուլթանյանին:

ՍԻՐԱԿ ՉԱԽԱԼՅԱՆ

ՄՈՆԹԵՆ ՆԱՅՈՒՄ Է ԱՐԱՐԱՏԻՆ

ՍԻՐԱԿ ՉԱԽԱԼՅԱՆ



ՄՈՆԹԵՆ
ՆԱՅՈՒՄ Է ԱՐԱՐԱՏԻՆ

Հայոց մայրերը Մոնթեներ միշտ են ծնել: Նրանցով է հայ ժողովուրդը պատմության խորքերից հասել մինչև մեր օրերը և վստահորեն գնում է դեպի ապագա:

Մոնթեն կերպար էր հայկազյան, մեծ ազնվական՝ էությամբ պարզ ու անկեղծ, ճշտապահ ու կարգապահ, խստապահանջ, մեծ կամքի տեր ու ծայրաստիճան հետևողական, ազնիվ ու երեխայի պես միամիտ, չափազանց անմիջական, նույնչափ ուշադիր ու հուսադրող, գործուն՝ մարտադաշտում և ամենուր: Կատարյալ էր ռազմարվեստում՝ գրեթե անկորուստ, միշտ հաղթանակով էր ավարտում կռիվը:

Մեծ ազնվականի, քաջ ու արի, տաղանդավոր և հմուտ զորահրամանատարի մասին ոչ միայն ռազմաճակատում, այլև ամբողջ հայության մեջ, դեռևս նրա կենդանության օրոք, արդեն լեգենդներ էին հյուսվում:

Այսպիսին է Մոնթեն, առասպելացած, լեգենդար Մոնթեն:

Ժողովուրդը չի սխալվում՝ ժողովուրդը իմաստուն է:

Պատերազմից հետո պետք է հզորացնենք երկիրը, շատ-շա՛տ հզորացնենք: Այս կռիվը դեռ վերջինը չէ:

Մոնթե Մելքոնյան

ՍԻՐԱԿ ՉԱԽԱԼՅԱՆ

ՄՈՆԹԵՆ
ՆԱՅՈՒՄ Է ԱՐԱՐԱՏԻՆ

Լրացված վերահրատարակություն

Երևան
Հեղինակային հրատարակություն
2019

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Չ 160

Գիրքը լույս է տեսնում «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի մեկենասությամբ:

Չախալյան Սիրակ
Չ 160 Մոնթեն նայում է Արարատին/ Ս. Չախալյան.- Եր.:
Հեղ. հրատ., 2019.- 176 էջ:

«Մոնթեն նայում է Արարատին» գրքում հեղինակը ներկայացրել է Արցախյան ազատամարտի նվիրյալ, ՀՀ ազգային հերոս, Արցախի հերոս Մոնթե Մելքոնյանի կյանքի ու գործունեության նոր էջեր: Մասնագետ հնագետի, ԱՍԱԼԱ-յին անցյալում զինվորագրված Ավոյի կերպարը սույն գրքում բացահայտված է նոր փաստերով ու հոգեգծերով: Հրատարակությունը անկասկած, յուրովի կզորացնի հայ ինքնությունը՝ հանուն մեր հարատևման, ի հեճուկս թշնամյաց:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-0-2451-6

© Սիրակ Չախալյան, 2019 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբանի փոխարեն (ինչպես ծնվեց գիրքը) 5
Արյան կանչով 9
Հայրենիքում.....19

Մաս I Մոնթեն ամենուր է 23
Մասիսում 23
Հերթական քայլ 26
Ժամանակի թելադրանքով 28
Հայացք Արարատին 30
Հարսանիք 34
Ելույթ ռադիոցանցով.....37
Փորձարկում 39
Պայմանավորվածություն 41
Նշանակում 43
«Հայդուկ» կամավորական ջոկատը 45
1992թ. հունիսի 28-ի ճակատամարտը 52
Մասիսի շրջանի ջոկատները և Մոնթեն 56
Համախմբում 60
Հասանելի հեռախոսակապ 63
Հեռախոսազանգ.....65
Հացկերույթ 67
Ազգագրական երգ ու պարի «Տավրոս» խումբը 69
Մայլեն 76
Վերջին հանդիպում 79
Անհավատալի լուր 82
Ոդիսական 84

Մոնթեն համոզված էր 92
Մոնթեի ասույթներից 94
Կոմիտաս Ավանեսյան 96
Մոնթեբերդում 101

Մաս II Ժամանակը հուշում է.....104
Մոնթեի կիսանդրին և նկարը 104
Հանդիպում 107
Որոշում 109
Ծրագիր 111

Մաս III Ազատամարտի ազնվականը.....116
Հանդիպում Գուրգեն Մելիքյանի հետ 116
Այսպես խոսեց Սամվել Մուրադյանը 120
Ալեք Ենիգոմշյանի խոսքը.....125
Լևոն Ղ. Շիրինյանի մոնթեական խոհերը 127
Աշոտ Մելքոնյանը հիշում է 129
Պատմում է Մարտիրոս Ժամկոչյանը 133
Վերհիշում է Զավեն Պետրոսյանը 138
Մարդ լեգենդը 142
Մանուկ Հովհաննիսյանի ճեպախոսքը.....146
Ապրիլյան պատերազմ և նորից կռվի դաշտում 147
Վերջաբանի փոխարեն 150
Խոսք խմբագրի 152
Մոնթե Մելքոնյան (1957-1993թթ.) 155
Արցախյան ազատամարտի տարեգրություն 161

ԶՈՐԱՎԱՐ ԱՎՈ 175

Նախաբանի փոխարեն

(ինչպես ծնվեց գիրքը)

Գալիս է ժամանակ, երբ մարդ սկսում է վերհիշել և վերապրել իր կյանքի անցած-գնացած տարիները, խորհում արածչարածի մասին: Հիշողություններն են, որ մարդուն կյանքը վերաիմաստավորելու հնարավորություն են տալիս, անկախ այն հանգամանքից, թե ինքը՝ մարդ-արարածը, հոգսաշա՞տ է, գերզբաղվա՞ծ կամ հարաբերականորեն ազատ: Հենց այդ հիշողություններն էին, որ ինձ ու ընկերներիս մղեցին մի գաղափարի, որ վերաբերում էր հայոց քաջորդուն՝ Մոնթեին:

Ինքս հաճախ էի հիշում նրան՝ վերապրում մեր հանդիպումները և մտորում: Հիշում էի ինքնաբուխ, հիշում պատեհ թե անպատեհ առիթներով, նրա թիկունքային և մարտական ընկերներին տեսնելիս: Հիշում էի, երբ գնում էի իմ ամառանոց և տան պատից կախված նրա նկարին Ջավախքի բարբառով «բարլուս» ասում:

Տարիներ են անցել Մոնթեի զոհվելուց, սակայն նրա կերպարը՝ իր հոգու զուլալ մաքրությամբ բյուրեղացած, դարձել է անմար մի կրակ՝ լույս սփռելով ամենուր, որտեղ կան հայն ու հայությունը:

Չգիտեմ՝ արդյոք կհանդիպեի՞ Մոնթեին, եթե 1989թ. սկզբին ՀԽՍՀ կապի նախարար Ռոբերտ Ավոյանն ինձ չառաջարկեր ղեկավարել Մասիսի կապի հանգույցը: Ինչպես ինքն ասաց, այնտեղ կապի աշխատանքի որակի բարելավման խիստ կարիք կա, անհրաժեշտ է, որ առկա խնդիրները կարճ ժամկետում լուծվեն:

Մասիսի շրջանային կապի հանգույցում նախ ծանոթացա

աշխատակազմին: Նկատեցի, որ նրանում քիչ չէին նաև փախստականները՝ եկած Բաքվից, Սումգայիթից, Գանձակից, Շահումյանից և այլ բնակավայրերից:

Կապի նախարարության օժանդակությամբ միջքաղաքային հեռախոսակապի անալոգային և ֆիզիկապես մաշված սարքավորումները փոխարինեցի թվայիններով: Հիմնանորոգեցի ավտոմատ հեռախոսակայանը: Այդ աշխատանքները համագործակցված իրականացրին Մասիսի կապի հանգույցի և Երևանի հեռախոսային ցանցի առաջատար մասնագետները:

Նախկին կապերի շնորհիվ Բելառուսից բերեցի լրացուցիչ սարքավորումներ, ինչը հնարավորություն տվեց ավելացնելու Մասիսի քաղաքային հեռախոսակայանի կարողությունը՝ 5000-ից մինչև 6000 համարի: Մոնտաժումն իրականացրին Բելառուսից հրավիրված մասնագետները: Այս ամենի շնորհիվ հնարավոր եղավ ամբողջովին հեռախոսաֆիկացնել Մասիս քաղաքի նորակառույց բնակելի շենքերն ու մասնավոր տները: Կայանը համալրեցի նաև յուրաքանչյուր բաժանորդի համար նախատեսված լրացուցիչ թվային սարքով և այն ժամանակվա չափանիշներով դրանով կտրուկ բարելավվեց հեռախոսակապի հուսալիությունը և որակը: Նշված աշխատանքների իրականացման շնորհիվ, մոտ երեք անգամ ավելացավ ձեռնարկության եկամուտը:

Սակայն կար նաև այլ իրողություն՝ պատերազմական իրավիճակը: Այս պայմաններում հուսալի և անկախ կապն առավել անհրաժեշտ էր:

Արդեն երկու տարի էր, ինչ աշխատում էի Մասիսում, երբ ծանոթացա Մոնթե Մելքոնյանի հետ: Դրանից հետո էլ շատ անգամ եմ հանդիպել նրան. չափազանց տպավորիչ էր իր հա-

մեստությամբ, պարզ սովորական կեցվածքով: Միաժամանակ ինչ որ թաքուցյալ ուժ կար նրա ներաշխարհում, որ կարծես քեզ մղում էր համախոհության ու գործակցության: Թերևս, տպավորում ու առինքնում էր նրա մեծ մտապաշարը, խորիմացությունը և հոգու մաքրությունը: Սրան գումարած նաև նպատակադիր հայրենասիրությունը՝ ակամայից չէիր կարող չդառնալ նրա ազնվության ենթական ու համախոհը:

Մասիսում խնդիրներ լուծելու հետամուտ Մոնթեն պատեհ պահերին զմայլված, երբեմն մտածկոտ հայացքով նայում էր Արարատին: Դիտելով վեհանիստ լեռը, հավանաբար, խորհում էր նրա շուրջը տարածված պատմական հայրենիքն ազատագրելու, հայությանը համախմբելու, ծպտյալ կամ օտարախոս հայերին իրենց ինքնությանը վերադարձնելու, հայոց քրիստոնեական և նախաքրիստոնեական պատմամը - շակութային արժեքներն օտարներին ներկայացնելու, մեր լեռնաշխարհի բնիկների դերակատարումը նրանց գիտակցության մեջ ամրագրելու, հայ ժողովրդի համար նոր կյանք ապահովելու, ի վերջո Հայաստանը խաղաղ գոյակցության խաչմերուկ դարձնելու մասին: Գրում եմ հավանաբար, որովհետև սակավախոս Մոնթեն, այնուամենայնիվ, խոսում էր այս ամենի մասին, և Արարատին տևականորեն հառված նրա հայացքը նույնպես խոսուն էր:

Նա հայ ազգի այն զավակներից էր, որ հայրենիք գալուց հետո մոռացավ օտարությունը՝ բացառեց այն, մայր հողում առավել հայացավ: Մոնթեն կռվեց հանուն Արցախ աշխարհի, կռվեց իր ամբողջ զորությամբ, կռվեց ինչքան հասցրեց և հաղթելով նահատակվեց հայոց պատմական հողում:

Չգիտեմ՝ թղթին հանձնած իմ հիշողությունները հրապարակելուց հետո մոնթեական վերհուշերս ու տեսիլքներս կպակասե՞ն: Ինչ էլ լինի, հայրենյաց հերոսի կերպարին որոշ նրբագծեր ավելացնող գրանյութս, կարծում եմ, իզուր չշարադրվեց:

Գրեցի նաև Մոնթեի՝ ոչ այնքան հայտնի շարքային ու հանրածանոթ զինակիցների մտահոգություններին առնչվող իմացածիս և տեսածիս, ինչպես նաև թիկունքից ռազմաճակատին օժանդակող հայրենապաշտ ու անձնվեր հայորդիների մասին: Գուցե այս ամենը շատ քիչ էր այդ մեծ հայի էության ու նրա զինակիցների հերոսական ավանդի և թիկունքայինների աջակցության համեմատ: Կարծում եմ ուրիշները երբևէ կլրացնեն անկանխակալորեն իմ բաց թողածը:

Թող Մոնթե Մելքոնյանի հիշատակն անմահացնող այլ գրքերի կողքին լինի նաև այս գիրքը: Բայց միայն սրանով չեմ կարող մարել մոնթեականությունը մեզանում կենսակերպ դարձնելու առաքելության հանդեպ իմ բարոյական պարտքը:

Այդ մասին նույնպես կկարդաք սույն գրքում:

Արյան կանչով

Մոնթեն արցախյան ազատամարտի ընթացքում,
և՛ մինչև այդ հայոց ազգային հարցը ընկալեց իր ամբողջ
տարողությամբ՝ որպես հայ ժողովրդի իրավունք.
ինքնորոշվելու իր պատմական հայրենիքի
ամբողջ տարածքի վրա և
այնտեղ ապրելու արդար հասարակարգում:

Մարգար Մելքոնյան

Արցախյան ազատամարտի լեգենդար զորահրամանատար, նախկինում ASALA-ի մարտիկ, ASALA-*Հեղափոխական Շարժման* հիմնադիր, հնագետ ու պատմաբան, ՀՀ ազգային հերոս և Արցախի հերոս Մոնթե Մելքոնյանը հայ ժողովրդի այն զավակներից էր, ով իր ամբողջ գիտակցական կյանքը անմնացորդ նվիրաբերեց ազգի դեմ ծառացած խնդիրների լուծման և նրա նպատակների իրականացման դժվարին գործին:

Հայաստանի Հանրապետությունում, Արցախում, Ջավախքում և խորհրդային Սփյուռքում Մոնթեն հիմնականում մեծ ճանաչում ունեցավ 1991-1993թթ. Արցախյան ազատամարտում իր ունեցած վճռորոշ դերակատարմամբ: Սակայն կար նաև մեկ այլ իրողություն, որը կարծես քողարկվել էր Արցախյան ազատամարտում լեգենդար զորահրամանատարի կերպարի շղարշի ներքո, այն է՝ ո՞վ էր Մոնթե Մեքոնյանը Սփյուռքում: Նրա անցյալի մասին շատերը չգիտեին, գրեթե

չէին էլ ուզում իմանալ, նրանց համար Ավոն էր՝ երկնքից իջած, և՝ Արցախի իրականությունը:

Նախքան հայրենիք գալը Մոնթեն մեծ դերակատարում էր ունեցել հայոց խնդիրների լուծմանը նպատակաուղղված ազգային պայքարում՝ գերմարդկային մտավոր և ֆիզիկական ուժ ու նվիրում պահանջող գործունեություն ծավալել, միաժամանակ ստեղծել ուրույն աշխատություններ հայոց ազգային հարցի, Հայաստանի պատմության ու ռազմավարական խնդիրների մասին:

Այս ամենի կարևորությամբ պայմանավորված՝ հարկ համարեցի, թեկուզ և շատ հակիրճ, դրանք ներառել գրքում՝ ընթերցողին ներկայացնելու նպատակադրմամբ, որոնք բնականաբար կնպաստեն Մոնթեի կերպարի ավելի խոր ընկալմանը:

Եվ այս կապակցությամբ մեկ անգամ ևս անդրադարձա Մոնթեի «Իրականություն» աշխատությանը և «Պայքարելու իրավունք» խոհագրության ընտրանուն (գիրքը կազմել է Մարգար Մելքոնյանը), ինչպես նաև նրան առնչվող այլ նյութերի:

Մոնթեն, Արևմտյան Հայաստանի Խարբերդ նահանգի Խարասար գյուղից (ավերված 1915թ.) ԱՄՆ ներգաղթած Մելքոնյանների գերդաստանի երկրորդ սերնդի՝ Չարլզ Մելքոնյանի զավակներից էր: Նա արդեն դեռահաս պատանի էր, երբ ծնողները որոշեցին ընտանյոք ճամփորդել եվրոպական երկրներում: Մելքոնյանների ընտանիքը եղավ տարբեր վայրերում, ի վերջո, հասավ Արևմտյան Հայաստան: Նպատակը նաև մորական տունը տեսնելն էր…: Տեսան, սակայն ներս չմտան. այնտեղ թուրքեր էին բնակվում…

Մոնթեի ծնողները զավակներին ճանաչելի դարձրին իրենց պատմական հայրենիքը, որի գոյության մասին ինչ-ինչ պատճառներով նրանք դեռևս չգիտեին, կարելի է ասել, անգամ պատկերացում չունեին՝ ով էին իրականում: Նրանք պարզապես անհոգ ամերիկացի երեխաներ էին ու՝ վերջ:

Ճակատագրի ինչպիսի բեկում: Այդ ճամփորդությունն ու նախահայրենիքի հանդեպ առաջացած անբացատրելի զգացումը հիմնովին փոխեցին Մելքոնյանների երեխաների ներաշխարհը. նրանք այլևս նախկինը չէին. գիտակցեցին իրենց հայ լինելը, Հայոց ցեղասպանությունն ու դրա հետևանքները:

Մոնթեի հոգում, չնայած նրա վաղ տարիքին, մինչ այդ իրեն անհայտ՝ իր ազգի փորձության և նախահայրենիքի կորստի գիտակցությունն էր բուն դրել: Եվ դա ազգային-ժառանգական ձգողության հետևանք էր: Այդ հասակում նա ունկնդիր եղավ իր արյան կանչին և սկսեց հետաքրքրություն ցուցաբերել ազգային ակունքների, արմատների, ինչպես նաև՝ նախնիների պատմության ու մշակույթի հանդեպ:

Անցան տարիներ, Մոնթեն ժամանակի հետ հոգևին բարձրացավ՝ ներաշխարհում ձևավորեց իր կյանքի նպատակը, բուն առաքելությունը, առաքելություն՝ իմացության ու պայքարի: Իմացությունը նրա սկզբնավորվեց համալսարանական տարիներին, երբ ուսումնասիրեց արևելյան երկրների պատմությունը և անցյալ ու նորօրյա իրադարձությունների, հակասությունների լավագիտակ դարձավ: Լիարժեք տիրապետեց հայոց պատմությանը. խորապես ըմբռնեց Հայոց հայրենազրկումը, ունեզրկումը և համասփռվելը:

Վասպուրականի ժայռափոր դամբարանները և կացարանները ուսումնասիրելիս Մոնթեն ավելի ճանաչեց իր նախա-

հայրենիքը՝ մարդկային քաղաքակրթության բնօրրաններից մեկը համարված այն աշխարհաեզրը (ցամաքային և քաղաքակրթական գլխավոր խաչմերուկը), որ կոչվում է Հայկական լեռնաշխարհ՝ հայերի բնօրրան: Մոնթեն ինչքան խորն էր ընկալում իր նախահայրենիքը, այդքանով էլ որոշարկում էր իր նպատակը՝ առաքելությունը: Նախնիներից խլված հայրենիքը՝ Արևմտյան Հայաստանն ու ազգի նկատմամբ կատարված աննախադեպ ոճրագործությունը՝ Հայոց ցեղասպանությունը նրան հանգիստ չէին տալիս:

Իր ինքնության և Հայկական հարցի գիտակցումը Մոնթեին 1978թ. տարան Միջին Արևելք: Սկզբնական հանգրվանը Բեյրութն էր: Բնականաբար, նա ուզում էր մոտ լինել, Մեծ եղեռնից հրաշքով փրկված և պատմական հայրենիքին մերձակա երկրներում (Իրան, Սիրիա, Լիբանան), հաղորդվել այնտեղ ապաստանած հայությանը, որի պայքարին վճռել էր նվիրվել: Եղավ Թեհրանում այցելեց հայկական համայնքներ և ականատեսն եղավ Իրանում շահի դեմ ուղղված ցույցերի նախնական փուլին…: Այդ ժամանակ անհանգիստ էր նաև Թուրքիայի արևելյան շրջաններում՝ Արևմտյան Հայաստանում: Այնտեղ թուրք հեղափոխականները հայտարարել էին «ազատագրված գոտիներ»: Նրանք կաթվածահարել էին կյանքը տեղի բոլոր բնակավայրերում, իսկ լեռներում իրադրության տերն էին քուրդ պարտիզանները:

Որոշ ժամանակ անց Մոնթեն վերադարձավ Բեյրութ: Բուրջ Համուդում նա մտերիմ ընկերոջ միջոցով ծանոթացավ Ալեք Ենիգոմշյանին: Նրանք նույն կերպ էին գնահատում այդ ժամանակի տարածաշրջանային իրավիճակը: Հնարավո-

ռություն էր առաջացել, բացառիկ հնարավորություն՝ միանալու ցեղասպանի դեմ ապստամբությանը:

1979թ. ամռանը Մոնթեն նորից ժամանեց Թեհրան: Նա նոր ընկերոջ՝ Վահիկ Շահմուրադյանի և այլ երիտասարդների հետ ուղևորվեց Իրանական Քուրդիստանի Մուհարադ քաղաք և հանդիպեց «Քոմալա» կոչվող կազմակերպության առաջնորդի հետ: Այնտեղ թե՛ առաջնորդը, և թե՛ քուրդ պարտիզանները մեծապես տպավորեցին նրան: Մոնթեի նպատակը, նրանց միջոցով Թուրքական Քուրդիստանի քուրդ պարտիզանների և թուրք հեղափոխականների հետ համագործակցության եզրեր գտնելն էր:

Այդ ժամանակ Լիբանանում «Փաղանգավորները» նորից զենքն ուղղել էին հայաբնակ Բուրջ Համուդին: Մոնթեն Իրանից շտապ վերադարձավ Բեյրութ: Որոշ ժամանակ նա մասնակցեց լիբանանա-պաղեստինյան միասնական կռվին՝ ընդդեմ արտաքին ուժերի: Սակայն հիմնականում (մոտ երկու տարի) մասնակցեց Լիբանանի հայության ինքնապաշտպանական կռիվներին:

Մոնթեն այդ ընթացքում՝ Բեյրութին հարող մի ամառանոցում սկսեց ժամանակ առ ժամանակ հանդիպել ընկերների մի փոքր խմբի: Նրանք այնտեղ ամենօրյա լարվածությունից հանգստանում էին՝ հայրենակիցների հետ քաղաքական հարցեր քննարկելով:

Այդ հանդիպումներն օգնեցին, որ Մոնթեն հստակ պատկերացնի առաջիկա պայքարի «նվազագույն նպատակը»: Այն Մոնթեն արդեն կոչում էր «հայրենասիրական ազատագրական պայքար»: Նա դեռևս իրականանալի չէր համարում «Ազատ, միացյալ և անկախ Հայաստան» կարգախոսը, ինչ-

պես նաև՝ Սևրի 1920թ. պայմանագրի դրույթները: Բայց նրա հայացքն ու միտքը միշտ ուղղված էր Արևմտյան Հայաստանին: Նա համոզված էր՝ իրատեսությունն է հայկական հարցի լուծման բանալին:

1980թ. մայիսից Մոնթեն Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի շարքերում ակտիվորեն մասնակցեց սփյուռքահայությանը մտահոգող ազգային խնդիրների լուծմանը միտված պայքարին՝ ընդդեմ ցեղասպան թուրքական պետության: ASALA-ի զինված քարոզչության շնորհիվ էր, որ կրկին միջազգային քաղաքական և իրավական ասպարեզ իջավ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը:

Մոնթե Մելքոնյանի կարճատև անդամագրումը «Գաղտնի բանակին» հնարավոր դարձրեց հասկանալու՝ խմբավորումը չուներ հստակ քաղաքական ծրագիր: Նպատակը ոչ թե բռնազավթված Հայաստանն ազատագրելն էր, այլ զինված քարոզչությունը. խմբավորումը սաղմնային վիճակում էր, իր ու իր պես մտածողների համար հեշտ կլիներ այն դարձնել իսկական հեղափոխական կազմակերպություն:

Շուտով նա պետք է վերջնականապես համոզվեր, որ զինված քարոզչությունն ինչ՛ որ փուլում և ինչ՛ որ չափով հասել էր իր նպատակին, սակայն այն ի վերջո հասնելու էր այլ հանգրվանի, երբ այլևս չէր նպաստելու հայկական խնդրի լուծմանը: Այդ գիտակցումով՝ իր գաղափարախոսությանն ու համոզմունքին հավատարիմ, Մոնթեն 1983 թվականի հուլիսի կեսին համախոհներով հեռացավ ՀԱՀԳԲ-ից՝ ստեղծելով ՀԱՀԳԲ-Հեղափոխական Շարժումը:

…Մոնթեն ՀԱՀԳԲ-ից հեռանալու պատճառով մոտ երկու տարի՝ 1983-85թթ., անցկացրեց ընդհատակում (Լիբանանում,

ապա՝ Ֆրանսիայում): Այդ ընթացքում նա ՀԱՀԳԲ-ՀՇ հայ մարտիկների հետ մշակում էր քաղաքական նոր կազմակերպության մանիֆեստի նախնական տարբերակը: Այդ կազմակերպությունը, որ կոչվելու էր «Հայ հայրենասիրական ազատագրական շարժում» (ՀՀԱՇ), նպատակադրել էր համայն Սփյուռքի տարբեր խմբերն ու հաստատությունները միավորելու թուրքական պետության դեմ գործող միասնական մեկ ուժի մեջ: Տեսլականը զինյալ պայքարով, որպես հայ ժողովրդի իրավունք, ինքնորոշվելն էր իր պատմական հայրենիքի, առնվազն Խորհրդային Հայաստանին հարող հանիրավի թուրքապատկան տարածքներում:

ՀԱՀԳԲ-Հեղափոխական Շարժումը 1984 թվականին ներքոնշյալ հայտարարագրով (կոչով) դիմեց հայության բոլոր առաջադեմ տարրերին՝ մասնակցելու իրենց ջանքերին՝

…ՀԱՀԳԲ-ի անկեղծ հայրենասերների կատարած դրական աշխատանքի փորձից քաջալերված՝ մենք վճռել ենք ձերբազատվել անցյալի սխալներից և ապագայի հիմքը դնել: ՀԱՀԳԲ-Հեղափոխական Շարժման նպատակը այս է:

…Այսօր, ավելի քան երբեք, հստակ, մանրամասն և գիտական քաղաքական ուղեգծի վրա հաստատված մի նոր շարժում հիմնելու ստիպողական անհրաժեշտությունը պարզ է:

… Ըստ սերտված քաղաքական ուղեգծի՝ մեր ժողովրդի իրապաշտ նպատակը «Հայաստանը ազատագրելու» անորոշ կարգախոսից ավելի պիտի հստականա: Մեր առջև ունենալով այս քաղաքական ուղեգիծը ու նպատակը՝ նրա իրագործման համար անհրաժեշտ ռազմավարությունը հստակորեն պիտի սահմանվի:

…Մեր պայքարի ողնաշարը հանդիսացող այս քաղաքական ուղեգիծը, մեր ռազմավարության հետ միասին, հաջորդական հանգրվաններով կհղկվի ու կհարստանա, երբ ամբողջությամբ ուսումնասիրենք յուրաքանչյուր գաղութ առանձին և բոլոր գաղութների իրար հետ ունեցած հարաբերությունները, երբ Խորհրդային Հայաստանի ու նրա բոլոր երևույթների առնչությամբ շոշափելի և հստակ հասկացողություն ունենանք, երբ աշխարհը սերտենք ինչպես այսօր կա՝ հատուկ ուշադրություն դարձնենք Թուրքիայի բոլոր երևույթներին ու այնտեղ գտնվող հեղափոխական հոսանքներին:

…Այսպիսի քաղաքական ուղեգծի համաձայն է, որ պիտի մոտենանք ռազմական գործողությանը: Ամբողջ ռազմական գործողությունը պիտի տարվի ըստ քաղաքական հստակ ուղեգծի:

…Այս մոտեցումը պիտի օգտագործվի ավելի լայն տարողությամբ՝ ժողովրդական աջակցություն ապահովելու համար, որպեսզի հնարավոր լինի մեր բռնագրավված հայրենիքում աստիճանաբար կերտել մեր զինյալ ազգային ազատագրական պայքարը:…Բոլոր ռազմական, քաղաքական և այլ աշխատանքները հնարավոր կդառնան մեր նոր ազատագրական շարժման առաջ և հստակ կազմակերպչական դրույթի վրա հիմնված լինելու շնորհիվ: Իսկապես, հավասարակշռված, ուղղահայաց և հորիզոնական փոխհարաբերություններով հատկանշվող ու հստակ պարտականություններ ունեցող գործող մարմիններով մի կառույց պիտի հիմնվի:

…Այս քայլերի իրագործումը ՀԱՀԳԲ-Հեղափոխական Շարժումը իր պարտականությունն է համարում: Մենք արդեն սկսել ենք այս գործընթացը և հայ առաջադեմ բոլոր տարրե-

ին հրավիրում ենք մասնակցելու մեր ջանքերին: Մենք վստահում ենք մեր ժողովրդի ուժականությանը. հայրենիք վերահաստատելու համար մղվող պայքարի ճանապարհին նա բոլոր խոչընդոտները կհաղթահարի:

… Ապագա որևէ ռազմավարություն, իբրև զինյալ գործունեության հիմնական ձև, պետք է ընդգրկի մեր հայրենիքում ժողովրդային թիկունք ունեցող երկարատև ֆիդայական պատերազմի հիմնավորումը՝ թուրք և քուրդ հեղափոխականների հետ սերտ համագործակցությամբ: Եթե այս դառնա մեր ռազմական հիմնական նպատակը, ապա զինյալ քարոզչության խիստ ընտրված թիրախների դեմ կատարված արարքները կարող են շարժումը ուժեղացնել զանազան ձևերով, բայց պետք չէ ևս մեկ անգամ մեր ***իսկական զինյալ պայքարը շփոթենք զինյալ քարոզչության հետ:***

Դժբախտաբար, 1985թ. նոյեմբերին, երբ Մոնթեին ձերբակալեց ֆրանսիական գաղտնի ոստիկանությունը, ՀԱՀԳԲ-ՀՇ քաղաքական նոր կազմակերպության մանիֆեստի նախնական տարբերակի մշակումն ընդհատվեց:

Մոնթեն քաղաքական բնույթի նամակներ, հոդվածներ և ավելի ծավալուն աշխատություններ է գրել դեռևս 1981-1990թթ., հիմնականում՝ 1984-1989թթ., իր՝ ընդհատակում և բանտում անցկացրած տարիներին: Մոնթեն իր աշխատություններում ծավալուն անդրադարձել է հայոց ազգային հարցին՝ մեթոդաբանական, ռազմավարական, կազմակերպչական և այլ տեսանկյուններից: Նրա աշխատություններում կան նաև սահմանումներ Արևմտյան Հայաստանի, հարակից տարածքների, խորհրդային Սփյուռքի ժողովրդագրական և այլ բնույթի վերլուծություններ:

Նրա գործերում արծարծված են ցեղասպանության հետևանքով աշխարհասփյուռ հայության՝դեռևս Թուրքիայի տիրապետությանը ենթակա հայրենիք վերադառնալու և այնտեղ ինքնորոշվելու հարցերը: Դրանք գրվել են Խորհրդային Միության գոյության ժամանակ, երբ կայսերապետության փլուզման հավանականությունը առնվազն արտառոց էր, ինչպես նաև մի ժամանակահատվածում, երբ Թուրքիայի սահմաններից ներս ծավալվում էին տարաբնույթ հակապետական և ազգային ազատագրական (այդ թվում՝ քրդական) շարժումներ: Լինելով էությամբ իրապաշտ, Մոնթեն դիտարկել է աշխարհաքաղաքական նշյալ իրականությունը՝ իր տեսական վերլուծություններով գործնական լուծումներ առաջարկել տվյալ ժամանակաշրջանի համար:

Խորհրդային Միության փլուզումով աշխարհաքաղաքական իրադրությունը հիմնովին փոխվեց: Թուրքիայի ներսում տարաբնույթ և քրդական ազգային ազատագրական շարժումները գրեթե մարեցին:

Ինչպես նշել է Մարգար Մելքոնյանը Մոնթեի «Պայքարելու Իրավունք» գրքի հրատարակության՝ իր խոսքում, ազգային ազատագրական շարժմանը վերաբերող Մոնթեի վերլուծությունները՝ պայմանավորված 90-ականների իրողություններով, և նրա որոշ գործնական եզրակացությունները կարող են ժամանակավորապես կորցրած լինել իրենց այժմեականությունը, սակայն դրանք դեռևս մնում են խիստ հետաքրքրական:

Մոնթեն երեք տարի անցկացրեց ֆրանսիական բանտում: Ազատ արձակվեց 1989թ. սկզբին և մեծ դժվարությամբ, մոտ երկու տարի անց՝ 1990թ. վերջապես կարողացավ գալ Հայաստան:

Հայրենիքում

Հայրենիք գալով, Մոնթե Մելքոնյանը մոտ ութ ամիս աշխատեց Գիտությունների ազգային ակադեմիայում՝ «Հայաստանը և հարևանները» գիրքը կազմելու և հրատարակելու նպատակով: Սակայն, արդեն լավատեղյակ լինելով արցախյան իրադրությանը, նա հստակորեն գիտակցում էր, որ Արցախի համար ծավալուն պատերազմն անխուսափելի է:

Գիտական աշխատանքին զուգընթաց Մոնթեն համագործակցում էր ՀԽՍՀ ԳԽ ներքին գործերի և պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի հետ:

Սկսել էր զբաղվել կամավորական ջոկատների ստեղծման, զինամթերքի հայթայթման և պաշտպանական այլ խնդիրներով:

Այդ նպատակով Մոնթեն նաև օգտագործում էր Սփյուռքի հայկական համայնքների, դրանցից հայրենադարձած հայրենակիցների հետ իր նախկին ու նոր կապերը:

Մասիսի շրջանի բնակչության հետ կապեր հաստատելու Մոնթեի նպատակը պատահական չէր: Բեյրութից, Սիրիայից, Իրանից և Թուրքիայից 1968-80թթ. մեծաթիվ հայ ընտանիքներ էին ներգաղթել Հայաստան, այդ թվում՝ Մասիսի շրջան: Շատ ընտանիքներ մշտական կապ էին պահպանում սփյուռքահայ համայնքների հետ: Նրանցից էր Սիրիայից հայրենադարձած Մանուկ Հովհաննիսյանի ընտանիքը, ում հետ էլ Մոնթեին խորհուրդ էին տվել կապ հաստատել:

Սկզբում Մոնթեն ծանոթացել էր Մանուկ Հովհաննիսյանի և Սամվել Հովհաննիսյանի հետ:

Նրանց հանդիպումը տեղի էր ունեցել Երևանի երկաթուղային կայարանում՝ Զավեն Պետրոսյանի (ԱՍԱԼԱ-ի անդամներից) միջնորդությամբ: Նրանք այնտեղից անմիջապես մեկնել էին Մասիս: Մանուկն այդ ժամանակ իր ընկերների հետ ստեղծած «Թեհլիրյան» միության նախագահն էր: Միությունն արդեն զենք-զինամթերքի արտադրություն ստեղծելու նախապատրաստական աշխատանք էր կատարում: Մասիսում Մոնթեն ու տղաները քննարկում են տարաբնույթ հարցեր, այդ թվում՝ զենք-զինամթերքի արտադրությանը վերաբերող հարցը:

Այդ օրվանից Մոնթեն Մասիսում սկսեց սերտ կապեր հաստատել «Թեհլիրյան» միության, որոշ ժամանակ անց՝ նաև շրջանի կամավորական ջոկատների հրամանատարների, ինչպես նաև տեղի իշխանության և մի քանի հիմնարկ-ձեռնարկության ղեկավարների հետ:

1991թ. սկզբին նա հաճախակի էր այցելում ՀԽՍՀ ԳԽ ներքին գործերի և պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վազգեն Սարգսյանին (1991թ. մայիսի 4-ից՝ ՊՊԿ): Նպատակը մեկն էր. նա ցանկանում էր օր առաջ մասնակցել ՀՀ սահմանների և Արցախի ինքնապաշտպանությանը: Լավ ծանոթ լինելով Մոնթեի կյանքի ուղուն և նկատի ունենալով նաև այլ հանգամանքներ, օր առաջ գործնական քայլով հայրենիքի հանդեպ իր պարտքը կատարելու նրա պատրաստակամությունը՝ Վազգեն Սարգսյանն առաջարկում է նրան ծանոթանալ ՀՀ սահմանների իրավիճակին, կամավորական ջոկատների զինվածությանը և պաշտպանական այլ խնդիրներին, իսկ հետո վերլուծական տեղեկանք ներկայացնել:

Երկու շաբաթվա ընթացքում իր համախոհների՝ Հովսեփ Հակոբյանի, Արտուշ Ծատուրյանի, Զավեն ու Արմեն Պետրոսյանների հետ Մոնթեն եղավ ամբողջ սահմանագծում՝ Նոյեմբերյանից մինչև Մեղրի և վերադարձավ Երևան: Նա արդեն լիարժեք տիրապետում էր սահմանային իրադրությանը: Այդ ընթացքում նա հանդիպել էր շատ ջոկատների հրամանատարների ու ազատամարտիկների հետ: Պարզվել էր անվիճելի ճշմարտություն՝ ինքնաբուխ կազմավորված ջոկատների շատ կամավորականներ առաջին անգամ էին զենք վերցրել, իսկ մարտավարությանը գրեթե անծանոթ էին: Մոնթեն եզրակացրել էր, որ անհրաժեշտ է ջոկատները մարզել՝ նախքան սահման մեկնելը, ռազմական պատրաստության դասընթացներ անցկացնել: Վազգեն Սարգսյանը լսելով այդ խնդրի վերաբերյալ Մոնթեի առաջարկը, համաձայնել էր՝ հավելելով նաև որոշ այլ ձեռնարկներ:

Այս առնչությամբ Մոնթեն և իր համախոհները գալիս են Մասիս և հանդիպում Մանուկին ու Սամվելին: Տղաների հետ քննարկում են ռազմական դասընթացներ անցկացնելու հնարավորությունը Մասիսի շրջանում: Որոշվում է հանդիպել ծանոթ զինվորականի՝ գնդապետ Սամվել Սաղաթելյանի հետ: Նա այդ ժամանակ Արտաշատի սահմանապահ ջոկատի հետախուզության պետն էր: Հանդիպումը կայանում է Մասիսում: Քննարկվում է այդ հարցը: Նա խոստանում է աջակցել թե՛ դասընթացներ անցկացնող բանիմաց, իրեն հավատարիմ սպաներով, և՛ թե ուսումնական զինատեսակներով, անհրաժեշտության դեպքում լուծել նաև ուսումնական տարածքի հարցը:

Կարծես Մոնթեն և իր համախոհները մի կարևոր խնդրի լուծման շեմին էին, բայց ինչ-ինչ պատճառով այն իրակա-

նացնել չի հաջողվում… Սակայն լուծվում է մեկ այլ խնդիր՝ Սաղաթելյանի կապերի շնորհիվ «Թեհլիրյան» միությունը հայթայթում է զինամթերքի առաջին խմբաքանակը և առժամանակ պահեստավորում Մանուկ Հովհաննիսյանի հայրական տան նկուղում: Մոնթեի հետ հանդիպումից հետո Սաղաթելյանը դարձել էր նրա համախոհը: Իսկ Մոնթեի գործունեության շրջանակն էլ ավելի էր ընդարձակվել:

Իմ ծանոթությունը Մանուկի հետ պատեհ առիթով էր: «Թեհլիրյան» միությանը հատկացվել էր գրասենյակային տարածք: Նրանք ինձ դիմեցին այնտեղ հնարավորինս շուտ հեռախոսագիծ անցկացնելու խնդրանքով: Ժամանակի թելադրանքով միջքաղաքային կապի ծառայություններից օգտվող բաժանորդների թիվը կտրուկ ավելացել էր: Բնականաբար, դա առնչված էր պատերազմական իրավիճակին, որի հոգսատերը ամբողջ հայ ժողովուրդն էր:

Այդ օրվանից էլ սկսվեց մեր համագործակցությունը, որը հիմնականում վերաբերում էր ռազմաճակատին աջակցելու տարաբնույթ խնդիրներին: Աշխատանքի բերումով, արդեն ծանոթացել էի նաև Սաղաթելյանի հետ:

…Մոնթեի՝ Մասիսի շրջան այցերից հետո շատերը մեծապես տպավորված ու քաջալերված էին՝ իմանալով նրա ով լինելը…

Ժամանակը վկայեց, որ այստեղ Մոնթեի աշխատանքի շնորհիվ բազմաթիվ կամավորականներ մասնակցեցին Արցախյան ազատամարտին և նրանցից շատերը կռվեցին թշնամու դեմ՝ նրա անմիջական հրամանատարությամբ: Նաև լուծվեցին պատերազմին վերաբերող կարևոր խնդիրներ:

ՄասI.
Մոնթեն ամենուր է

Մասիսում

Մոնթեի հետ ծանոթացա Մանուկ Հովհաննիսյանի միջոցով՝ 1991 թվականի ապրիլի վերջին: Ինձ զանգահարեց Մանուկը և ասաց, որ կարևոր գործով ուզում է հանդիպել: Պայմանավորվեցինք: Նա մտավ իմ առանձնասենյակ ոչ մենակ: Նրա հետ էր մոտ 35 տարեկան, ինձ անծանոթ մի երիտասարդ: Նա հագնված էր մեզ համար այն ժամանակ անհասկանալի ոճով՝ բոբիկ ոտքերին «նալիկներ», հագին ջինսե տաբատ, առանց թևերի կլոր վզով շապիկն ազատ արձակված էր ջինսի վրա: Կարճ մորուքով էր:

- Խնդրեմ, ծանոթացեք,- ասաց Մանուկը:

Մենք իրար ձեռք տվեցինք, նա ներկայացավ.

- Ես Մոնթեն եմ:

- Հետաքրքիր անուն ունեք,- ասացի ես:

Նա միայն ժպտաց:

Խոսեց Մանուկը.

- Մոնթեն ՀԱՀԳԲ-ի (ԱՍԱԼԱ) տղաներից է: Անցյալ տարվա հոկտեմբերին է հայրենիք եկել:

Մանուկը շարունակեց.

- Այսօր Մոնթեն Մասիս է եկել մի շատ կարևոր գործով:

- Ինչի՞ մասին է խոսքը ,- հարցրի Մանուկին:

- Թող Մոնթեն ներկայացնի, - ասաց Մանուկը:

Եվ նորեկը շատ հակիրճ պարզեց խնդիրը.

- Մեզ մեծ կռիվ է սպասում, զենքի շատ պակաս ունինք, հարկավոր է զենք սարքել:

Կրկին խոսեց Մանուկը.

- Ես Աշտարակի ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի հատուկ կոնստրուկտորական բյուրոյի (ՌԷՀԿԲ) մասնագետների հետ նռնականետ արտադրելու պայմանավորվածություն ունեմ: Մոնթեին նույնպես ծանոթացրել եմ վերոնշյալ բյուրոյի մասնագետների հետ, նրանք, իրապես, շատ հայրենասեր են: Մեր խնդրանքով, կոնստրուկտորական բյուրոյի մասնագետ Կարեն Դադալյանը արդեն իսկ ավարտել է ժամային մեխանիզմով հրահանգվող պայթուցիչների նախագծումը, որոնցով ամեն պահ հնարավոր է նախապես տեղակայված ականներ պայթեցնել: Նույն բյուրոյի մասնագետ Ալեքսանդր Չալյանն էլ ձեռք է բերել նռնականետների նախագիծը և պատրաստակամություն է հայտնել մասնակցելու նռնականետների արտադրությանը: Արտադրությունն սկսելու անհրաժեշտ շատ պարագաների համար արդեն պայմանավորվածություններ կան, անհրաժեշտ են նաև խողովակներ հետևյալ տեխնիկական բնութագրերին համապատասխան:

Եվ նա իմ սեղանին դրեց այն թուղթը, որի վրա գրված էին անհրաժեշտ խողովակների բնութագրերը:

Ամեն ինչ ինձ համար հասկանալի դարձավ: Այն ժամանակ Հայաստան ներկրվող ապրանքների կենտրոնական պահեստները Մասիս քաղաքում էին:

Տղաները նախօրոք տեղեկացված էին, թե որտեղից էր հնարավոր խողովակ ձեռք բերել:

Լավ ճանաչելով Մանուկին, բավականին լավ իմանալով ԱՍԱԼԱ-յի և նրան անդամագրված Սփյուռքի մեր հայորդի-

ների աննախադեպ գործողությունների մասին, հայտնեցի նրանց նախաձեռնությանն աջակցելու պատրաստակամություն:

Մանուկը շարունակեց.

- Նռնականետներ արտադրելու առնչությամբ պայմանավորվել ենք համապատասխան արտադրամասի ղեկավարի հետ, իսկ Մասիսի շրջխորհրդի նախագահ Կարլեն Միքայելյանն էլ հրահանգել է, որ այդ արտադրամասն ապահովվի շուրջօրյա էլեկտրամատակարարմամբ և պատրաստակամություն հայտնել նաև աջակցելու արտադրությանը վերաբերող այլ հարցերում:

Մոնթեն շարունակեց Մանուկի խոսքը.

- Աշտարակի տղաներին Մանուկը ինձ ծանոթացրել է, նրանք բավականաչափ փորձ ունեն: Ինձ ասացին, որ եթե լինեն խողովակներն ու մնացյալ պարագաները, կլինի նաև զենքը:

Հետո խոսեցինք այլ բաների մասին: Մոնթեն անկաշկանդ էր իր պահվածքով, բայց հիմնականում լսում էր, քան՝ խոսում:

Պարզեցի, որ «Տրուբսնաբ» միավորման պահեստում այդ տեսակի խողովակ կա, սակայն լավ կլիներ՝ մասնագետներն իրենք տեղում տեսնեին:

Մոնթեն անմիջապես միացավ խոսակցությանը.

- Է, շատ լավ է, այդպես էլ կանենք:

Մոնթեն իրեն շատ բավարարված զգաց, և մենք պայմանավորվեցինք, որ հաջորդ օրը ճաշից հետո ինձ զանգահարի:

Առանձնասենյակից դուրս գալու պահին Մանուկը Մոնթեին ասաց.

- Գիտե՞ս, Մոնթե, պ-ն Չախալյանը Ջավախքի ծնունդ է:

Մոնթեն հայացքը կենտրոնացրեց ինձ վրա, մեղմ ժպտաց և արտաբերեց.

- Է, շատ լավ է, որ Ջավախքից է,- և մի պահ դադար տալով,ասաց, - ես շատ կուզեմ տեսնիլ Ջավախքը…

Այսպես սկսվեց մեր ծանոթությունը և հետագա գործնական, ինչու չէ, նաև մտերմական հարաբերությունը:

Հերթական քայլ



Հաջորդ օրը Մանուկի ու նրա ընկերոջ Ռուբիկ Բաբայանի ուղեկցությամբ Ալեքսանդր Չալյանը «Տրուբսնաբի» պահեստում ուսումնասիրել և ընտրել էր անհրաժեշտ խողովակները:

Այդ մասին Մանուկից տեղեկանալուց հետո, իսկույն կազմակերպեցի խողովակների անհրաժեշտ խմբաքանակի համար վճարելու և հիմնարկ տեղափոխելու գործը:

Մեր պայմանավորված ժամին զանգահարեց Մոնթեն.

- Պարոն Չախալյա՞նն է, ինչպե՞ս եք:

- Լավ,- շարունակելով իմ խոսքը, ասացի նրան, -ապրանքներդ ձեռք ենք բերել, բեռնատարի վրա է:

Նա խնդրեց, որ մեքենան Մանուկն ուղեկցի, ով ճշգրիտ գիտեր, թե ուր պետք է տեղափոխվեր ապրանքը:

Մանուկի ուղեկցությամբ նույն օրը ապրանքի ամբողջ խմբաքանակը տեղափոխվեց Այնթապ գյուղի վարչական սահմանում գտնվող կողպեքների արտադրամաս, որտեղ պետք է իրականացվեր նռնականետների ու արկերի պատրաստման առաջին փուլը: Ապրանքի տեղափոխումից անցել էր ընդամենը միքանի օր, երբ Մոնթեն եկավ Մասիս: Նա Մանուկի և Սամվելի հետ նախ գնաց արտադրամաս: Ժամանակը վկայեց, որ Մոնթեն հետևողական էր ոչ միայն իր, այլև ընկերների հետ նախաձեռնած բոլոր գործերում ու գործողություններում, անձամբ վերահսկում կամ մասնակցում էր դրանց իրականացմանը:

Նշված արտադրամաս այցից հետո մենք հանդիպեցինք: Զրուցակիցներս ասացին, որ նռնականետների արտադրությունն արդեն սկսված է, և գոհ էին:

Մոնթեն ցանկացավ տեսնել Սաղաթելյանին.

- Անոր հետ խոսիլ կուզեմ:

Սակայն Մանուկն առարկեց, ասելով, որ Սաղաթելյանին տեսնելու համար պետք է գնանք Արտաշատ: Իսկ սահմանապահ ջոկատ մտնելու համար անձը հաստատող փաստաթուղթ է պետք, և ցանկալի չէ, որ նրա հետ այնտեղ հանդիպենք: Դեռ առաջին հանդիպման ժամանակ Սաղաթելյանը Մանուկին ասել էր, որ Մոնթեի մասին սահմանապահ ջոկատում տեղյակ են: Բայցևայնպես ուղևորվեցինք: Այնտեղի կապի հանգույցի տնօրեն Վիրաբ Վիրաբյանի աշխատասենյակում էլ հանդիպեցինք Սաղաթելյանի հետ:

Սաղաթելյանն իր բարձրաստիճան զինվորական ընկերոջ, իր արտահայտությամբ՝ Արտաշիչի հետ, որը ծառայում էր

Սիբիրի ռազմական կայազորներից մեկում, մեծաքանակ զինամթերք և 500 լրակազմ զինվորական հանդերձանք ձեռք բերելու և Հայաստան ուղարկելու պայմանավորվածություն էր կայացրել: Այդ մասին նա ամիջականորեն տեղեկացրեց մեզ:

Հանդիպումն ավարտված էր: Այն կարևոր էր…

Վերադարձանք Մասիս, այնտեղից էլ՝ Երևան: Արտաշատից նոր էինք դուրս եկել, երբ Մոնթեն ինքնաբուխ արտահայտվեց.

- Է, շատ զարմանալի ու շատ լավ մարդ է այդ Սաղաթելյանը:

- Գիտե՞ս Մոնթե,- նա Ջիվանու համագյուղացին է,- ասացի ես:

- Է, չգիտեմ, դեռ շատերու մասին չգիտեմ …

Ժամանակի թելադրանքով

Բավականին ժամանակ էր անցել: Մոնթեն հերթական անգամ եկել էր Մասիս: Նորից հանդիպեցինք: Մանուկը խնդրեց, որ իրենց մեքենա տրամադրեմ: Նա ասաց, որ Մոնթեն Էջմիածնի գյուղերից մեկում մի ընկերոջ հետ հանդիպելու պայմանավորվածություն ունի:

Մոնթեն նաև նախապատրաստական աշխատանք էր կատարում՝ թշնամու թիկունքում հետախուզություն իրականացնելու նպատակով: Իսկ դրա համար վստահելի և բանիմաց մարդիկ էին պետք, այնպիսիք, որ ապրել էին Ադրբեջանում և գերազանց տիրապետում էին այնտեղի թուրքերենին:

Բոլոր պատերազմների ժամանակ հակամարտող կողմերի ռազմավարությամբ նախատեսվում են նաև հետախուզա-

կան և հատուկ բնույթի (խափանարար, քայքայիչ և այլն) գործողություններ հակառակորդի թիկունքում: Նպատակը՝ հնարավորինս խաթարել տարբեր ենթակառույցների գործունեությունը, նվազեցնել թիկունքից թշնամու կենսական ու մարտական անհրաժեշտ միջոցների ապահովումը: Այս առումով բացառություն չէր լինելու նաև Արցախյան պատերազմը: Այս կապակցությամբ Մոնթեին նրա երևանյան ընկերներից մեկը խորհուրդ էր տվել հանդիպել Բաքվից տեղահանված մի երիտասարդ փախստականի հետ:

Փախստականն արդեն հանդիպման մասին տեղեկացված էր: Սակայն նա չգիտեր՝ ով է իր հետ հանդիպման գալու:

Որոշ ժամանակ անց Մոնթեն տղաների հետ ուղևորվեց Էջմիածին:

Նրա հանդիպումն այդ երիտասարդի հետ տեղի ունեցավ:

Երիտասարդ փախստականի հետ հանդիպման ժամանակ Մոնթեն ինչ անունով էր ներկայացել, ինչ էր խոսել և ինչ պայմանավորվել, այդպես էլ ոչ ոք չիմացավ:

Արդեն օրվա երկրորդ կեսն էր, երբ նրանք վերադարձան Էջմիածնից: Նորից հանդիպեցինք: Մոնթեն ուզում էր Երևան վերադառնալ:

- Միասին կգնանք,- ասացի ես:

- Է, լավ է,- պատասխանեց Մոնթեն:

Երևան վերադառնալու ճանապարհին վարորդին հուշեցի՝ Խարբերդի հեռախոսակայան:

Երբ Մոնթեն լսեց Խարբերդ անվանումը, մի քիչ զարմացած ասաց՝ ի՞նչ Խարբերդ:

Ես նրան հայտնեցի՝ քաղաքատիպ ավան է Մասիսի շրջանում և ճիշտ անունը Նոր Խարբերդ է: Կարճ մենք ասում ենք

Խարբերդ, իսկ նրա բնակիչները Արևմտյան Հայաստանի Խարբերդից են, որոնք տարբեր կերպ հասել են Հայաստան և հիմնել նոր բնակատեղի: Հայաստանում մենք ունենք արևմտահայ գրեթե բոլոր կորսված տեղանունները՝ Նոր Եդեսիա, Նոր Զեյթուն, Նոր Արաբկիր, Նոր Կյուրին…

Քիչ անց, հային բնորոշ հարցադրումով դիմեցի նրան.

- Մոնթե, իսկ քո նախնիները որտեղացի՞ են:

Պատասխանեց շատ հանգիստ.

- Հայրական կողմս՝ Խարբերդից:

Մենք այլևս այդ տեղանվանը չանդրադարձանք. հասկացա խոսակցության սկզբին նրա ցուցաբերած հետաքրքրությունը նախնյաց ծննդավայրի անունը լսելիս: Երևանի ճանապարհին երկուսս էլ լուռ էինք, սակայն Մոնթեն մեքենայի պատուհանից կլանված դիտում էր իրար հաջորդող Խարբերդի առանձնատները և ի՞նչ էր խորհում՝ ինքը գիտեր…

Հայացք Արարատին

Մայիսի վերջն էր, թե հունիսի սկիզբը՝ լավ չեմ հիշում, զանգահարեց Մանուկը, ասաց, որ Մոնթեն Մասիսում է և հանդիպելու է Միքայելյանին, որից հետո երկուսով ուզում են հանդիպել ինձ հետ:

Միքայելյանի հետ հանդիպելուց հետո Մոնթեի անձնագրի հարցով նրանք գնացել էին Մասիսի անձնագրային բաժնի պետի մոտ: Պետը՝ Վարդան Վարդանյանը, նրանց խոստացել էր օգնել այդ հարցում և միաժամանակ հավելել, որ առաջին անգամն է լսել այդպիսի անուն: Նա միայն խնդրել էր, որ

Մոնթեն ներկայացնի երկու լուսանկար, ցանկալի է սափրված վիճակում:

Իսկ Մոնթեն ասել է.

- Է՛, հա՞րկ է, որ սափրվիմ:

Ընկալելով Վարդանյանի ակնարկը և Մոնթեի տարակուսանքը, Մանուկը կատակով ասել է.

-Մոնթե, համ պիտի սափրվես, համ էլ քո անունը մոռացիր, այսուհետ դու հայկական անուն պիտի կրես, ժամանակ ունես՝ ինքդ կորոշես:

Անձնագրային բաժնից դուրս գալով նրանք գնացին լուսանկարվելու:

Թեև անձնագրային սեղանի պետը փորձեց անձնագրի հարցում աջակցել Մոնթեին, սակայն ինչ-ինչ պատճառներով չկարողացավ:

Մոտ մեկ ժամ հետո նրանք եկան:

Մոնթեն ժպտալով՝ դիմեց ինձ.

- Ինչպե՞ս եք:

-Լավ եմ,- պատասխանեցի նրան և ձեռքսեղմումից հետո առաջարկեցի նստել:

- Ո՞նց են գործերը, Մոնթե՛:

- Է, շատ լավ է:

Մանուկը միջամտեց և նայելով Մոնթեին՝ ժպտադեմ արտաբերեց.

- Մոնթե, համ կուզես Հայաստանի անձնագիր ունենալ, համ էլ չես ուզում սափրվել:

Մանուկի խոսքից հետո նրանք լիաթոք ծիծաղեցին:

Երբ նրանք հանդարտվեցին, Մանուկն ինձ պատմեց ամբողջ եղելությունը, նաև հայտնեց իրենց գալու նպատակը.

-Մոնթեն ուզում է ձեռք բերել «Վիլիս» մակնիշի ավտոմեքենա:

Շարունակելով իր խոսքը, նա ավելացրեց.

-Գործկոմի աշխատողներից մեկը իրենց ասել է, որ մի շինարարական կազմակերպություն ունի այդ մակնիշի ավտոմեքենա: Կազմակերպությունը Մարմարաշեն գյուղում է, տնօրենը Նասլեթ Ղազազյանն է:

Ես լավ էի ճանաչում նրան: Մենք որոշեցինք միասին գնալ Մարմարաշեն և հանդիպել Ղազազյանին:

Ղազազյանը տեղում չէր: Քարտուղարուհին մեզ ասաց, որ նա կգա մեկ ժամ հետո:

Մենք որոշեցինք գալ մեկ ժամ հետո և դուրս եկանք:

Քանի որ օրը շատ շոգ էր, Մոնթեին ու Մանուկին առաջարկեցի ժամանակ չկորցնել և գնալ «Պտղաբուծական» պետտնտեսության (այժմ գ. Նոր Կյուրին) գրասենյակի դիմացի ցայտաղբյուրից Գառնիի սառնորակ ջուր խմելու: Մեքենայով մեկ-երկու բոպեի ճանապարհ էր:

Խմեցինք Գառնիի ջրից և նստեցինք ցայտաղբյուրից ոչ հեռու ծառի տակ տեղադրված նստարանին: Մանուկը հետաքրքրվեց, թե ես որտեղից գիտեմ այս ցայտաղբյուրի տեղը: Ես նրան հիշեցրի Նոր Կյուրին գյուղում իմ տնամերձ հողամաս ստանալու մասին: Նա հիշեց, որ իրեն էլ էի առաջարկել: Հիշեց և անմիջապես առաջարկեց գնալ ու տեսնել տեղանքը: Այդպես էլ արեցինք: Այդ տեղանքին հարակից փռված էր մի գեղեցիկ անտառակ, դիմացն իր վեհությամբ երևում էր Արարատը, իսկ աջ կողմից՝ ամպերով պսակված Արագածը:

Մանուկը դիմեց ինձ.

- Հնարավո՞ր է հիմա այս տարածքից տնամերձ հողամաս ստանալ (այդ օրերին ամբողջ Հայաստանում տնամերձ հողամասեր էին բաժանում):

Ես պատասխանեցի.

- Ինչո՞ւ չէ, հնարավոր է:

Հասկացա, որ Մանուկին այս տեղանքը դուր է եկել:

Շարունակելով իր խոսքը, Մանուկը դիմեց Մոնթեին և ասաց.

- Մոնթե, համաձա՞յն ես այս տարածքում սեփական հողամաս ունենալ, օրինակ ես դեմ չէի լինի, Երևանից էլ հեռու չէ: Մոնթեն մեղմ ժպտալով, հայացքն Արարատից չկտրելով, առանց շտապելու անկեղծ պատասխանեց.

- Է՛, տեղը կհավնիմ, շատ կհավնիմ, բայց հիմա ժամանակը չէ, հետագային:

Այսպիսի առաջարկ Մոնթեին և Մարտիրոս Ժամկոչյանին արվել էր նաև Մուսալեռում, որի մասին տարիներ անց իմացանք անձամբ Մարտիրոսից: Մեկ այլ անգամ Մոնթեն, Քարվաճառի ազատագրումից հետո, Վարդան Ավետիսյանի (այժմ՝ ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական, գեներալ-մայոր) մոտ ինքնաբուխ արտահայտվել է բնության գեղեցկությամբ հիանալիս. «Է, Վարդան, պատերազմից հետո Սեդային հետ պիտի գամ և այստեղ ապրիմ…»

Այլևս ասելու բան չկար: Երկուսս էլ՝ թե՛ Մանուկը, և թե՛ ես հասկացանք, որ այդ պահին Ղարաբաղից բացի Մոնթեին այլ բան չէր հետաքրքրում:

Քիչ անց երեքով Ղազազյանի հիմնարկում էինք: Նա իր աշխատասենյակում մեզ էր սպասում: Ես նրան ներկայացրի

Մոնթեին ու Մանուկին և ասացի մեր գալու նպատակը: Լինելով անմիջական անձնավորություն, առանց երկմտելու ասաց, որ ընդամենը մեկ շաբաթ առաջ հիմնարկի միակ «Վիլիսը» տրամադրվել է ՀԱԲ-ի ջոկատներից մեկին:

- Է՛, լավ է, -ասաց Մոնթեն:

Մեզ այլ բան չէր մնում, քան նստել ավտոմեքենան և վերադառնալ Մասիս, այնտեղից էլ՝ Երևան:

Հարսանիք

1991 թվականի օգոստոսի 3-ին տեղի ունեցավ Մոնթեի և Սեդայի հարսանիքը: Առավոտյան ժամը 12-ին Վահրամի բաց թափքով «Վիլիսը» հարս ու փեսային իրենց հանրակացարանի մոտից (Երևանի Մաշտոցի պողոտա) պետք է հասցներ Գեղարդի եկեղեցի, որտեղ պետք է կայանար նրանց պսակադրությունը:

Ժամը արդեն 12-ն էր, ուր որ է Մոնթեն պետք է գար: Նա գնացել էր Պաշպանության պետական կոմիտե: Անցավ որոշ ժամանակ, նա դեռ չկար: Սեդան որոշեց, որ պետք է շարժվել, քանի որ Մոնթեն Պաշտպանության կոմիտե էր գնացել շատ կարևոր հարցով, կարող էր ուշանալ:

- Նրան կհանդիպենք ճանապարհին կամ էլ կսպասենք Գեղարդում:

Այդպես էլ արվեց: Սեդան առաջինը նստեց Վահրամի մեքենան, հարմար տեղավորվեց իր և Մոնթեի համար նախատեսված հետին նստարանին: Վարորդի կողքին Սեդայի հայրն էր, իսկ մեքենայի հետնամասում, դեմ առ դեմ նստարաններին՝ Մանուկը և ես: Իսկ իմ ծառայողական մեքենայում տեղավորվեցին երկու երիտասարդ հարսանքավոր, որոնք խոսում էին արևմտահայերեն՝ ինձ հարազատ Կարնո բարբառով… Վահրամի մեքենան շարժվեց դեպի Գեղարդ: Նրանց հետևեցին հարսանյաց հանդեսի մասնակիցները՝ իրենց մեքենաներով:

Գեղարդի ճանապարհին, երբ հասել էինք Չարենցի կամար, որոշեցինք կանգ առնել: Բոլորն իջան մեքենաներից և

բարձրացան կամարի հարթակ: Որոշ ժամանակ մնացինք այնտեղ և վայելեցինք Արարատյան դաշտի, Սիս ու Մասիսի արբեցուցիչ գեղեցկությունը: Սակայն Մոնթեն դեռ չկար:

Շարունակելով ճանապարհը՝ հասանք Գեղարդ: Քիչ անց տեղ հասավ նաև Մոնթեն:

Պսակադրությունը կատարվեց ամբողջ արարողակարգով:

Հարսանիքը տեղի ունեցավ Գառնի գյուղի ռեստորանում: Կենացները, երաժշտությունը, երգն ու պարը անընդհատ հաջորդում էին իրար: Երիտասարդ հարսանքավորները «Ծափպար/Յարխուշտա» էլ պարեցին: Իրենց մարտական ոգին բարձրացնելու համար կռվից առաջ այն պարում էին հայ ֆիդայիները:

Իմ ուշադրությունից չվրիպեց մի հետաքրքիր երևույթ: Հարսանիքում մեկընդմեջ հնչում էին Արևմտյան Հայաստանի, Արարատյան, Արցախի և Պարսկահայ բարբառները:

Կողքիս նստած Մանուկին հարցրի.

- Ինչ որ բան նկատո՞ւմ ես, ի՞նչն է առանձնահատուկ այս հարսանիքում:

Իր պատկերացմամբ՝ Սեդայի հեզաճկուն և Մոնթեի զինվորականի պես ձգված պարը:

Տարբեր ընկալումներ, սակայն կար մի այլ վիճակ, որը չէր վրիպել ոչ իմ և ոչ էլ Մանուկի ուշադրությունից: Թե՛ եկեղեցում, և՛ թե հարսանյաց սրահում Մոնթեն կարծես երկակի լիներ. մեկը փեսացու Մոնթեն էր՝ Սեդայի նկատմամբ անսահման ուշադրությամբ, սիրով և հոգատարությամբ լցված, մյուսն՝ այն Մոնթեն, ով կարծես այլ միջավայրում էր, միջավայր, որտեղ որոշումներ էին կայացնում և քայլեր կատարում հանուն Արցախ աշխարհի, միջավայր, որտեղ օրուգիշեր ծավալուն պատերազմի էին պատրաստվում…

Ելույթ ռադիոցանցով

1991թ. սեպտեմբերի 12-ին Մոնթեն առաջին անգամ եղավ Ղարաբաղում: Նա «Իրադարձություն» (L՝Evenement) ֆրանսիական պարբերականի թղթակցին՝ Մարիամ Գոմին, որպես թարգմանիչ ուղեկցեց Շահումյանի շրջան: Առանց երկմտելու, Մոնթեն ազատամարտիկի կարգավիճակով մասնակցեց Շահումյանի Բուզլուխ, Էրքեջ, Կարաչինար գյուղերի պաշտպանական մարտերին: Սեպտեմբերի 20-ին Գոմի հետ վերադարձավ Երևան: Այդ ընթացքում եղավ նաև Մասիսում: Մասիս գալու նպատակը Արցախյան ազատամարտին մասնակցելու համար շրջանից հնարավորինս շատ կամավորականներ հավաքագրելն էր: Մանուկի հետ եկան կապի հանգույց:

Մոնթեն ռադիոհաղորդման ցանցով Մասիսի շրջանի բնակչությանը ուղղված կոչով հանդես գալու մտադրություն ուներ: Այն իրականացվեց իմ առանձնասենյակից:

Խոսում էր շատ հանդարտ, պարզ և ընկալելի արտահայտելով մտքերը: Սկզբում ներկայացրեց Ղարաբաղի իրադրությունը, պատմեց անձնակազմի թվաքանակով և զինվածությամբ մեզ շատ անգամ գերազանցող թշնամու դեմ հայ տղաների մղած սխրալի կռիվների մասին: Նա շեշտեց, որ մեզ այսօր ավելի շատ կռվողներ են պետք և շատ կարևոր է, որ նրանք լինեն կամավորականներ, ինչքան շատ լինեն, այնքան շուտ կվերջացնենք կռիվը:

- Հարկավոր է, որ մեր թիկունքն ամուր ըլլա, ինչքան ամուր ըլլա, այնքան մենք ռազմաճակատում ուժեղ կըլլանք և ավելի լավ կկռվինք: Հարկ է, որ ամեն մարդ իր գիտցած գործը լավ ընե, հարկ է, որ կռվողը կռվի, բանվորը իր բանվորությունն ընե, հողագործն իր հողը մշակե, բժիշկը հիվանդներին բուժե… Դժվար պիտի ըլլա, վատ պայմաններու մեջ պիտի ապրինք, վատ պիտի սնվինք, սակայն, անկախ բոլոր դժվարություններե, մենք պետք է հաղթենք,- ասաց Մոնթեն ելույթի ընթացքում: Նա հատուկ նշեց՝ Մեզ նպաստավոր պատմական պահ է տրված և պետք է օգտվինք դրանից, անպայման ազատագրենք ոչ միայն Արցախը…: Հիշեք, որ պատմությունը այսպիսի նպաստավոր պահ մոտակա տասնամյակներում կարող է մեզ այլևս չտալ: Արցախի ազատագրումը շատ-շատ կարևոր է: Մեր հետագա հաջողությունները և անվտանգությունը պայմանավորված են նրա ազատագրումով:

Նա նույն միտքը նորից կրկնեց և վերջացրեց իր ելույթը:

Նրա համար պատմական այս պահին, ճիշտը մեկն էր.

-Պիտի կռվիլ, լավ կռվիլ, հաղթել ու՝ վերջ…

Մոնթեին իր կազմավորած, «Հայրենասիրական» ջոկատի անձնակազմի թվաքանակը չէր բավարարում: Մանուկի ուղեկցությամբ նա նաև հանդիպումներ ունեցավ շատ մասիսցիների հետ: Այդ օրը նրա ջոկատը համալրվեց Մանուկ Հովհաննիսյանի ազգականներից հայրենասեր երեք կամավորականով՝ Աբրահամ Հովսեփյան, Հրայր Կարապետյան և Լևոն Միքայելյան, նրանք էլ Մանուկի պես թուրքի յաթաղանից փրկված սերունդների զավակներ էին: Համալրված ջոկատով Մոնթեն մեկնեց Մարտակերտ: Վազգեն Սարգսյանի և Մոնթեի պնդմամբ՝ Մանուկը մնաց Հայաստանում ականանետների արտադրման աշխատանքները ավարտին հասցնելու և այլ աշխատանքներ իրականացնելու համար:

Փորձարկում

1991թ. դեկտեմբերի կեսին Մոնթեն Ղարաբաղից Երևան էր վերադարձել: Նա անմիջապես գնացել էր Պաշտպանության նախարարություն: Իր գործերը ավարտելուց հետո, այնտեղից զանգահարեց ինձ.

- Պարոն Չախալյա՞նն է, ինչպե՞ս ես:

- Լավ եմ, իսկ դու՞ ինչպես ես:

- Է, լավ եմ, - պատասխանեց Մոնթեն և շարունակեց, - վաղը առավոտյան քեզ հետ կուզեմ Մասիս գալ:

- Շատ լավ ասացի նրան և պայմանավորվեցինք հանդիպել առավոտյան ութն անց կեսին:

Մյուս օրը պայմանավորված ժամին շարժվեցինք Մասիս: Մանուկն արդեն սպասում էր նրան: Այդ օրը նրանք փորձարկելու էին նռնականետի առաջին նմուշը: Չնայած Մանուկի առաջարկին, չկարողացա մասնակցել նռնականետի փորձարկմանը: Առաջին նմուշի փորձարկումը իրականացվել է Սիս գյուղի մերձակայքում:

Փորձարկումը պետք է անմիջապես իրականացներ Մանուկը, մյուս մասնակիցները՝ Ալեքսանդր Չալյանը, Ռուբիկ Բաբայանը և Մոնթեն պետք է հեռվում կանգնեին: Սակայն Մոնթեն հրաժարվում է և Մանուկի մոտից չի հեռանում, չնայած նրա պնդմանը: Ամեն ինչ անցել էր բարեհաջող: Մոնթեն նկատել էր, որ նռնակի հզորությունն ավելացնելու կարիք կա: Տղաներն այդ հանգամանքը, բնականաբար, նկատառում են: Թեպետ նռնականետի ու նռնակի նմուշի պատրաստման համար տևական ժամանակ պահանջվեց, սակայն կարևորն այն էր, որ նրանք կարողացել էին այն իրականացնել: Կար ևս մի հանգամանք. Մանուկին և Սամվելին այդ ժամանակամիջոցում հաջողվել էր հայթայթել բավականաչափ անհրաժեշտ լրացուցիչ նյութեր, ինչը և հնարավորություն էր տվել արդեն արագացված կարգով որոշակի քանակի նռնականետներ և մեծաթիվ նռնակներ պատրաստել:

Նույն օրը նրանք գնացին Մասիսի «Նավթաբազա» և այնտեղ փորձարկեցին Մոնթեի հորդորով Սփյուռքից ուղարկված արբալետները (աղեղնազեն): Նա այդ զենքի նշանա-

կությունը հետախուզական գործողությունների ժամանակ կիրառելու համար շատ էր կարևորում:

1992 թվականի մարտին ականանետների առաջին խմբաքանակը պատրաստ էր: Ալեքսանդր Չալյանը, Ռուբիկ Բաբայանը և Մանուկ Հովհաննիսյանը դրանք տեղափոխեցին սահմանամերձ Խնձորուտ և Բարձրունի գյուղեր ու հանձնեցին ջոկատներին՝ տեղում ևս մեկ անգամ փորձարկելուց հետո: Ականանետներ ուղարկվեցին նաև Կապանի ջոկատներին:

Պայմանավորվածություն

1992 թվականի հունվարի կեսն էր, մեր նախնական պայմանավորվածության համաձայն, վաղ առավոտյան Երևանից Մոնթեի հետ շարժվեցինք Մասիս: Տեղ հասնելով, ես անցա իմ աշխատանքին, իսկ Մոնթեն ու Մանուկը գնացին Մարմարաշեն: Մոնթեն Մարմարաշեն գյուղում ծանոթացավ գյուղի երկրապահ ջոկատներից մեկի («Հայդուկ» անվանումով) հրամանատար՝ Հովիկ Հայրապետյանի հետ:

Հովիկն իր ջոկատով արդեն հասցրել էր մասնակցել Երասխավանի ու Տավուշի Մովսես գյուղի ինքնապաշտպանական կռիվներին:

Մոնթեի հանդիպումը Հովիկի հետ կայացավ նրանց տանը, որտեղ ներկա էին նաև նրա ջոկատի տղաները: Այդ հանդիպումը կարևորվեց նրանով, որ Մոնթեի խոսքերից հետո տղաների համար շատ բան նորովի իմաստավորվեց: Մոնթեն իր անկեղծությամբ և երեխայի պարզությամբ շրջապատի մարդկանց վրա այնպիսի ազդեցություն էր թողնում, որ նրանք ակամա դառնում էին նրա համախոհները:

Հանդիպումից մեկ ժամ անց միացա նրանց:

Նա գոհ էր այդ հանդիպումից: Հիշեցի ռադիոելույթի ժամանակ նրա արտահայտած խոսքերը. «Ինչքան շատ զինվոր ունենանք, այնքան շուտ կավարտենք կռիվը»: Մոնթեն և Հովիկը քննարկել էին կազմակերպչական մի շարք հարցեր Արցախի պաշտպանական ուժերի շարքերում Մարմարաշենի «Հայդուկ» ջոկատի հնարավոր մասնակցության վերաբերյալ:

Այդ հանդիպմանը ներկա էր նաև գյուղխորհրդի նախագահ Էդվարդ Հակոբյանը:

Երբ Մոնթեն ու Հովիկը քննարկել էին բոլոր հարցերը, դիմեցի Հակոբյանին և խնդրեցի, որ նա ինձ ուղարկի գյուղի կամավորական ջոկատների շարքերում կռվող այն ազատամարտիկների անուն-ազգանունները, ովքեր իրենց տներում հեռախոս չունեին:

Մոնթեն նայեց իմ կողմը և ասաց.

- Է, պարոն Չախալյան, լավ բան մը մտածեր ես…

Այդ օրը գյուղում հարսանիք կար: Այն ջոկատի հրամանատար Հովիկ Հայրապետյանի հարևանի տանն էր: Հարսանքատերը անձամբ եկավ և խնդրեց մասնակցել հարսանեական արարողությանը: Մենք չմերժեցինք: Աշխույժ ու ուրախ հարսանիք էր: Մի պահ Մոնթեն լարվեց, երբ տեսավ

1907թ. զոհված Գևորգ Չաուշի հիշատակին հնչող երգի մեղեդու ներքո պարող երիտասարդ հարսանքավորներին:

- Սա երգի տակ ինչո՞ւ կպարեն,- զարմանքով արտահայտվեց Մոնթեն, իսկ նրանք պարում էին…

Որոշ ժամանակ անց շնորհակալություն հայտնեցինք տանտիրոջը և դուրս եկանք հարսանքատնից և ուղևորվեցինք Երևան: Տեղ հասանք, Մոնթեն մեքենայից իջավ Մաշտոցի պողոտայում՝ Երևանի պետհամալսարանի հանրակացարանի մոտ: Իսկ մենք շարունակեցինք մեր ճանապարհը:

Նշանակում

Պատերազմը թափ էր առել: Դրա ամենագործուն մասնակիցներից Արկադի Տեր-Թադևոսյանը արդեն ինչ որ առումով ծանոթ էր Մոնթեի մարտական ինքնադրսևորմանը՝ Շահումյանի շրջանի Բուզլուխ, Մանաշիդ և Էրքեջ գյուղերի պաշտպանական մարտերում:

Նրա խնդրանքով էլ Պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը 1992թ. փետրվարի սկզբին Մոնթեին նշանակեց սկզբում Մարտունու պաշտպանական շրջանի շտաբի պետ, ապա՝ որոշ ժամանակ անց, նախօրոք ունենալով Ինքնապաշտպանության պետկոմի (ԻՊԿ) նախագահ Սերժ Սարգսյանի կարծիքը՝ նույն պաշտպանական շրջանի հրամանատար:

Երբ Մոնթեն իր ջոկատով պատրաստվում էր ուղղաթիռով մեկնել Հյուսիսային Արցախ, իր համար դեռևս անսպասելի, թռիչքից առաջ Վազգեն Սարգսյանը հեռախոսազանգով նրան տեղեկացնում է նոր որոշման մասին, այն է՝ Մոնթեն պետք է ստանձներ Մարտունու ճակատի շտաբի պետի պաշտոնը: Հիմնավորելով, որ այնտեղ իրավիճակը ծայրագույն ծանր է, անհրաժեշտ է, որ Մարտունու ճակատը համալրվի նոր ուժերով:

Նշանակումն անսպասելի էր, և Մոնթեն մեկնում է Մարտունի: Նա այդ օրը վերջնականապես ընտրում է իր անունը՝ Ավո:

Ժամանակը հաստատեց, որ այդ նշանակումը պատմականորեն կարևոր դերակատարում ունեցավ Արցախյան ազատամարտում:

«Հայդուկ» կամավորական ջոկատը

Մարտունու ՊՇ-ի շտաբի պետի պաշտոնն ստանձնելուց հետո Մոնթեն զանգահարել էր Մասիս և հիշեցրել Մանուկ Հովհաննիսյանին հունվարին Մարմարաշենի ջոկատի հրամանատար Հովիկ Հայրապետյանի հետ իրենց պայմանավորվածության մասին:

Մանուկը Մարմարաշենում հանդիպում է «Հայդուկ» ջոկատի հրամանատար Հովիկ Հայրապետյանին ու նրան տեղեկացնում Մոնթեի զանգահարելու մասին: Հովիկն անմիջապես հանդիպում է իր ջոկատի տղաներին, հիշեցնում հունվարին Մոնթեի հետ իր պայմանավորվածությունը: Ի վերջո, որոշվում է, որ հրամանատարը մեկնի Ղարաբաղ՝ հանդիպելու Մոնթեի հետ, իրենց հետագա քայլերը ճշտելու նպատակով: Ջոկատը դեռևս ապահովված չէր զենք-զինամթերքով, եթե հաշվի չառնվեն, իհարկե, որսորդական հրացաններն ու ինքնաշեն զենքերը և 1-2 «-Կալաշնիկով» ավտոմատները:

1992թ. մարտի սկզբին «Հայդուկ» ջոկատի հրամանատարը Կամո (Գավառ) քաղաքից ուղղաթիռով հասնում է Մարտակերտի շրջան, այնտեղից մեկնում Մարտունի և հանդիպում Մոնթեին: Այդ օրը Մոնթեի կինը՝ Սեդան, Հովիկի հետ Մոնթեին է ուղարկում մի քանի զրահաբաճկոն՝ իր և զինակիցների համար:

Մոնթեն Հովիկին ծանոթացնում է Մարտունու պաշտպանական իրավիճակին: Որոշվում է «Հայդուկ» ջոկատի հետագա տեղաբաշխման վայրը: Քննարկվում են՝ զենք-զինամթերքի, դիզվառելիքի, կարգապահական խնդիրներ ու բնակչության ինքնապաշտպանական ոգին բարձրացնելու և տարաբնույթ այլ հարցեր:

Օրեր անց Մարտունի է ժամանում Վազգեն Սարգսյանը: Շտաբում արդեն հավաքվել էին շրջանի ինքնապաշտպանության ջոկատների հրամանատարները: Վազգեն Սարգսյանը նախ ծանոթանում է բոլոր հրամանատարների հետ, այնուհետև ներկայացնում է պաշտպանական շրջանի նորանշանակ հրամանատարին՝ Մոնթեին և նշում, որ « Նա եկել է իր նախնիների կանչով՝ հայրենիքը պաշտպանելու: Վստահեք նրան. նա ամբողջ գիտակցական կյանքում պայքարել է հանուն հայ ազգի իրավունքների վերականգնման»: Այնուհետև Սարգսյանը կոչով դիմում է ներկաներին. «Մենք դատապարտված ենք հաղթելու թշնամուն, վստահ եղեք՝ հաղթելու ենք, և խնդրում եմ իմ խոսքերը հասցնել բոլորին: Ականջալուր եղեք, մեր ազգը բռունցքված է քան երբևէ՝ լավ է լինելու, պինդ կացեք»: Այնուհետ թփթփացնելով մոտ կանգնած մարմարաշենցի Հովիկի ուսին, պայծառ ժպիտը դեմքին, շրջվելով դեպի Մոնթեն ասում է. «Լավ եմ ճանաչում այս երիտասարդին: Այսպիսի տղերքին պետք է շանս տալ, և նրանք ամեն ինչ կանեն հանուն Արցախի, հանուն հայության»: Վազգեն Սարգսյանը նույն օրը վերադառնում է Ստեփանակերտ, այնտեղից՝ Երևան:

Հաջորդ օրը Մոնթեն Հովիկին նշանակում է իր ներկայացուցիչը Ճարտարում: Ճարտարը մեծ գյուղ է, այնտեղ կային պաշտպանական երկու ջոկատ, մեկը գյունեյ (արևահայաց)

Ճարտարում, իսկ մյուսը ղուզեյ (ծմակ) Ճարտարում՝ մեր զրույցի ժամանակ պատմեց Հովիկ Հայրապետյանը: Հովիկը կարողանում է կարճ ժամանակում վերացնել փոխհամագործակցությանն առնչվող նրանց տարաձայնությունները: Ի պատիվ Ճարտարի տղաների, սուղ պայմաններում Հովիկին հատկացվում է զենք (այն դեպքում երբ իրենց հրազենն էլ քիչ էր): Իսկ բնակչության մասին խոսք չկար, նա առանձնահատուկ վերաբերմունք ուներ «դրսից» եկած ազատամարտիկների հանդեպ:

Ապրիլի սկզբին Ճարտարի ջոկատներին հատկացված դիզվառելիքը, որ ստանում էին բեռնատար ավտոմեքենաների համար՝ դիրքապահների հերթափոխն իրականացնելու նպատակով, լրիվ ծախսվում է: Հովիկ Հայրապետյանը ոտքով գնում է Մարտունի, հանդիպում Մոնթեին: Բարևելուց հետո դիմում է նրան և ասում. «Ճարտարի ջոկատների դիզվառելիքը լրիվ վերջացել է, պետք է այնտեղ վառելիք հասցնել»:

- Է, վառելիք չունինք, ուրկի՞ց հասցնենք, կսպասենք մեկ-երկու օրից Ստեփանակերտից պետք է ուղարկեն :

- Պահուստայի՞ն էլ չկա,- չի համակեպվում Հովիկը:

Մոնթեն ձեռքը մտցնում է իր աշխատասեղանի տակ և ոտքերի կողքը տրված 5 լիտրանոց ժավելի ամանում լցված դիզվառելիքը դնում է սեղանին:

- Իմ պահուստային վառելիքն այսքան է,- ասում է նա:

Հովիկն անխոս վերադառնում է Ճարտար: Սակայն նրան հուշել էին, որ բեռնատարները կարող են աշխատել նաև էլեկտրական ենթակայանների տրանսֆորմատորային յուղով: Այդպիսի փորձ եղել է: Ճարտարի ենթակայանների տրանսֆորմատորային յուղն արդեն օգտագործել էին այդ նպատակով: Սակայն Ալիբեյլիի տարածքում գործող բարձր էլեկտրալարման ենթակայանի տրանսֆորմատորների յուղը, բարեբախտաբար, պահպանվել էր: Անհրաժեշտ էր այն դատարկել և տեղափոխել: Ենթակայանը միջդիրքային տարածքում էր, քիչ ավելի մոտ մեր դիրքերին: Հովիկը և Ճարտարցի մի քանի տղա կարողանում են ամբողջ յուղը դուրս բերել և հասցնել մեր դիրք: Դրա մի մասը թողնում են Ճարտարում, մյուսն ուղարկում են Մարտունի: Խնդրի այդօրինակ լուծումը Մոնթեին առժամանակ գոհացնում է:

Ապրիլի 20-ին Մոնթեի հետ պաշտպանական իրավիճակը քննարկելուց հետո Հովիկ Հայրապետյանը վերադառնում է Մասիս՝ իր ջոկատը Մարտունի տանելու համար: Որոշ ժամանակ անց Վազգեն Սարգսյանի հանձնարարությամբ ջոկատին հատկացվում է «Կալաշնիկով» տեսակի 15 ավտոմատն մեկ նռնականետ՝ համապատասխան զինամթերքով հանդերձ: Հատկացվում է նաև զինվորական համազգեստի

լրակազմ: Միաժամանակ Մարտիրոս Ժամկոչյանն ու Սեդան ջոկատին տրամադրում են Սփյուռքից ուղարկված քնապարկեր ու հեռադիտակ:

1992 թ. մայիսի 10-ին Մարմարաշենի «Հայդուկ» կամավորական ջոկատի առաջին խումբը Հովիկ Հայրապետյանի հրամանատարությամբ Երևանի «Մերձակա և հատուկ ավիառուղիներ» ընկերության հատկացրած ուղղաթիռով վայրէջք է կատարում Ստեփանակերտի օդանավակայանում: Ամենուր ցնծություն էր՝ Շուշին ազատագրված էր: Երեկոյան ջոկատը հասնում է Մարտունի:

Նույն օրը Մոնթեն Մարմարաշենի ջոկատին ուղարկում է Ճարտար գյուղի սահմանային ինքնապաշտպանության ուժերը համալրելու:

1992թ. մայիսի վերջին ազատագրվում է նաև Լաչինի միջանցքը, հաստատվում ցամաքային կապ Արցախի ու Մայր Հայաստանի միջև:

1992թ. հունիսի 25-ին Հովիկը դիմում է Մոնթեին, որ ինքը վերադառնա Մասիս՝ նախապատրաստելու ջոկատի երկրորդ խմբին՝ առաջնադիրք գալու: Մոնթեի համաձայնությունն ստանալուց հետո նա վերադառնում է Մասիս: Այդ ժամանակ Մարմարաշենի «Հայդուկ» ջոկատի երկրորդ խումբն արդեն պատրաստ էր ռազմաճակատ մեկնելու: Անհրաժեշտ էր լուծել խմբի զենք-զինամթերքի և հանդերձանքի խնդիրը: Այդ նպատակով հունիսի 28-ի առավոտյան Հովիկը հանդիպում է Վազգեն Սարգսյանի հետ: Նախարարն արդեն տեղյակ էր, որ Մարտունու պաշտպանագծի ամբողջ երկայնքով թշնամու հարձակում է եղել: Նա հանձնարարում է Հովիկին անմիջապես վերադառնալ Մարտունի, զենք - զինամթերքն

ստանալ Արցախում: Նա վերադառնում է Երևանից այն ուղ-ղաթիռով, որը ալյուր ու զենք-զինամթերք էր տեղափոխում Ստեփանակերտ: Այդ օրը նա հանդիպում է ԼՂՀ ինքնա-պաշտպանության կոմիտեի նախագահ Սերժ Սարգսյանին և նրա լիազորումով ստանում է երկու արկղ «Կալաշնիկով» ավտոմատ ու մի քանի արկղ փամփուշտ, ուշ երեկոյան դրանք հասցնում է Ճարտար: Ջոկատի երկրորդ խումբը պետք է գար ազատագրված ճանապարհով՝ ավելի ուշ:

«Հայդուկ» կամավորական ջոկատի կազմը

1. Հայրապետյան Հովիկ, հրամանատար
2. Գևորգյան Պետրոս, փոխհրամանատար
3. Գևորգյան Մինաս
4. Արոյան Ղազար
5. Մանուկյան Սպարտակ
6. Դանոյան Գևորգ
7. Գրիգորյան Գառնիկ
8. Եմիշյան Գրիգոր
9. Հովհաննիսյան Միքայել
10. Գևորգյան Անդրանիկ (գ. Հովտաշատ)
11. Մարգսյան Լևոն (գ. Դարակերտ)
12. Գևորգյան Համլետ
13. Հայրապետյան Հայրապետ
14. Հանեյան Մուրադ
15. Մարգարյան Սերոբ
16. Միքայելյան Գառնիկ
17. Հակոբյան Արայիկ
18. Սաֆարյան Սամվել (գ. Միչյան)
19. Ահարոնյան Սամվել
20. Գևորգյան Տարոն (գ. Միչյան)
21. Խաչատրյան Գևորգ
22. Միրզոյան Հարութ (գ. Դարակերտ)
23. Ղազարյան Անդրանիկ (գ. Հովտաշատ)
24. Նազարյան Աշոտ
25. Հովսեփյան Աբրահամ
26. Դանոյան Վալերի

Թիկունքից Մարտունու ճակատ բեռներ տեղափոխող վարորդներ

1. Գևորգյան Անդրանիկ (գ. Մարմարաշեն)
2. Գևորգյան Ստյոպա (գ. Մարմարաշեն)
3. Հարությունյան Սամվել (գ. Մարմարաշեն)
4. Գևորգյան Մհեր (ք. Մասիս)

«Հայդուկ» ջոկատի երկրորդ խումբը Ղարաբաղ տեղափոխելու հարցով Մանուկը դիմեց ինձ: Այլ բան չէի կարող առաջարկել նրան, բացի թափքը բրեզենտով ծածկված «Ավիա» մակնիշի բեռնատար ավտոմեքենան: Ճիշտ է, ճանապարհը երկար ու անհարմար էր մարդկանց տեղափոխելու համար, սակայն պատերազմ էր… Մեքենան վարելու էր Միհերը: Նա փորձված վարորդ էր, ինչը շատ կարևոր էր տվյալ ուղևորության համար:

1992 թվականի հուլիսի կեսին ջոկատը մեկնեց Ղարաբաղ: Երկրորդ ջոկատը նույնպես ուղարկվեց Ճարտար գյուղի սահմանային ինքնապաշտպանության ուժերը համալրելու:

Հուլիսի վերջին Մոնթեն Հովիկ Հայրապետյանին մեկ ամիս ժամկետով նշանակեց Ճարտարի ջոկատների ընդհանուր հրամանատար:

1992 թվականի սեպտեմբերին կազմավորվեց Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի Մարտունու պաշտպանական շրջան (Մարտունու ՊՇ) ստորաբաժանումը: Մոնթեն անմիջապես Մարտունու շտաբի բակում կազմակերպեց Արցախի պաշտպանության բանակին ծառայելու զինվորական երդման արարողությունը: Հայոց կանոնավոր բանակի ստեղծմանը նա շատ էր սպասել: Նրա հիմնական նպատակներից մեկն իրականացված էր:

Նույն թվականի օգոստոս-սեպտեմբերին Մասիսի կապի հանգույցի մասնագետների ուժերով Մասիսից մինչև Մարմարաշեն անցկացվեց ևս մի մալուխ, և խոստմանս համաձայն՝ ազատամարտին մասնակցող ու հեռախոս չունեցող մարմարաշենցիների ընտանիքներն ապահովվեցին Մասիս քաղաքի հեռախոսահամարներով:

1992թ. հունիսի 28-ի ճակատամարտը

(«Հայդուկ» ջոկատի փոխհրամանատար Պետրոս Գևորգյանի պատմածից)

…Մարտունու պաշտպանագիծը ձգվում էր նույնանուն քաղաքից մինչև Կարմիր Շուկա բնակավայր: Հունիսի 28-ի վաղ առավոտյան, մինչև ատամները զինված թշնամին ճակատագծի ամբողջ երկարությամբ անցավ հարձակման: Ճարտար գյուղի պաշտպանական գծի երկու կիլոմետրը (գյուղից մոտ 6 կմ հեռու) պաշտպանում էին Ճարտար գյուղի, Մարմարաշենի «Հայ-

դուկ» կամավորական ջոկատի և նրան միացած երևանցի ազատամարտիկները՝ 41 հոգի: Այդ օրը Ճարտարի ջոկատի 27 տղաները, բաժանված 4 խմբի՝ Լեոնիկ Աղաբեկյանի, Բարմիկ Գաբրիելյանի, Սերժիկ Քամալյանի և Սեյրան Սարգսյանի հրամանատարությամբ և 14 հոգուց կազմված (7-ը Մարմարաշենից, 3-ը Ճարտարից և 4-ը Երևանից) «Հայդուկ» ջոկատը՝ Պետրոս Գևորգյանի հրամանատարությամբ (ջոկատի փոխհրամանատար) նախօրոք ստանալով Մոնթեի համապատասխան հանձնարարությունները՝ իրար տեսանելի հեռավորությամբ դիրքավորվել ու սպասում էին թշնամուն՝ արժանի հակահարված տալու համար:

Հակառակորդը հեռահար թնդանոթներից, և «ԳՐԱԴ» կայանքից սկսեց ռմբակոծել Ճարտար գյուղը: Այն ամբողջությամբ կորել էր փոշեամպի մեջ: Գյուղի դիրքերի ուղղությամբ շարժվում էին մոտ 18 տանկ և ՀՄՄ (ԲՄՊ), լավ զինված 1000-1500 ասկյար: Օդից նրանց աջակցում էին նաև թշնամու երկու ուղղաթիռ: Գյուղի ջոկատն ուներ ինքնաշեն մի թնդանոթ, որը սարքվել էր Մոնթեի մտահղացմամբ և մասնակցությամբ: Երբ թուրք ասկյարների հրամանատարությունը ցուցումներ էր տալիս խմբված ենթականերին, Ճարտարի ջոկատում հրաման հնչեց՝ ինքնաշեն թնդանոթից կրակել նրանց վրա: Արկը հասավ նշանակետին, թուրքերը, զոհեր տալով խուճապահար փախան աջ ու ձախ: Պետրոսը նկատելով, որ նրանք նորից են խմբվում, սակայն իրեն տեսանելի մեկ այլ տեղում, անմիջապես ձայն տվեց հրետանավոր Լեոնիկին, թնդանոթից անհապաղ նորից կրակել նրանց վրա: Երկրորդ արկն էլ ընկավ նշանակետին: Նորից խուճապ թուրքերի շարքերում: Լավ գիտենալով Ճարտարի ջոկատների թվաքանակը և սպառազինութ-

յան վիճակը, Մոնթեն նրանց օգնության ուղարկեց 4 ազատամարտիկի՝ շտաբի պետ Գարիկի գլխավորությամբ (Սոս գյուղից), և մեկ ՀՄՄ-1: Անհավասար մարտը քանի գնաց թեժացավ: Թուրքերը որոշ ժամանակ անց նորից անցան հարձակման: Մեր տղաների թիկունքից սկսել էր ակտիվորեն աշխատել հայկական հրետանին՝ Մովսես Հակոբյանի հրամանատարությամբ: Մեկ այլ վայրից աշխատում էին նաև Հոկտեմբերյանի հրետանավորները: Երբ հարձակվող թուրքերն անցել էին ցորենի արտի մի մասը և մոտենում էին հայկական դիրքերին, մեր հրետանու կրակոցներից ցորենի արտը նրանց թիկունքում սկսեց վառվել: Նրանք ավելի արագացրին հարձակումը: Սակայն հայկական հրետանու դիպուկ կրակից հրդեհ բռնկվեց նաև թուրքերի առջևում: Նրանք օղակվեցին կրակով: Ջոկատի տղաները ճիշտ էին դիրքավորված և իրենց դիպուկ կրակոցներով նոսրացրին ասկյարների շարքերը:

Թշնամին ելք չուներ թե՛ առաջ շարժվելու, և՛ թե ետ գնալու: Ցորենի արտի՝ մեր դիրքերից ձախ կողմում կրակը համեմատաբար թուլացել էր: Թուրքերն սկսեցին նահանջել այդ

ուղղությամբ: Մեր հրետանավորները և ջոկատի տղաները հեռու դիրքերից այդ ամենը լավ տեսնում էին ու հարվածի տակ պահում նրանց՝ չանտեսելով նաև մյուս ուղղությունները: Թշնամու տանկերն ու զրահամեքենաները ցորենի արտին հարող խաղողի այգու երկարությամբ անցնող ճանապարհով հարձակվել էին մեր դիրքերի վրա: Նրանց տանկերին ու զրահամեքենաներին այդպես էլ չհաջողվեց մտնել հայկական դիրքեր, չնայած անդադար կրակում էին, քանի որ, ի տարբերություն մեզ, մեծ զինապաշար ունեին: Մարտը տևեց մինչև ժամը 17-ն անց կեսը: Կրելով մարդկային և զինտեխնիկայի մեծ կորուստներ՝ թշնամին խուճապահար նահանջեց:

Մերոնք ունեցան 11 զոհ, իսկ թուրքերը բազմակի ավելի: Թշնամին կորցրեց 5 տանկ ու 1-2 ՀՄՄ:

Կռիվն ավարտված էր: Հոգնած տղաներին օգնության եկած Աշոտ Նավասարդյանի կազմավորած 40 հոգանոց և Մասիսի 30 հոգանոց ջոկատի տղաները զբաղեցրին Ճարտարի դիրքերը, իսկ կռվողները վերադարձան հանգստանալու:

Երեկոյան տեղ հասավ նաև «Հայդուկ» ջոկատի հրամանատար Հովիկ Հայրապետյանը (նա իր հետ բերել էր անհրաժեշտ քանակի զենք ու զինամթերք): Մարմարաշենցի տղաները՝ Պետրոս Գևորգյանը, Մինաս Գևորգյանը, Համլետ Գևորգյանը, Մուրադ Հանեյանը, Արայիկ Հակոբյանը, Սամվել Ահարոնյանը և Սամվել Սաֆարյանը, ովքեր քաջաբար մասնակցել էին այդ օրվա ճակատագրական կռվին, մոտեցան նրան և հարցուփորձ արեցին գյուղից: Հրամանատարը մի պահ հապաղեց, նա մի շատ կարևոր բան էր նկատել՝ տղաները հոգնած տեսք ունեին, սակայն նրանց աչքերի փայլը լրիվ փոխվել էր՝ փայլատակում էին: Իսկ նրանց կեցվածքում հաղթանակած զինվո-

րի հպարտության վառ արտահայտություն էր: Հայրապետյանի հայացքում ասես կարդացվում էր. «Այսպիսիներով է ազգը հաղթանակ կերտում՝ հանուն իր հարատևման»:

Հունիսի 28-ին Մարտունիի շրջանում հակառակորդն ընդհուպ մոտեցել էր Ճարտար և Մաճկալաշեն գյուղերի դիրքերին, գրեթե ներխուժել Կարմիր Շուկա: Հայ մարտիկները Մ. Մելքոնյանի ընդհանուր հրամանատարությամբ, քաջաբար կռվել և ետ են մղել հակառակորդին, ինչը մարել է ճակատագիծը գոնե մեկ ուղղությամբ ճեղքելու՝ հակառակորդի բուռն ցանկությունը: Անցել են տարիներ, Մարտունիում ամեն տարի մեծ շուքով նշում են հունիսի 28-ի ճակատամարտի օրը…:

Մասիսի շրջանի ջոկատները և Մոնթեն

1988 թվականից թե՛ Արցախում, և՛ թե Հայաստանում, մերձավոր ու հեռավոր Սփյուռքում բռունցքված հայությունը կազմավորեց հարյուրների հասնող կամավորական ջոկատներ՝ հայրենի հողը պաշտպանելու և ազատագրելու առաքելությամբ:

1991թ. ջոկատ էր կազմել նաև Մոնթե Մելքոնյանը, սակայն ինքն անձամբ այլ առաքելություն ուներ: Նա 1992թ. մարտին դարձավ ԼՂՀ Մարտունու ինքնապաշտպանական ուժերի հրամանատար և ելավ իր մեծ կռվին:

Մինչ այդ, 1990թ. մայիսի վերջին, Վ. Սարգսյանի հայտնի կոչից հետո, Մասիսի շրջանի երկրապահ ջոկատները՝ Նոր Խարբերդի (հրամանատար՝ Համլետ Կարապետյան, որոշ ժամանակ անց՝ Կարոեն Միքայելյան), Այնթապի (հրամանա-

տար՝ Հուսիկ Բաղդասարյան, որոշ ժամանակ անց՝ Շահեն Նազարյան), Մարմարաշենի «Հայդուկ» (հրամանատար՝ Հովիկ Հայրապետյան), Դարակերտի (հրամանատար՝ Վասիլ Խանաղյան), Արևաբույրի (հրամանատար՝ Թաթուլ Շահբազյան) համախմբվեցին և ստեղծեցին շրջանի երկրապահ ջոկատների միավորում, հրամանատար ընտրվեց Կառլեն Միքայելյանը, շտաբի պետ նշանակվեց Հուսիկ Բաղդասարյանը: Երբ Միքայելյանն ընտրվեց Մասիսի շրջանի գործկոմի նախագահ, նրան փոխարինեց Հովիկ Հայրապետյանը:

1991 թվականից Մոնթեն սկսեց հաճախակի այցելել Մասիս, որտեղ հանդիպումներ էր ունենում նաև այդ ջոկատների ազատամարտիկների հետ:

Հարկ է վերստին նշել, որ Մասիսի շրջանի երկրապահ միավորմանն անդամագրված Մարմարաշենի «Հայդուկ» ջոկատը 1992թ. մայիսից Արցախում էր: Ջոկատը համալրել էր Մար-

տունու Ճարտար գյուղի ինքնապաշտպանական ուժերի կազմը: Ինչպես վերհիշում են, ջոկատի հրամանատար Հովիկ Հայրապետյանը և փոխհրամանատար Պետրոս Գևորգյանը, կամավորականները տարբեր սահմանային դիրքերում իրականացրել են հերթապահություն, ինչպես նաև մասնակցել մարտական գործողությունների: Ազատամարտիկները, այդ թվում՝ «Հայդուկ» ջոկատը, հունիսի 27-28-ի հաղթական ճակատամարտից հետո գնացին հանգստի: Հուլիսի սկզբին Ճարտարի պաշտպանական ճակատի հերթական ինքնապաշտպանական մարտին արդեն մասնակցեցին Մասիսի ջոկատը և Աշոտ Նավասարդյանի ղեկավարած ջոկատի տղաները: Որոշ ժամանակ հանգստանալուց հետո «Հայդուկ» ջոկատը նորից անցավ դիրքապահության՝ հիմնականում Ճարտարի և 50-րդ հենակետերում: 1992 թվականը Մարտունու պաշտպանական շրջանի համար իրար հաջորդող ճակատամարտերի տարի էր: Մոնթեն իրեն ենթակա զինուժով հաղթանակը հաղթանակի հետևից էր կերտում, ազատագրում նորանոր տարածքներ, ոչնչացնում թշնամու հենակետերը: Նա միշտ նախաձեռնող էր և նախահարձակի դեմ նախագրոհող: 1993թ. սկիզբը նշանավորվեց նոր հաղթանակով: Ազատագրվեց Մարտունու շրջանի Գևորգավան գյուղը: Այդ օրերին «Հայդուկ» ջոկատը հերթական անգամ գնացել էր հանգստի, սակայն հանգամանքների բերումով ջոկատի փոխհրամանատար Պետրոս Գևորգյանը և ազատամարտիկ Ղազար Արոյանը մնացել էին Ճարտարում: Հունվարի 4-ին, Ճարտարի ջոկատի կազմում, Լեոնիկի, Նվեր Աբրահամյանի, Սեյրանի և այլոց հետ նրանք նույնպես մասնակցեցին Գևորգավանի ազատագրմանը: «Հայդուկ» ջո-

կատը հերոսաբար մասնակցեց նաև Քարվաճառի ազատագրական մարտերին՝ Լաչինի միջանցքի կողմից:

Ջոկատը ունեցել է մեկ զոհ՝ Հարութ Միրզոյանը՝ Դարակերտ գյուղից:

Հարկ է նշել, որ ջոկատի հիմնական կորիզը մինչև ազատամարտի ավարտը եղել է Արցախում և սրբորեն կատարել պարտքը հայրենյաց հանդեպ:

…

1988թ. Մասիսում Գնել Մանուկյանի կազմավորած կամավորական ջոկատը 1991 թվականին անվանվեց «Զորավար Անդրանիկ»: Դրա կազմում ընդգրկված էին Մասիսի, Մարմարաշենի և շրջանի այլ գյուղերի, ինչպես նաև Երևանի Ղռեր կոչվող թաղամասի կամավորականները: 1991-93-ին այն վերածվեց ռազմապաշտպանական մեծ միավորի:

Մոնթեի հրամանատարության ներքո Մարտունու Սպիտակաշեն գյուղի (ենթաշրջանի) ինքնապաշտպանական ուժերի կազմում թշնամու դեմ խիզախորեն կռվեցին նաև «Զորավար Անդրանիկ» կամավորական ջոկատի մի խումբ ազատամարտիկներ՝ Հրաչ Թադևոսյանը, Անդրանիկ Բարությանը, Սայեն Հայրապետյանը, Վարդան Մակարյանը և ուրիշներ:

Երբ 1993 թվականին «Զորավար Անդրանիկ» կամավորական ջոկատի հիման վրա ստեղծվեց ՊԲ-ի մոտոհրաձգային գումարտակը, ազատամարտիկներից նշանակվեցին դրա ստորաբաժանումների հրամանատարներ, և նոր կարգավիճակով նրանք մասնակցեցին Քարվաճառի, Ղուբաթլուի, Ֆիզուլիի, Ջեբրայիլի, Զանգելանի շրջանների ազատագրական մարտերին: Գնդի 82 ազատամարտիկից կազմված մի խումբ

(վաշտի հրամանատար՝ Ա. Բարության) «Արծիվ-մահապարտներ» գումարտակի կազմում մասնակցեց Մարտակերտի շրջանի բնակավայրերի ազատագրմանը:



Մոնթե Մելքոնյանը և Հրաչ Թադևոսյանը

Բնականաբար, այնտեղ էր նաև նրանց մարտական ոգին դարբնողներից մեկը՝ ամենահաս Մոնթեն:

Մասիսի շրջանում Մոնթեի սերտ համագործակցությունը «Թեհլիրյան» Միության հետ, որը կապող օղակ էր նրա և այլ կառույցների, ջոկատների ու անհատ անձանց միջև, նոր լիցք էր հաղորդել պատերազմին առնչվող տարաբնույթ խնդիրների լուծման գործին:

Համախմբում

Մասիսի շրջանը, ի տարբերություն Հայաստանի այլ շրջանների, ռազմաճակատին աջակցելու մեծ հնարավորութ-

Կառլեն Միքայելյան

յուն ուներ, քանզի երկիր ներկրվող ապրանքների կենտրոնական բազաների գերակշռող մասը շրջկենտրոնում էր: Շրջանի բոլոր հիմնարկ - ձեռնարկություններն սկզբում ինքնուրույն, իսկ որոշ ժամանակ անց արդեն համակարգված, աջակցում էին ռազմաճակատին թե՛ նյութական, և՛ թե ֆինանսական միջոցներով (ձեռք էին բերվում զենք-զինամթերք և այլ միջոցներ): Այդ ամենը համակարգում էր շրջանի ղեկավարությունը՝ շրջգործկոմի նախագահ Կառլեն Միքայելյանի գլխավորությամբ:

Շրջանում ձևավորվել էր նաև մի կառույց, որը հիմնականում զբաղվում էր սննդամթերքի, հիգիենիկ և կենցաղային նշանակության տարբեր պարագաների, տաք հագուստի, ծխախոտի և այլ անհրաժեշտ ապրանքատեսակների հավաքման, պահեստավորման ու ռազմաճակատ հասցնելու խնդիրներով: Այդ աշխատանքներն էլ հիմնականում համակարգում էին շրջգործկոմի գյուղվարչության պետ Գառնիկ Պետրոսյանը և շինվարչության պետ Գարիկ Վարդանյանը:

Ակտիվորեն գործում էր «Թեհլիրյան» միությունը: Այն համագործակցում էր երկրի կենտրոնական մարմինների, տեղական բոլոր կառույցների և ռազմաճակատի պաշտպանական միավորումների հետ:

Այս առնչությամբ շրջանում համագործակցությունն աննախադեպ էր:

Պարտքս եմ համարում սույն գրքում հիշատակել նաև Մասիսի շրջանի բոլոր այն կազմակերպությունների ղեկավարներին, ինչպես նաև այլ հայրենասեր անձանց, որոնք թիկունքից արեցին հնարավորն ու անհնարինը, որպեսզի ազգի քաջորդիները ռազմաճակատում իրենց զգան ավելի ուժեղ և ապահովված:

Այսպես՝ «Հայէլեկտրամեքենա» միավորումը (գլխավոր տնօրեն՝ Իլյիչ Բեգլարյան), «Տրուբսնաբ» միավորումը (տնօրեն՝ Էդուարդ Ալեքսանյան), «Պահածոների» գործարանը (տնօրեն՝ Արա Խաչատրյան), Մասիսի ամառանոցային ընկերությունը (նախագահ՝ Ազատ Գալստյան), Հայաստանի էլեկտրացանցերի միավորման Մասիսի մասնաճյուղը (տնօրեն՝ Ֆահրադ Ֆահրադյան), «ՊՄԿ-25»-ը (պետ՝ Նասլեթ Ղազազյան), Հայկոոպի «Մասիսի պտուղ – բանջարեղենի բազա»-ն (տնօրեն՝ Վոլոդյա Բեկթաշյան), «Գարուն» արտադրական միավորման մասնաճյուղը (տնօրեն՝ Լաուրա Սուքիասյան), գործարար Կարապետ Օհանյանը, շրջանի բոլոր գյուղական խորհուրդները, «Մարմարաշենի պետտնտեսություն»-ը (նախագահ՝ Համլետ Մարգարյան), Մասիսի քաղաքապետարանը (քաղաքապետ՝ Դմիտրի Նազարյան), Մասիսի շրջանային հիվանդանոցը (գլխավոր բժշկի տեղակալ՝ Վարդան Մեսրոպյան), Մասիսի N5 միջնակարգ դպրոցը (տնօրեն՝ Արարատ Պետրոսյան, ազատամարտիկի կարգավիճակով մասնակցել է Քարվաճառի ազատագրմանը), Այնթապի ոչ գործվածքային ֆաբրիկայի տնօրեն՝ Էդիկ Հովակիմյանը և ուրիշներ, առօրյա գործունեությանը զուգընթաց, հետևողականորեն զբաղվում էին ճակատագծի թիկունքային ապահովման խնդիրներով:

Կարծում եմ, որ Հայաստանի բոլոր շրջաններում, հեռավոր ու մերձավոր Սփյուռքում, Ջավախքում դրսևորված այս կեցվածքը Արցախյան ազատամարտում մեր հաղթանակի գրավականներից էր: «Հարկավոր է, որ մեր թիկունքը ամուր լինի, ինչքան ամուր լինի, այնքան էլ մենք ռազմաճակատում ուժեղ կլինենք և ավելի լավ կկռվինք»,- ասում էր Մոնթեն:

Հասանելի հեռախոսակապ

1991-92թթ. խստաշունչ ձմեռը բացասաբար անդրադարձավ շրջափակված Հայաստանի կացությանը: Հայաստան ներկրվող էներգակիրները բավարար չէին: Հոսանքը մատակարարվում էր ըստ գրաֆիկի՝ օրը 2 ժամով: Չէին հերիքում ռազմաճակատին անհրաժեշտ դիզվառելիքն ու բենզինը: Այդ պատճառով քաղաքային և միջշրջանային մարդատար փոխադրամիջոցների աշխատանքն անկանոն էր: Մարդիկ աշխատանքի էին գնում ոտքով՝ անցնելով մի քանի կիլոմետր ճանապարհ: Բնակարանների կենտրոնական ջեռուցումը դադարեցված էր: Համատարած ցրտահարումից պաշտպանվելու համար կատարվում էին ապօրինի ծառահատումներ, կտրվում էին անգամ փայտե հեռախոսասյուները, որի պատճառով շրջկենտրոնների և գյուղերի միջև գործող հեռախոսակապը հաճախ էր խաթարվում: Այդ առումով Մասիսի շրջանը բացառություն չէր:

Դեպքեր շատ եղան, սակայն գողացված փայտե հեռախոսասյուների փոխարեն, հետևողական աշխատանքի շնորհիվ, անմիջապես տնկվում էին երկաթե և երկաթբետոնե

սյուներ։ Այս աշխատանքներում մեծ օգնություն ցուցաբերեց Մասիսի էլեկտրացանցը (տնօրեն՝ Ֆահրադ Ֆահրադյան). իրոք, համագործակցությունն աննախադեպ էր։ Տրամադրված հորատող մեքենան՝ իր մասնագետով, հեռախոսակապի մասնագետների հետ (գլխավոր ինժեներ Սպարտակ Միրզոյանի, հեռախոսակայանի պետ՝ Հովիկ Նազարյանի, գլխավոր էներգետիկ Գևորգ Գևորգյանի և գյուղական հեռախոսացանցի բրիգադիր Տիգրան Բաբայանի գլխավորությամբ) արեց անհնարինը՝ հեռախոսակապի համակարգում պարապուրդը բացառելու համար։

Եվ քանի որ գյուղական հեռախոսակայաններն այդ դժվարին տարում էլեկտրահոսանք չլինելու պատճառով չէին աշխատում, բոլոր գյուղերում առաջին անգամ բացվեցին միջքաղաքային ու միջազգային խոսակցակետեր և այդ գյուղերի բնակչությանը հնարավորություն տրվեց տեղում օգտվելու միջքաղաքային ու միջազգային կապի ծառայություններից (խոսակցակետերին հատկացված էին Մասիս քաղաքի հեռախոսահամարներ, հեռախոսակայանը մշտապես ապահովված էր հոսանքով, ինչը այդ ժամանակվա համար բացառիկ երևույթ էր)։ Դրանցից օգտվում էր նաև Մասիսի շրջանին հարող՝ Էջմածնի և Արտաշատի շրջանների գյուղերի, ինչպես նաև Երևանի հարավային թաղամասերում ապրող բնակչությունը։ Բոլորից առավել կապի ծառայություններից օգտվում էին փախստականները, որոնց թիվը Մասիսի շրջանում համեմատաբար շատ էր… Պատճառը պարզ էր. փախստականների հարազատները սփռված էին աշխարհով մեկ, իսկ հեռախոսակապը հաղորդակցվելու միակ միջոցն էր։ Առաջնահերթ

ուշադրություն էր դարձվում Մասիս-Երևան-Ստեփանակերտ միջքաղաքային հեռախոսակապից օգտվողներին:

Պատերազմ էր… Հայ քաջազունները մեկ բռունցք դարձած կռվում էին թշնամու դեմ՝ հայրենիքի գոնե մեկ մասը պատմական այս ժամանակահատվածում վերադարձնելու, հայրենի հողերը վերամիավորելու համար:

«Ամեն մարդ իր գիտցած գործը պիտի ընե»,- ասում էր Մոնթեն:

Հեռախոսազանգ

1992 թվականի վաղ աշնանն էր, առավոտյան ժամը 10-ին մոտ Մոնթեն զանգահարեց Ղարաբաղից.

- Պարոն Չախալյա՞նն է, ինչպե՞ս ես:

- Ես լավ եմ, դու ինչպե՞ս ես:

- է, շատ լավ, - պատասխանեց նա և անմիջապես խոսքը գործնական հուն տարավ, - Մեզ հիմա խիստ հարկավոր է 15 կմ դաշտային հեռախոսալար և դաշտային 10 հեռախոս:

ՀՀ ԶՈՒ կապի վարչության պետ Արթուր Փափազյանը և Մոնթեն

Ես նրան ասացի. «Ուզածդ կուղարկեմ, անհոգ մնա: Կուղարկեմ նաև դիզվառելիք՝ տակառներով, ինչքան կարող եմ»:

- է, շատ լավ է, դիզվառելիքը շատ-շատ է հարկավոր:

Դիզվառելիք՝ պահեստավորված տակառներում և դաշտային լար ունեինք, մնում

էր դաշտային հեռախոսների հարցը: Մենք դրանք ձեռք բերեցինք «ՀայԷլեկտրամեքենա» միավորումից: Լինելով հայրենասեր անձնավորություն, միավորման տնօրեն Իլյիչ Բեգլարյանը նույնպես լրացուցիչ հատկացրել էր կապի այդ միջոցներից:

Բեռը հիմնարկի «Ավիա» մակնիշի բեռնատարով այս անգամ էլ տեղափոխելու էր իմ անձնական վարորդը՝ Միերը: Նրա հետ և՛որպես ուղեկցող, և՛որպես հեռախոսների սպասարկման առաջատար մասնագետ գնալու էր հիմնարկի աշխատակիցներից ծնունդով արցախցի Սլավիկ Ասրյանը, ով երկար տարիներ աշխատել էր Բաքվի քաղաքային հեռախոսային ցանցում:

Այդ օրը գիշերեցի Մասիսում և առավոտյան ուղիղ ժամը 6-ին նրանց ճանապարհեցի Արցախ: Երբ նրանք արդեն տեղ էին հասել, նորից զանգահարեց Մոնթեն ու ասաց, որ ամեն ինչ լավ է և որոշ ժամանակով իրեն թե՛տղաները, թե՛մեքենան հարկավոր են և ավելացրեց. «Մեքենան կհավնիմ, դիզվառելիքով կաշխատի, համ էլ քիչ կծախսե»:

Այդ մեքենան Մասիսի կապի հանգույցն ստացել էր 1990թ. սկզբին՝ ՀՀ կապի նախարարության «Ավտոբազայի» տրանսպորտի շարասյան պետ Արայիկ Մարությանի խորհրդով: Ինչպես նա ասաց. «Այժմյան պայմաններում տարբեր տեսակի վառելանյութերով աշխատող մեքենաների առկայությունը հիմնարկի համար շատ շահավետ է»: Նա ճիշտ էր…

Միերը և Սլավիկը Մարտունիում մնացին երկու շաբաթից ավելի: Նրանք ակամա դարձան պատերազմի մասնակից: Հետագայում շատ էին հպարտանում դրանով և իրենց կատարած աշխատանքի շնորհիվ Մոնթեի գովասանքին արժանանալու համար:

Միերը դրանից հետո էլ մի քանի անգամ տարատեսակ բեռներ և ազատամարտիկներ տեղափոխեց Արցախ՝ Մարտունու պաշտպանական շրջան:

Մոնթեն նրան երկար չէր պահում՝ ամեն անգամ ասելով. «Երբ հարկավոր լինի, ես կզանգահարեմ պարոն Չախալյանին»:

Հացկերույթ

Մոնթեն Ղարաբաղից կրկին եկել էր Երևան: Տեղ էր հասել առավոտյան: Նա գործերը Պաշտպանության նախարարությունում վերջացնելուց հետո այցելեց Մասիս: 1992 թվականի դեկտեմբերի 27-ն էր: Մոնթեն այդ օրը Մասիսում ստացական թողեց առ այն, որ ինքը ***1992թ. օգոստոսից մինչև դեկտեմբերը Կառլեն Միքայելյանի և Մանուկ Հովհաննիսյանի միջնորդությամբ Մարտունու պաշտպանական շրջանի համար ստացել է յոթ հատ 4 կիլոմետրանոց և մեկ հատ 2 կիլոմետրանոց հեռահարության «Ֆակոտ» հրթիռներ*** (ստացականի պատճենը, որ պահպանվել էր Այնթապի դպրոցի տնօրեն Ալլա Սահակյանի մոտ, զետեղված է սույն գրքում): Այլ հարցերի ըն-


27.12.92

թացքն ապահովելուց հետո Մոնթեն ցանկացավ անմիջապես վերադառնալ Ղարաբաղ, սակայն չմերժեց այդ օրը միասին «հաց կիսելու»՝ շրջգործկոմի ղեկավար Կառլեն Միքայելյանի առաջարկը:

Մինչ այդ իմ առանձնասենյակում նախորդեց «Զորավար Անդրանիկ» ջոկատի հրամանատար Գնել Մանուկյանի ու Մոնթեի ծանոթությունը՝ Մանուկի միջոցով: Մոնթեն արտաբերեց. «Քո մասին Մանուկն ինձ ասել է»: Մանուկյանն ու Մանուկը հաճախ էին համագործակցում, մասնավորապես՝ զինամթերք հայթայթելու և դրանով փոխապահովելու հարցով: Վերջին անգամ Մոնթեին ուղարկված ԱԿՍ-ի փամփուշտները Մանուկն ստացել էր Մանուկյանից:

Հացկերույթը կազմակերպվեց Նոր Խարբերդի «Հայկական խոհանոց»-ում: Հրավիրված էին 20 – 25 հոգի, ովքեր անմիջականորեն առնչված էին Արցախյան ազատամարտին և մասնավորապես՝ Մոնթեին:

Ճաշկերույթն սկսված էր, բոլորի տրամադրությունը բարձր: Ռազմաճակատում հերթական հաղթանակներն էին գրանցվել: Իսկ Մոնթեի ներկայությամբ մթնոլորտը առանձնահատուկ էր:

Երբ առաջարկվեց Մոնթեի կենացը, Հուսիկը բաժակը ձեռքին, ժպտադեմ դիմեց նրան.

- Մոնթե, այսօր կռվի դաշտում չես, ասա, -ի՞նչ ցանկություն ունես, մենք անմիջապես կկատարենք և լրջանալով շարունակեց,- կենացդ, Մոնթե, լավ կենաս, -և օղիով լցված բաժակը խփելով Մոնթեի կոնյակով լցված բաժակին, մինչև վերջ ըմպեց:

Մոնթեն ցած դրեց իր բաժակը, վերցրեց լիմոնադով լցված իր մյուս բաժակը, մի կում ըմպեց և պատառ կտրեց: Բոլորը

գիտեին, որ նա սպիրտային խմիչքներ երբեք չի օգտագործում, և ոչ ոք չէր պնդում, որ նա գոնե մի կում խմի:

Հուսիկը Մասիսի նավթաբազայի տնօրենն էր: Նա էր 1988թ. ստեղծել Այնթապ գյուղի կամավորական ջոկատը: Ինքը առաջին անգամ չէ, որ հանդիպում էր Մոնթեին:

Հյուրասիրությունն ավարտվեց, բոլորս միասին նրան ուղեկցեցինք մինչև իր մեքենան: Տեղավորվելով մեքենայում, նա դիմեց Կոմիտասին.

-Կոմիտաս, շարժվեցինք, կոխած կքշես, շատ ուշացանք, պետք է որ ժամանակին տեղ հասնինք: Կոխած կքշես, կոխած կքշես ...

Ազգագրական երգի-պարի «Տավրոս» խումբը

Մասիս քաղաքի ազգագրական երգի-պարի «Տավրոս» խումբը, Արցախի Մարտունու շրջանում համերգներով հանդես գալու նպատակով, ՀՀ պաշտպանության նախարարության ավտոբուսով 1992 թվականի դեկտեմբերի 21-ին մեկնեց Արցախ: Մոնթեն նախօրոք տեղեկացված էր:Ազգագրական խումբը Մարտունու շրջանի սահմանային անցակետ հասնելով, ցուցակ ներկայացրեց: Հերթապահ զինվորականը, համաձայն գործող կարգի, որը մշակել էր անձամբ Մոնթեն, ստուգեց մուտք գործողների թվաքանակն ու իր մատյանում

նշում կատարեց և խմբին բարի գալուստ մաղթելով՝ ճանապարհեց:

Մոնթեն այդպիսի կարգով Մարտունու բնակչությանը կարողացավ տեղում պահել. նա շրջանից դուրս եկող ճանապարհներին անցակետեր էր տեղադրել և զինվորականներ

նշանակել դրանք հսկելու համար: Այդ քայլով նա առնվազն երկու խնդիր էր լուծել: Մարտունեցի ազատամարտիկները պաշտպանելու էին ոչ միայն հայրենի հողը, այլև իրենց ընտանիքները…

Երգի-պարի խումբը տեղավորվեց Գիշի գյուղի մանկապարտեզում: Այնտեղ էր օթևանում ինքնապաշտպանության ուժերի ջոկատներից մեկը: Առաջին համերգը տեղի ունեցավ Գիշիում: Մոնթեի ցանկությունն էր, որ խումբը համերգներով հանդես գար բոլոր գյուղերում ու զորակազմավորումներում:

Երգի-պարի խմբի անդամները որոշում են դիմել Մոնթեին՝ Գյուլափլուի դիրքերում համերգներ տալու համար: Խմբի տղաներից ոչ պակաս աղջիկներն էին ոգևորված: Մոնթեն կտրուկ է. «Տղաները գնում են, իսկ աղջիկները՝ ոչ»:

Այդ օրը Մոնթեն էլ նրանց հետ գնաց դիրքեր: Տղաներն սկսեցին երգ ու պարը: Համերգի կատարողական ցանկում ընդգրկված էր նաև «Յարխուշտա» ռազմական խաղպարը: Այդ պարերը պարել են մեր պապերը ռազմի դաշտ գնալուց առաջ՝ զինվորների մարտական ոգին բարձրացնելու համար: Պարել են նաև ռազմական հաղթանակներ տոնելիս կամ թաղման արարողություններին՝ հատկապես, եթե հանգուցյալը կապ է ունեցել ռազմական գործի հետ: Այդ պարը խումբը կատարեց համերգի սկզբում և կրկնեց վերջում:

Այդ ընթացքում Մոնթեն հեռադիտակով անընդհատ հետևում էր թշնամուն: Նա նկատել էր, որ բարձունքին, թշնամու դիրքերից բավականին հեռու, միջդիրքային տարածքում ինչ որ բեռնատար մեքենա կար և երկար ժամանակ տեղից չէր շարժվում: Երբ հակառակորդի բեռնատարի մոտ եղած զինվորները հեռանում են դեպի իրենց դիրքերը, նա անմիջապես մոտենում է պարող տղաներին և նրանցից Վարդգեսին կանչում է իր մոտ.

-Վարդգես, դուն թուրքերեն լավ գիտես, վերցուր «ռացիան» և հարցուր անոնց որպիսությունը, միայն՝ ադ, - ու ավելացնում է, - անոնք իմ ձայնը կճանչնան:

Վարդգեսը վերցնում է «ռացիան», մտովի կենտրոնանում ու դիմում է ադրբեջանցիներին.

-Սալամ, սալամ, կարդաշլար, ինչպե՞ս եք, ես «Միլիեթ» թերթի թղթակիցն եմ, ի՞նչ կա չկա, ո՞նց եք:

Անմիջապես հետևում է նրանց պատասխանը.

-Լավ ենք, սակայն մեքենայի մարտկոցի հետ խնդիր կա, զինամթերքը չենք կարող դիրքեր հասցնել:

-Է, շատ լավ է,- ասաց Մոնթեն:

Մեկ-երկու ժամ չանցած, զինամթերքով բեռնատարը նրա տրամադրության տակ էր: Ազգագրական երգի-պարի «Տավրոս» խումբը համերգներով հանդես եկավ Մարտունու շրջանի բոլոր գյուղերում և զինվորական կազմավորումներում:

Տարիներ անց, ես դիտեցի «Տավրոս» խմբին նվիրված հուշերեկոյի տեսանյութը: Այդ տեսանյութում ներառված էին խմբի անդամների ելույթները և դրվագներ Մարտունիում խմբի համերգներից: Որոշեցի այդ տեսանյութից իմ ընկալումները նույնպես ներառել գրքում: Ինչ որ լսեցի նրանց ելույթներից և տեսա նկարահանվածում, վերստին զգացի հայի ու հայոց մշակույթի անսասան ուժը: Տեղին եմ համարում նշելու մի կարևոր հանգամանք: Բոլոր ելույթ ունեցողները անդրադարձան մի երևույթի, այն է՝ խումբը 1992թ. ամբողջ կազմով էր մեկնել Արցախ, չնայած խմբում եղել են նաև դեռահաս պատանիներ ու աղջիկներ: Նրանց ծնողները, նույնիսկ չունենալով խմբի ղեկավարի երաշխիքը իրենց երեխաների կյանքի անվտանգության համար, այնուամենայնիվ, չեն արգելել իրենց զավակներին մեկնելու: Ծնողների հոգում զարթնել է հայրենասիրական ոգին, Արցախի հետ լինելու ներքին պահանջը:

Տեսանյութի դրվագներից մեկը նկարահանվել է պաշտպանական դիրքերին հարող ոչ հեռու մի վայրում: Խումբն այնտեղ հասել էր բեռնատար մեքենաներով, ինչպես երևում է նրանց հագուկապից՝ պարզկա օրը եղել է ցուրտ: Սակայն

Մոնթեն, Մայլեն, Մասիան և Մարգարը

«Զվարթնոց -ում ծնողների՝ Չարլզի և Զաբելի հետ

Գիտության շավիղներում

Սեդայի հետ

Մ. Մելքոնյան Ա. Ենիգոմշյան

Մ. Ժամկոչյան Մ. Մելքոնյան

Մոնթեն հրահանգման ժամանակ

Մոնթե Մելքոնյանն իր համախոհների և զինակից ընկերների հետ

Փորձարկման պահին

Հոգեկից Գ. Մելիքյանի և զինակից Հ. Հարոյանի հետ

Էական համալրում զրահատեխնիկայով

Կ. Ավանեսյան, Մ. Հակոբյան,
Մ. Մելքոնյան, Ֆ. Պետրոսյան

Մոնթեն և Կ. Ավանեսյանը

Մոնթեն մի խումբ անմիջական զինակիցների հետ

Վ. Շահմուրադյան Ա. Տեր-Թադևոսյան

Խոնարհում և ոգեկոչում Եռաբլուրում

Մոնթեի հիշատակին տուրք է մատուցում
ՀՀ պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանը

Մոնթեի անվան Խաչքար-հուշակոթողը Արարատի մարզում (Նոր Կյուրին)

նրանց ուրախ դեմքերը վկայում էին, որ օրվա սառնությունը տեղի է տվել նրանց ջերմ զգացումների առջև:

Մեքենայից իջնելուն պես հնչում է հայոց ավանդական զուռնան: Պարում էին խմբի տղաներն ու աղջիկները: Նրանք պարում էին խենթորեն կարծես ուր որ է մարտի էին բռնվելու թշնամու հետ: Հայոց երգ ու պարը, նվագը նորից դարձել էին «զինվոր» և թև ու ոգի տվել հայ ազատամարտիկներին:

Խենթորեն պարեց նաև Մոնթեն: Նա պարում էր յուրահատուկ ժպիտով, պարում էր ինչպես կարող էր, պարում էր տղաների ու աղջիկների կազմած շրջանի մեջ…

Մոնթեից խանդավառված, պարում էին նրա զինակիցները, հատկապես՝ Կոմիտասը: Այս տեսանյութը դիտելիս, զգացի հայոց միասնականության ոգին, որը միշտ եղել է մեր հաղթանակի գրավականը: …

Երբ երգի-պարի խումբը 1992 թվականի դեկտեմբերի վերջին ավարտում է համերգները և պատրաստվում է վերադառնալ Մասիս, Մոնթեն բարձրանում է ավտոբուս նրանց շնորհակալություն հայտնելու և բարի ճանապարհ մաղթելու:

Նա ավտոբուսի վերջում տեսնում է մի մեծահասակ մարդու: Մոնթեն շրջվում է Մանուկի կողմը և հարցնում.

- Սա մարդը ո՞վ է, ինչու՞ է ավտոբուսում:

Խոսակցությանը քիչ շփոթված խառնվում է խմբի հետ Մարտունի եկած Մասիսի կուլտուրայի բաժնի վարիչ Ալինա Լալա յանը.

- Մոնթե, այդ մարդը իմ հայրն է, որոշել եմ տանել բժշկի:

- Ի՞նչ է, հոս բժիշկներ չկա՞ն, ինչո՞ւ կուզես տանիլ Մասիս:

- Դե, այնտեղի բժիշկները…

- Դե որ այդպես է, Ձեր հորը կտանիք Մարտունու հիվանդանոց, եթե բժիշկները կասեն սա մարդուն չեն կարող բուժել, թող մի տեղեկանք տան, որ իրենք էշ են, այդ պարագային ես կթողնեմ, որ անոր տանիք Մասիսի հիվանդանոց:

Բոլորը քարացած լսում են Մոնթեին: Պապիկը ջղայնացած նայում է իր աղջկան և ներող կլինեք ասելով՝ իջնում ավտոբուսից: Իսկ երբ Մոնթեն դուրս է գալիս ավտոբուսից, դիմում է տիկին Լալայանին և խիստ կեցվածքով հարցնում.

- Իսկ դուն ինչո՞ւ ես լքել Ղարաբաղը:

…Ավտոբուսը շարժվելու էր, սակայն խմբի պարուհիները



իջան և շրջապատեցին Մոնթեին՝ նրանից ինքնագիր ստանալու համար: Աղջիկներից ետ չմնաց նաև Վարդգեսը: Անցել է մոտ 23 տարի այդ օրվանից, երբ Վարդգեսը ինձ տվեց այդ ինքնագրի պատճենը, հետևյալ շարադրությամբ՝ 29.12.92. ***Սիրելի ընկեր Վարդգես, Ձեր շնորհիվ այս Նոր տարին շատ յատուկ Նոր տարի մը դարձավ Մարտունու շրջանի համար: Բո-***



լորս շնորհակալ ենք և անհամբեր կը սպասենք ձեր հաջորդ ներկայացումը: Մոնթե:

Վարդգեսը հավելեց. «Իմ ձեռքում եղած միակ թուղթը, որի վրա Մասիսը (պարսկահայ-ազատամարտիկ) իմ պատկերն էր նկարել, մեկնեցի Մոնթեին, որի աջ անկյունում էլ նա այդ գրությունը թողեց»:

Երգի - պարի խումբը, Մոնթեի զոհվելուց հետո, մասիսցի գործարար Կարապետ Օհանյանի հովանավորությամբ, մեկ անգամ չէ, որ եղավ Մարտունու շրջանում:

Երգի-պարի «Տավրոս» խումբն ստեղծվել էր Արցախյան շարժման ժամանակ: Պարուսույցը Լյուդվիգ Պողոսյանն էր, իսկ խմբի գեղարվեստական ղեկավարը՝ Արամայիս Մանուկյանը: Խմբին հովանավորում էին Մանուկ Հովհաննիսյանն ու իր եղբայրները:

Խումբը առաջին համերգով հանդես էր եկել 1989թ. սեպտեմբերի 5-ին՝ Ֆրանց Վերֆելի ծննդյան 100-ամյակի առթիվ՝ Մասիսի մշակույթի տանը: Հայտարարվել էր, որ հանդիսատեսների մուտքը գրքերով է լինելու: Համերգի արդյունքում հավաքված գրքերը նախատեսված էին Արցախի դպրոցների և գրադարանների համար: Այդ օրը հավաքվել էր մոտ 1000 անուն գիրք: Դրանք Մանուկը և Վարդգեսը մեծ դժվարությամբ տեղափոխեցին Արցախ և հասցրին Ստեփանակերտի գործկոմի մշակույթի վարչություն:

- Ինչո՞ւ «Տավրոս», - հարցրի Վարդգես Մարդիրյանին, երբ նա ինչ- որ գործով իմ աշխատասենյակ էր եկել:

Փորձել ենք ներկայացնել Հայկական լեռնաշխարհը հարավից եզերող Հայկական Տավրոս լեռնաշղթային հարող տարածքներում ապրած մեր ժողովրդի ստեղծած և պահպանած երգն ու պարը: Ներկայումս այդ տարածքներում հայեր գրեթե չեն մնացել, իսկ նրանց ստեղծած մշակույթը պետք է պահպանել, չէ՞ որ երբևէ մենք վերադառնալու ենք մեր երկիր, - վստահորեն պատասխանեց նա: -Երգն էլ, պարն էլ, մանավանդ պատերազմի ժամանակ, հայ զինվորին հացի ու ջրի պես անհրաժեշտ են,- շարունակելով իր միտքը՝ ասաց նա:

Այդ նախաձեռնությունը ճիշտ արձագանք էր ժամանակի պահանջին: «Թռչեի մտքով տուն…» մարտիկի մասին այս բառերով սկսվող երգը և հայկական «Քոչարին» դեռևս Հայրենական Մեծ պատերազմի տարիներին, քանի-քանի հայ զինվորների է ոգևորել… Նորից պատերազմ էր…

Մայլեն

1993 թվականի հունվարին Մոնթեն Ղարաբաղից Երևան էր եկել՝ հանդիպելու Ճապոնիայից տեսակցության եկած քրոջը՝Մայլեին: Տեղ էր հասել ուշ երեկոյան: Գիշերը ընտանիքը միասին էր անցկացրել: Հաջորդ օրը Մոնթեն, ինչպես միշտ, գործերով գնացել էր Պաշտպանության նախարարություն: Այնտեղից էլ նա զանգահարեց ինձ և ամեն անգամվա պես հարցրեց.

- Պարոն Չախալյա՞նն է, ինչպե՞ս ես:

- Լավ եմ , իսկ դու ինչպե՞ս ես:

- Է, լավ եմ, - պատասխանեց Մոնթեն և շարունակեց.

- Քեզի տեսնիլ կուզեմ:

- Կհանդիպենք անպայման,- ասացի նրան, - բայց դու նախ ասա՝ երբ ես վերադառնալու Ղարաբաղ:

- Շուտով, - պատասխանեց նա:

- Ուրեմն, հարկ է, որ Կոմիտասին (Մոնթեի անձնական վարորդն ու օգնականը) հենց այսօր, մինչև աշխատանքային օրվա վերջը ուղարկես Մասիս,- ասացի ես:

- Կուղարկեմ,- ասաց նա և մենք պայմանավորվեցինք հանդիպել հաջորդ օրը՝ մեր տանը: Մոնթեն և Սեդան եկան մեր պայմանավորված ժամին: Կոմիտասը գնաց մյուսներին բերելու: Ցուրտ օր էր, իսկ նրանք՝լավ մրսած: Նրանց անմիջապես առաջարկեցինք անցնել ննջասենյակ, որտեղ վառարանն էր: Նրանք տեղավորվեցին կողք-կողքի պատի տակ դրված մահճակալին:

- Է, դրսում շատ ցուրտ է,- ասաց Սեդան:

Առաջարկեցի սկզբում թեյ խմել: Դրսում ցուրտ էր, իսկ ներսում՝ տաք: Նրանք թեյ էին խմում ու տաքանում: Մի պահ դուրս եկա, երբ նորից մտա ննջասենյակ, տեսա՝ նրանք ուս ուսի տված, գլուխներն իրար հպած և միմյանց ձեռքերը սեղմած, պատին կիսահենված՝ քնել էին: Չէին հասցրել անգամ թեյը մինչև վերջ խմել:

Մեկ ժամ անց եկան նաև Մոնթեի քույրը՝ Մայլեն, Մարտիրոսը, Մանուկը, Հրայրը, Կոմիտասը, քիչ անց նաև՝ Միխայիլ Այվազյանը: Որոշեցինք Մոնթեին ու Սեդային միառժամանակ չարթնացնել: Այնուամենայնիվ, քիչ անց Մայլեն նրանց արթնացրեց:

- Է, շատ երկար քնեցիք:

- Է, լավ տաքացանք,- արթնանալով, ասաց Սեդան:

- Է, ինչ լավ տեղ էր, լավ հանգստացանք,- ասաց Մոնթեն:

Սեղանի շուրջը ազատ ու անկաշկանդ շատ հետաքրքիր զրույց ծավալվեց:

Մայլեն անընդհատ զրուցում էր Մոնթեի հետ, կատակում, ակնհայտորեն նա Մոնթեից իր կարոտն էր առնում: Եվ ժամանակ առ ժամանակ լուսանկարում էր:

Մոնթեն երևի առաջին անգամ էր տան պայմաններում պատրաստված ծիրանի հյութ խմում: Շատ էր հավանել.

- Սա ծիրանի ջուրը շատ կհավնիմ. -ապա ավելացրեց,

- Ամերիկայում դոլար արժե, դոլա՛ր...

Ծիրանի ջուր...

Մենք գինի, օղի էինք խմում, իսկ նա՝ ծիրանի «ջուր»:

Բաժանվելիս ականջիս հասավ Սեդայի բարեմաղթանքը ուղղված տանտիկնոջը. «Դուռներդ միշտ բաց ըլլա, սեղանիդ միշտ հաց, հացդ ալ կիսող ըլլա…»:

Վերջին հանդիպում

Վերջին անգամ Մոնթեին տեսա 1993թ. հունիսի 1-ի ուշ երեկոյան: Նա ինձ զանգահարեց և ասաց, որ արդեն գործերն ավարտել է Երևանում և ուշ երեկոյան վերադառնալու է Արցախ: Պայմանավորվեցինք հանդիպել Մասիսում: Եկավ մեր պայմանավորված ժամին: Նա միայնակ չէր: Նրա հետ էին Բի Բի Սի-ի թղթակիցներից Անի անունով մի հայ աղջիկ և Կոմիտասը: Քիչ հետո սենյակ մտան Մանուկ Հովհաննիսյանը, փոխտնօրեն Միխայիլ Այվազյանը, որոնք նախօրոք տեղյակ էին Մոնթեի գալու մասին: Մոնթեն ծանոթացրեց Անիի հետ: «Անին շատ անվախ աղջիկ է և ուզում է Ղարաբաղը տեսնել»,- քթի տակ մեղմ ժպտալով, ասաց Մոնթեն: Անին ետ չմնաց Մոնթեից. «Դուն զենքը պատրաստե, ես ալ պիտի կռվիմ»: Նրանց տրամադրությունը շատ բարձր էր: Երևանից Մոնթեի հետ Ղարաբաղ էր շարժվելու նաև մի բեռնատար ավտոմեքենա՝ բեռնըված Մարտունու ռազմաճակատի համար անհրաժեշտ բեռով: Վարորդի հետ նրանք պայմանավորվել էին հանդիպել երեկոյան ժամը 23-ից 24-ը՝ Մասիսից Մարմարաշեն տանող ճանապարհի և Երևան-Արարատ մայրուղու խաչմերուկում: Ժամանակ կար, անցանք հանգստի սենյակ՝սուրճ խմելու:

Հիմնականում խոսում էին Մոնթեն և Անին՝տարբեր բաներից, զրույցը գրեթե միշտ ուղեկցվում էր ուրախ կատակներով: Նրանք մեկ-մեկ հայերենից անցնում էին անգլերենի: Մենք «բողոքեցինք»… Անին խոսեցնում էր Մոնթեին կատակախառն ոճով, իսկ Մոնթեն նրան պատասխանում էր իր պարզ ու շիտակ կատակներով:

Երբ կատակներն ավարտվեցին, Անին դիմեց Մոնթեին.

- Մոնթե, այդ ինչպե՞ս կըլլա՝ գրեթե առանց զոհերի կամ քիչ զոհերով ամեն անգամ կհաջողիս:

Մոնթեն այդ հարցին չպատասխանեց, միայն մեղմ ժպտալով, աչքերը մի քանի անգամ արագ-արագ բացուխուփ անելով (նա երբեմն շատ արագ էր թարթում), ասաց.

- Ազերիները շատ-շատ կկոտորվին, հարյուրներով կկոտորվին, ափսոս, անոնց հետ տեղաբնիկ հարևաններն ալ կմեռնին:

- Իսկ Նախիջևա՞նը, Մոնթե՛, Նախիջևա՞նը...

- Է, կսպասենք, հուսանք, որ շուտով կլուծենք, մեկ օր և կես է պետք, ոչ ավելին, այն ազատագրելու համար: Օրուկես, օրուկես ...:

Նախիջևանի ազատագրման իր մշակած պլանը ուներ, սպասում էր...:

Անին նրան հերթական հարցը տվեց,

- Ինչպե՞ս ես պատկերացնում Արևմտյան Հայաստանի հետագան:

Նա միանշանակ պատասխանեց.

- Հայաստանը պետք է տնտեսապես հզորացնենք, շատ ու շատ պիտի հզորացնենք: Միայն ու միայն հզոր Հայաստանը և պատմական նպաստավոր պահը ի զորու կըլլան խնդիրը լուծելու:

Անիի վերջին հարցը, որ անմիջապես Մոնթեին էր վերաբերում, հետևյալն էր.

- Դուն չե՞ս հոգնիր:

Մոնթեն քիչ խորհեց և պատասխանեց.

- Հիմա տղաքը շատ լավ կաշխատին, կարելի է քանի մը օրով կտրվիլ իրականությունեն, շունչ առնիլ...

Բաժանվելուց առաջ Մոնթեն դիմեց ինձ. «Պարոն Չախալ-յան, ես հաջորդ անգամ Ղարաբաղից գալու եմ հունիսի 20-ին, պիտի խնդրեմ քեզի, որ ես, դուն և Մանուկը միասին երթանք Ջավախք: Կուզեմ վիմափոր Վարձիան, նաև Զա-քարյան - Երկայնաբազուկներ - Մխարգրձելիներու Թմկա-բերդ նստավայրը տեսնիլ… »:

- Գնանք, խնդիր չէ, կիջևանենք իմ հայրենի Ազավրեթ գյու-ղում՝ իմ հայրական տանը: Իրոք հարկ է գոնե մի քանի օր հանգիստ առնել: Իսկ Վարձիան գյուղից հեռու չէ: Կարող ենք այնտեղի բուժիչ հանքային ջրերում լոգանք ընդունել և զրուցել նաև մեր պատմական եղբայրների՝ վրացիների հետ,- ասացի ես՝ նկատի ունենալով Մոնթեի գերհոգնածությունը և հետաքրքրությունները: - Գիտե՞ս, Մոնթե՛, Վարձիայի մոտ կա մի հայտնի գյուղ՝ Ռուսթավ անունով: Այդ գյուղին է առնչվում «Ընձենավորի» հեղինակի՝ Շոթա Ռուսթավելու անունը: Այդ գյուղից էր նաև վրացերենի իմ ուսուցիչը՝ Շոթա Վենիճանա-շվիլին, մի հոյակապ և ազնիվ անձնավորություն: Եթե այցե-լենք նրան, շատ կուրախանա:

Մոնթեն լսում էր ուշադրությամբ, իսկ երբ վերջացրի խոս-քս, նա ասաց. - հետաքրքիր է, և շարունակեց. - «Ադոր մասին ետքը կխոսինք…»:

Մի պահ նայեց ժամացույցին, քիչ հապաղեց և շրջվելով Անիի կողմը, ասաց. «Անի՛, ելի, երթալու ժամանակն է»: Նրանց ճանապարհեցինք Ղարաբաղ իրենց նախանշած ժա-մին: Իջանք հիմնարկի բակ: Պահեստապետն արդեն «Վի-լիս»-ի համար անհրաժեշտ քանակի բենզին ապահովել էր: Մեքենայի շարժվելու պահին Այվազյանը Անիին «Անի» կոն-յակ նվիրեց:

- Շնորհակալ եմ, սա կոնյակը իմ անունով է, ուրեմն՝ Մոնթեի հետ պիտի խմենք,- ասաց և մտնելով նրա թևը՝ սրտաբուխ ծիծաղով, ավելացրեց.

- է, կատակ կընեմ, երթանք մեքենան նստինք…

Անհավատալի լուր

1993թ. հունիսի 12-ի ուշ երեկոյան ինձ զանգահարեց Մանուկը և տխրաձայն ասաց, որ Մոնթեն զոհվել է: Անսպասելի, անհավատալի և անցանկալի լուր: Պայմանավորվեցինք մյուս օրը հանդիպել: Երբ հանդիպեցինք, Մանուկն արդեն գիտեր, թե Մոնթեն ինչպես է զոհվել: Նա զոհվել էր Մարզիլի գյուղի տարածքում, որը ժամեր առաջ էր ազատագրվել: Թշնամու զրահամեքենաներից մեկի ՀՄՄ-1 (БМП- 1) անձնակազմը, զգալով, որ կարող է գերեվարվել, փախել է մարտադաշտից և թաքնվել գյուղամիջյան ճամփին մոտ մի տան մերձակայքում: Մոնթեն այդ ընթացքում տղաների հետ «Վիլիսով» դուրս է եկել՝ իրավիճակին ծանոթանալու: Նրանք մտել են Մարզիլի և շարժվել առաջ նույն գյուղամիջյան ճանապարհով: Շատ չանցած, տեսել են այդ ՀՄՄ-ն: Կոմիտասը բավականին մոտեցել է թշնամու զրահամեքենային՝ կարծելով, թե յուրային է, իջել է ավտոմեքենայից և ավելի մոտեցել: Այդ ժամանակ Մոնթեն և մեր մյուս տղաներն էլ են իջել մեքենայից: Երբ երկու կողմից էլ զգացել են,

որ յուրայիններ չեն, անմիջապես դիրքավորվել են, և սկսվել է փոխհրաձգություն: Անսպասելիորեն ՀՄՄ-ն կրակել է «Վիլի-սի» ուղղությամբ: Տեղի է ունեցել անհավասար մարտ ոչ թե մարդուժի, այլ՝ տեխնիկայի առումով: ՀՄՄ-ից արձակված հրթիռի շեղակի թռած բեկորից էլ Մոնթեն զոհվել է: Ինչպի-սի~ անպատեհություն:

Մոնթեի հուղարկավորումը տեղի ունեցավ հունիսի 19-ին՝ Եռաբլուրում: Ներկա էին ՀՀ և ԼՂՀ բարձրաստիճան ղեկա-վարներից շատերը, զինվորականներ, Մոնթեի ընկերները և հարազատները, մեծ բազմություն...:

Մոնթեի հուղարկավորմանը հաջորդած հոգեհացի արա-րողությանը մասնակցում էին Վազգեն Սարգսյանը, Վազգեն Մանուկյանը և բարձրաստիճան այլ անձինք: Ճակատագրի ինչպիսի հեգնանք՝ նա հունիսի 20-ին գալու էր Երևան, որ-պեսզի գնայինք Ջավախք…

Մոնթեի յոթի և քառասունքի արարողությունը, նրա մա-սիսցի զինակից և թիկունքային ընկերների առաջարկով, նշվեց Մասիսի մշակույթի տանը: Մասնակցում էին շրջանի ամբողջ ղեկավարությունը, Մոնթեի ընտանիքից՝ հայրը, եղ-բայրը և Սեդան, ընկերներից՝ Մարտիրոսը, ինչպես նաև նրա մարտական ու թիկունքային ընկերներից շատերը: Նստած էի Մոնթեի հոր կողքին: Նա իր վիշտը արտաքնապես ցույց չէր տալիս: Հոգում միախառնված էին հայրենանվեր զավակի հոր հպարտության և կորստի զգացմունքները: Ամ-բողջ արարողության ընթացքում միայն լսողի դերում էր, ա-մեն ինչի արձագանքում էր մեղմ, ասես ժպտալու չհաջողված փորձի դրոշմը կրող հայացքով, երբ կենացների ժամանակ բաժակներն իրար էինք մոտեցնում…

Ոդիսական

«Մոնթե Մելքոնյան, այլ անվամբ՝ Ավո»

Երբ թղթին էի հանձնում ինձ համակած այն զգացումներն ու մտածումները, որ առնչվում էին Մոնթեին, բնականաբար, կրկին անդրադարձա գրադարակումս խնամքով պահվող «Նորություններ Հայաստանից» ֆրանսալեզու հանդեսի 1993թ. հունիս-հուլիսյան 2-րդ համարին: Փարիզում լույս տեսնող պարբերականի շապիկին հերոսի լուսանկարն է՝ խոհական, վճիտ հայացքով, ավա՛ղ, գույժով. «Մոնթե Մելքոնյանը զոհված է»…

Հանդեսի ինն էջն ամբողջությամբ նվիրված են Արցախյան ազատամարտի մեծ երախտավորին: Ուշագրավ է հատկապես Վալերի Թորանյանի՝ «Մոնթե Մելքոնյան, այլ անվամբ՝ Ավո» վերնագրով ռեպորտաժը, որ հրապարակվել է «Ոդիսական» խորագրի ներքո: Ներկայացնելով 36-ամյա Մոնթեի ոդիսականը նախքան Արցախյան ազատամարտը, հեղինակն այնուհետև բնութագրում է սիրված հերոսին՝ նշելով նրա ասկետիզմը. «Նա չի ծխում, չի խմում, այլ իր էներգիան պահպանում է ինքնապաշտպանության հիմունքներն ու ռազմական կարգապահությունն ուսանելու համար: Քիչ է քնում (լավագույն դեպքում՝ հինգ ժամ, իսկ ընդհանրապես՝ երկու կամ երեք ժամ), անխոնջ անցնում է ճակատագծի դիրքերով, մասնակցում է բոլոր կռիվներին, չի հանդուրժում անփութությունը…»:

«…Լաչինում, ուր մենք հանդիպեցինք մայիսի առաջին օրերին,- շարունակում է հեղինակը,- նա, մառախլապատ ու ամայացած ուրվական քաղաքում դժգոհ հայացքով հետևում

էր թափվող անձրևին. «Մի տարի է, ինչ օրհնում ենք, որ անձրևը խանգարում է ազերիների (ազերաթուրքերի՝ ծանոթություն խմբագրի) տանկերի հարձակմանը, այսօր նզովում ենք, որ հիմա էլ խանգարում է մեր տանկերին առաջ շարժվել», - ասել է Մոնթեն և բացահայտել իր հավատամքը. «Երբ սկսվեց Ղարաբաղյան շարժումը և հակամարտությունը սրվեց, ես մտածեցի, որ իմ տեղը նրանց կողքին է, ովքեր փորձում են պաշտպանել իրենց կյանքն ու հողը: Ես ոչ ոքի ոչինչ չեմ հարցրել՝ ոչ կարծիք, ոչ էլ թույլտվություն: Ես մտածել եմ, որ իմ պարտքն ու իմ իրավունքն է, ինչպես աշխարհի յուրաքանչյուր հայինը, օգնել իր ժողովրդին, երբ նա վտանգի մեջ է»:

«Մարտունեցի երեխաները,- գրում է Վ. Թորանյանը,- պատմում են, որ Ավոն երկնքից է իջել, որպեսզի իրենց օգնի: Ճշմարիտն այն էր, որ 1991թ.սեպտեմբերին իջել է ուղղաթիռից՝ մի լրագրողի խոսքը թարգմանելու համար, և հենց նույն օրը կռիվ է սկսվել: Նա գյուղացիներին առաջարկել է իր օգնությունը, նրանք նրան որսորդական հրացան են տվել: Վեց ամիս հետո Մոնթեն դարձել է Մարտունու պաշտպանական շրջանի հրամանատարը: Այդ ժամանակ Մարտունին Արցախի պաշտպանության թույլ օղակներից էր և ենթակա թշնամու անդադար հրետակոծությանը»: Նշելով, որ լեգենդար հրամանատարի ենթակայությամբ կռվող պաշտպանների թիվն արդեն ավելի քան 4000 է, հեղինակն ընթերցողներին է ներկայացնում հերոսի հետ իր զրույցի համառոտագրությունը՝ Մոնթեին հատուկ հակիրճ ու դիպուկ պատասխաններով, էական փաստարկումներով: Զրուցանյութը դասակարգված է ըստ ֆրանսերենի այբուբենի՝ Ա-ից Զ հերթականութ-

յան, բնականաբար, հայերենում այդ օրինաչափությունը խախտվում է: Հարկ համարեցի Մոնթեին բնորոշ պատասխանները չնչին կրճատումներով զետեղել սույն գրքում, քանի որ Սփյուռքում լույս տեսած հանդեսին Հայաստանում շատ քչերն են ծանոթ:

Եվ այսպես, խոսում է Մոնթեն.

- Զենք - զինամթերք

1992թ.հունիսի 28-ից (մինչև 1993թ. մայիս, ծանոթ.՝ խմբագրի) միայն Մարտունու տարածքում մենք առգրավել ենք 55 տանկ՝ Տ-72, 24 թեթև տանկ՝ ՀՄՄ, 15 զրահամեքենա, 3 թրթուրավոր տանկ, տարբեր տեսակի 27 ծանր հրետամիջոց: Այսօր ինքնապաշտպանական ուժերի ծանր զենքի 90%-ը (ավելի քան 200 տանկ Տ-72) գրավվել է ազերիներից:

- Բյուջե

Արցախի ռազմական բյուջեն 28 միլիարդ ռուբլի է: Մոտավորապես 32 միլիոն դոլար:

- Վառելիք

Վառելիքը պատերազմի նյարդերն է: Ամեն ինչ մեզ գալիս է Հայաստանից, բայց, ցավոք սրտի, չի բավարարում: Մեր դիրքերը Մարտունիում պաշտպանելու համար օգտագործել ենք 25 տոննա վառելիք, Քարվաճառում՝ 300 տոննա:

Ամեն տանկ հարթ տարածքում 1կմ անցնելիս այրում է 4 լիտր վառելիք, իսկ լեռնային տեղանքում կամ ռազմավայրում՝ 6 լիտր:

- Քաղաքական կողմնորոշումներ

Մարտում բոլորը կռվում են առանց որևէ խտրականության և առանց միմյանց հարցնելու իրենց կողմնորոշման մասին: Որքան ճակատից հեռանում ես, այնքան պատկերը փոխվում է: Ստեփանակերտում քաղաքական հակադրումներն ավելի նկատելի են և ամենից վատն այն է, որ նույնն էլ հաստատ Երևանում է: Մեկ տարի է, ինչ Ազգային պաշտպանության կոմիտեի կազմավորման հետ դաշնակցականները կորցրին իրենց ազդեցությունը Ղարաբաղում: Մարտունիում 4000 մարդուց 160-նն են իրենց դաշնակցական համարում: Բայց ես կրկնում եմ, որ ճակատում քաղաքական հակասություններ չկան:

- Դասալքություն

Ազերիները, ընդհանուր առմամբ, Ղարաբաղում մեռնելու ոչ մի ցանկություն չունեն: Կռվողները ազգային փոքրամասնություններն են՝ լեզգիներ և թալիշներ, որոնց Բաքուն ուղարկում է առաջնագիծ, այնպես, ինչպես թուրքերն էին ուղարկում քրդերին կեղտոտ գործեր անելու: Ավելին ասեմ, Ադրբեջանում նրանք, ովքեր միջոցներ ունեն, վճարում են, որպեսզի իրենց որդիները չծառայեն, իսկ աղքատները այլընտրանքի հնարավորություն չունեն, նրանք բռնությամբ ուղարկվում են ծառայության: Երբեմն նույնիսկ ազերիները տեղում լքում են իրենց տանկերը և փախչում: Դասալիքների մեծ մասը Ռուսաստանում է:

- Կարգապահություն

Հայերը կարգապահության պակաս ունեն, բայց ավելի քիչ, քան ազերիները: Դեռ ավելին, հազարապատիկ մոտիվաց-

ված են (արդարությամբ նախատրամադրված, ծանոթություն՝ հեղինակի)։

- Կանայք

Մարտունիի զինուժում 4000 զինվորից միայն մեկն է կին։ Այստեղ ո՛չ տղամարդկանց, ո՛չ էլ կանանց դուր չի գալիս, երբ կանայք կռվում են ռազմաճակատում։

- Ռազմական կրթություն

Ցավոք, մենք ժամանակի ու գումարի պակաս ունենք՝ ռազմական կրթություն ստանալու համար։ Նրանց, ովքեր զինծառայություն չեն անցել, տալիս ենք նվազագույն ռազմական գիտելիքներ։ Մարտունիում ուսումնական կենտրոն եմ ստեղծել տանկիստների, հրետանավորների և ականազերծողների համար, սակայն վառելիքի և զինամթերքի պատճառով չենք կարողանում իրականացնել իսկական զորավարժություններ։ Հաճախ զինվորական կրթությունը տալիս ենք հենց ռազմաճակատում, մկրտվում են կրակներում։ Հիշում եմ մի 18 տարեկան երիտասարդի, ում տանկի դեմ գործել սովորեցրինք կռվից մեկ ժամ առաջ։ Մարտի ժամանակ նա երկու կրակոց արձակեց և ազերիների երկու տանկ խոցեց։

- Սահմաններ

Իմ կարծիքով, հարկավոր է ամբողջացնել Արցախի պատմական սահմանները՝ Արաքսի և Քուռի միջանկյալ տարածքը։ Աշխարհագրական տեսանկյունից, մեր դիրքերն ավելի հեշտ կլինի պաշտպանել, որովհետև կհասնենք գետերով ու սարերով բաժանված բնական սահմանների։ Որքան «ժանյակաձև» լինեն մեր պաշտպանական գոտիները, այնքան ուժեր

կծախսենք՝ անթիվ ճակատները պաշտպանելու համար և այդպիսով կհեշտացնենք ազերիների գործը։

- Ղեկավարում

Երբ 18 ամիս առաջ ժամանեցի Մարտունի, անհրաժեշտ էր ամեն ինչ միաժամանակ անել։ Ոչինչ համակարգված չէր։ Ես ավելի շատ ժամանակ էի ծախսում իմ մարդկանց համար հաց ճարելու, քան ռազմական խնդիրներ լուծելու վրա։ Ձմռան ընթացքում հացի մեծ խնդիր կար, քանի որ ալյուրը Հայաստանից էր գալիս, և նախորդ տարին բերքահավաք չէր եղել, ու ցորենը փչացել էր։ Այս ամառ հարկ կլինի, որ զինվորների մի մասը կանանց հետ զբաղվի ցորենի բերքահավաքով, որպեսզի մյուս տարի այս պատկերը չկրկնվի։ Մսի խնդիրը լուծվեց Քյալբաջարը (Քարվաճառը, ծանոթ.՝ խմբագրի) գրավելուց հետո, քանի որ վերջինիս հետ տիրացանք նաև մեծ անասնագլխաքանակի։ Մենք առավել ապահովված ենք, քան Հայաստանում, քանզի բնությունը այստեղ հարուստ է։ Մրգի 80%-ը պետք է տարվեր Հայաստան, բայց վառելիքի բացակայության պատճառով բերքը, հավանաբար, տեղում կփչանա։

- Ճապոնիա

Ճապոնացիները մեր կյանքը փրկեցին։ Նրանք արտադրեցին Ալինկո մակնիշի փոքրիկ, հեռագործ ռադիոհաղորդիչ-ընդունիչներ՝talkies-walkies, որոնք շատ նուրբ ու միաժամանակ հուսալի սարքեր էին, որոնք մեզ նվիրեց հայկական Սփյուռքը։

Հաղորդակցության բարելավման շնորհիվ կարողացանք խնայել տասնակ կյանքեր, սակայն դեռ անհրաժեշտ են լրա-

ցուցիչ այդպիսի սարքեր, որպեսզի ամեն խումբ և զորամիավորում զինված լինի։

- Քարվաճառ

Քարվաճառի գրավումը ռազմավարական հարձակում էր, քանի որ վերևից ազերիական հրետանին ռմբակոծում էր Վարդենիսը, Սիսիանը, Եղեգնաձորը, Մարտակերտը...Ես ղեկավարում էի հարձակումը Արցախի կողմից։ Անհրաժեշտ էր պայքար մղել Քարվաճառի հայկական առաջընթացից պաշտպանվող թշնամու մի քանի դիրքերում։ Չարեքդարում հանդիպեցինք ազերիական խիզախ ինքնապաշտպանության։ Ասում եմ այդ մասին, որովհետև դա շատ եզակի երևույթ է։ Նրանք մինչև մահ կռվեցին իրենց խրամատներում և երկու օրով կանգնեցրին մեր տանկերի առաջընթացը։ Քանի որ մենք հասել էինք Լաչինի և Քյալբաջարի խաչմերուկ, 24 ժամ տվեցինք բնակչությանը, որպեսզի հեռանա։ Նույնն էլ Կիրովաբադի և Քարվաճառի ճանապարհներին։ Երբ հասանք Քարվաճառ, միացանք Վարդենիսից եկող զորքերին և մի շաբաթ կարողացանք կարգուկանոն պահպանել…

- Բանակցություններ

Մենք հայտնվել ենք երկու հակասական դիրքորոշումների միջև։ Մի կողմից Ադրբեջանը կտրականապես հրաժարվում է հանել Ղարաբաղը իր սահմաններից, մյուս կողմից Ղարաբաղը չի կարող ընդունել իր ներկալվածության (անկլավ մնալու) փաստը։ Մենք ուղղակի պետք է պարտության մատնենք Ադրբեջանին, որպեսզի վերջինս, ստիպված, ձեռքերը հեռացնի Ղարաբաղից։

- ՄԱԿ

Քարվաճառի գրավումից հետո ՄԱԿ-ը հակահայկական բանաձև ընդունեց, միջազգային հաստատություններն իրենց դրական կամ բացասական կարծիքները հայտնեցին դրա վերաբերյալ և այդքանով ամեն ինչ ավարտվեց։ Իսկ որո՞նք էին այն միջամտությունները, որ պետք է արգելեին Ղարաբաղի հայերի կոտորածը։

Դրական կարծիքներ և մեղադրանքներ… և ի՞նչ այս ամենից։ Այստեղ միայն մենք պետք է մեր մաշկը փրկենք։ Այնուամենայնիվ, շրջափակումից ավելի վատ մեզ էլ ի՞նչ կարող են անել։ Այսպիսով մենք կորցնելու բան չունենք։

- Թուրք զինվորներ

Թուրքիայից յոթ թուրք զինվոր սպանվեցին 1992թ. մայիսին՝ Շուշիի ազատագրման օրը։ Անցյալ տարի թուրքական բանակի 45 սպա Ադրբեջանում էին և ներկա էին Շահումյանի ու Մարտակերտի գրավմանը՝ ազերիների կողմից։ Նրանց մենք ճանաչում ենք նաև ռադիոհաղորդիչ-ընդունիչ (talkies-walkies) սարքի միջոցով, քանի որ նրանց խոսվածքը տարբերվում է։

Մենք ազերի զինվորականներից առգրավել ենք Թուրքիային վաճառված գերմանական արտադրության «Կալաշնիկովներ», ինչը վկայում է նաև ռազմական օգնության մասին։

- Տարածք

Այժմ մենք վերահսկում ենք 8000 կմ^2 տարածք։

- Հրատապ խնդիրներ

Այստեղ ամեն ինչի կարիք էլ ունենք, սակայն ամենաշատը զինվորական քարտեզների, ինֆրակարմիր հեռադիտակների և հեռագործ ռադիոհաղորդիչ-ընդունիչների (talkies-walkies)-ի կարիք ունենք:

- ՁԵՆ (ներսուզվելով, ներամփոփվելով հոգեկան անդորրի՝ Նիրվանայի հասնելու բուդդայական ըմբռնումը)

Ես երազում եմ հայտնվել ամայի կղզում առանց հայերի ու ազերիների, որպեսզի գնամ և ութ օր հանգստանամ (քրքջում է՝ պայթուցիկ):

Մոնթեն համոզված էր

Թուրք – խորհրդային խարդավանքով մայր երկրից օտարված Արցախի ու Հայաստանի միջանկյալ տարածքների ազատագրումը պատմական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար, ի վերջո, հայոց աշխարհի երկու հատվածները վերամիավորվեցին: Սակայն դեռևս ազատագրված չէին նորահայտ Ադրբեջանին բռնակցված հայկական տարածքները, մասնավորապես՝ Լեռնային և Դաշտային Ղարաբաղի մի մասը, Նախիջևանը:

Հայկական զինուժի հաղթական գործողությունները որոշ երկրների շահերին չէին համապատասխանում: Այդ էր պատճառը, որ օրեցօր ավելանում էին արտաքին ճնշումները Հայաստանի իշխանությունների վրա: Նորաստեղծ երկրի ղեկավարությունը, իմ ըմբռնումով, դեռևս չուներ ճկուն և հմուտ

արտաքին քաղաքականություն վարելու դիվանագիտական այն փորձը, ինչը շատ անհրաժեշտ էր տվյալ պատմական շրջադարձում: Սակայն այս իրավիճակում արվեց հնարավորը, և ունեցանք այսօրվա իրողությունը:

Մոնթեն և իրատես շատ այլ հայորդիներ, դեռևս պատերազմի ժամանակ, մտահանգել էին ստույգ կարծիքի՝ եկվոր հարևանի հետ խնդիրները պետք է լուծել վերջնականապես: Այդ էին հուշում թե՛ ժամանակը, և թե՛ պատմական նպաստավոր պահը:

Մոնթեն համոզված էր, որ աշխարհի հզոր երկրները մեր պատերազմին գործնականապես միջամտելու չեն շտապում, սպառնալիքներ լինելու են, տարաբնույթ մեկնաբանություններ՝ նույնպես: Աշխարհը որոշ ժամանակ կանդրադառնա հիմնախնդրին և կմոռանա՝ այլուր հետամտելով իր մեծ շահերն ու հրատապ անելիքները: Կլինեն կողմնակիցներ, կլինեն նաև հակառակ կարծիք ունեցողներ, բայց ճշմարտությունը մեկն է՝ հաղթողներին չեն դատում:

…Իհարկե, Թուրքիայի և Իրանի միջև 1932 թվականին իրականացված տարածքների փոխանակումը, որի հետևանքով Նախիջևանը ունեցավ 11 կմ սահման Թուրքիայի հետ, որոշակի դժվարություն կառաջացներ Նախիջևանի ազատագրման հարցում, սակայն կար մեկ այլ իրողություն. եթե թուրքերը վստահ լինեին Կարսի պայմանագրի անխոցելիությանը, ապա նրանք այդ տարածքների փոխանակումը չէին իրականացնի: Մեր անձնական զրույցներից եզրակացրել եմ, որ Մոնթեն լավ գիտակցում էր Նախիջևանի խնդիրը և գիտեր, որ այն խճճված է, սակայն, իր կարծիքով՝ հանգուցալուծելի: Արդյո՞ք մենք այս հարցում չսխալվեցինք:

Արցախյան ազատամարտում մեր ազգը հերթական անգամ հաղթանակով վերահաստատեց իր հարատևման իրավունքը: Վաղուց է ասված՝ ուժն է ծնում իրավունք: Մենք ցուցաբերեցինք այդ ուժը հընթացս, միայն 20-րդ դարում որերորդ անգամ: Մեկ հաղթական պատերազմ էր պետք դեռ դարեր առաջ ...

Մոնթեի ասույթներից

…Առանց խիստ ու պարկեշտ ինքնադատության ոչ մեկ անձ կրնայ բարելավվիլ և զորանալ:

…Հայ ժողովրդի ինքնորոշման համար աշխատելը ես համարում եմ իմ առաջին և ամենակարևոր պարտականությունը:

…Միայն ու միայն համազգային հավաքականությամբ և իրատեսական մոտեցումով խնդիրները կարող են լուծվել…:

…Սփյուռքահայերը Հայաստանից դուրս են ապրում, որովհետև ցեղասպանություն է եղել, … հետևաբար, մեր ազգը զինյալ պայքար պիտի մղի այնտեղ շոշափելի որևէ իրավունք ձեռք բերելու համար…:

…Անցյալին Սփյուռքի մեջ պայքարել եմ մեր ժողովրդի իրավունքներուն համար և այստեղ կգտնվիմ նույն պատճառով: Ասիկա այդ նույն պայքարի շարունակությունն է:

-…Կարծում եմ, որ 1988թ -ից ի վեր գրեթե ամեն մարդ վերագնահատել է իր գաղափարները աշխարհում կատարվածների մասին: Դա չի նշանակում, որ ես կամ ոմանք փոխել ենք գաղափարախոսական մեր ընդհանուր տեսակետները: Դա նշանակում է, որ իրադրությունը ցույց է տալիս, թե ժա-

մանակն է վերագնահատելու մեր տեսակետների որոշ բաներ…:

… Պետք է տեսնել խնդիրները այնտեղ, որտեղ դրանք գոյություն ունեն, և անմիջապես դրանք լուծել: Ներկա պահին գոյություն ունեցող խնդիրներից մեկը ազգային հարցն է, իսկ մեկ ուրիշը՝ տնտեսական վիճակը: Ինչպե՞ս ստեղծել հզոր տնտեսություն առանց վերստին հաստատելու շահագործող մի համակարգ….

-… Հայաստանը պետք է հասկանա, որ պատերազմի մեջ ենք: Լուրջ է այս պատերազմը; Բոլոր ուժերը պետք է զորաշարժել այս պատերազմի համար, որպեսի շուտ վերջացնենք: … Պետք է հիմա մեր ամբողջ ուժը դնենք այս գործի մեջ, հաղթենք ու վերջ: …Պատերազմը միայն դժվարություն է: Եթե մարդիկ մտածում են, որ իրենց պարզ կյանքը կարող են շարունակել, ուրեմն շատ ապուշ են: Պիտի հասկանան, պիտի զոհվինք, պիտի լավ չուտենք, լավ չհագնինք, պիտի դպրոց չերթանք: Այս ամենը չմոռանալով մեր ամբողջ ուժը պիտի դնենք ռազմական գործի մեջ, հաղթենք:

Հուսով եմ, որ սա կազդի ամբողջ Արցախի հոգեբանության վրա, ամբողջ հայերի հոգեբանության վրա: Պետք է իմանան, որ եթե ուժեղ մնան իրենց դիրքերում, կռվեն, հետո խրամատավորվեն և խրամատի մեջ մնան… ոչ թե Մարտակերտի պես կռվեն, առաջ գնան, հետո ամեն մեկը ասի՝ մեր գործը վերջացավ, և թողնեն հեռանան: Այս տեսակ ապուշությունների պատճառով մեծ կորուստներ ենք ունեցել, տվել ենք մեր հայրենիքի մի կարևոր մասը՝ Շահումյանը և Մարտակերտը: Հուսով եմ, որ բոլորի վրա կազդի մեր հաղթանա-

կը և մեր աշխատելու ձևը: Այսինքն, կռվել, առաջ գնալ, խրամատավորվել, պահել:

Կոմիտաս Ավանեսյան

Պատերազմից շատ չէր անցել, երբ մի անգամ երեկոյան ինձ զանգահարեց Կոմիտասը (զոհվել է 30.10.1996թ.՝ թշնամու ականի պայթյունից): Ուզում էր ինձ տեսնել: Հանդիպեցինք մեր տանը: Իր երևանաբնակ երկու ընկերոջ հետ էր: Նա եկավ և անմիջապես ղարաբաղցու պարզությամբ արտաբերեց.

-Կերած ենք, թող տիկին Ժաննան սեղան չգցի, միայն՝ սուրճ:

Նա հիմնականում ապաքինված էր, թեև դեռ ձեռնափայտով էր: Տրամադրությունը բարձր էր, վերաբերմունքը հարազատ, իսկ կեցվածքը՝ հաղթանակած զինվորի: Նախքան սուրճի մատուցումը, Կոմիտասի ընկերներից մեկը նստեց դաշնամուրի մոտ և կատարեց Հեքիմյանի «Ղարաբաղցին» ստեղծագործությունը: Իսկ արդեն սուրճի սեղանի շուրջ խոսակցության նյութը Ղարաբաղն ու Մոնթեն էին:

Կոմիտասի պատմածներից տպավորվել են մի քանի հիշարժան դրվագներ:

- Սպաներից մեկը Մոնթեից թույլտվություն է խնդրում՝ երեք-չորս ժամով բացակայելու, դստեր ծննդյան օրվա կապակցությամբ: Մոնթեն առարկում է՝ ասելով, որ «Վաղը առտուն կանուխ «բոյ» ենք տալու»: Սպան, նեղացած ձևանալով, կրկին դիմում է Մոնթեին. «Ինչ է, էդքան խաթր չունե՞մ»:

-Զո չգիտե՞ս, որ «խաթրը» անարդարության արմատն է, սա մեկ և երկրորդը՝ դուն որ գնաս անպայման պիտի խմես, իսկ առավոտը ինչպե՞ս պիտի կռվիս:

Հաջորդ օրը, առանց մերոնց կորուստների, «բոյը» բարեհաջող ավարտվում է, թշնամին, հակառակը՝ մեծ կորուստներ կրելով հերթական անգամ նահանջում է: Կռվից հետո, երբ վերադառնում են գունդ, Մոնթեն կանչում է այդ սպային և ասում.

- Հիմա արդեն կարող ես գնալ տուն և շնորհավորել աղջկադ, չմոռնաս իմ անունից ալ անոր շնորհավորել ու փոխանցել այս փոքրիկ նվերը (այն զինվորականի կլոր վզով պաշտպանական գույնի շապիկ էր), քեզ տալիս եմ մեկ օր ժամանակ:

Մյուս դրվագըԿոմիտասը հիշեց՝ քահ- քահ ծիծաղելով.

- Արա, ո՛նց էին փախչում, երբ թուրքերը «ռացիայով» լսում էին Մոնթեի ձայնը, անմիջապես խառնվում էին իրար, մեկը մյուսին շտապ-շտապ հաղորդում էր. փախեք, «զերո զերոն» է գալիս (սըֆըր սըֆըր գյալդի):

Մեկ այլ դեպքի մասին Կոմիտասը նորից պատմեց՝ ծիծաղելով:

- 1992թ. հուլիսին շտաբի շենքի մուտքի մոտ ես, Մոնթեն, շտաբի պետ Ապրիկ Հայրապետյանը և Սարիբեկ Մարտիրոսյանը սպասում էինք պաշտպանական գերատեսչության ներկայացուցիչներին: Մոնթեն, ինչպես միշտ, անհանգիստ

էր: Նա չէր սիրում, երբ պայմանավորված ժամը խախտվում էր: Հանկարծ մեզ մոտեցավ միջին տարիքի մի մարդ: Նա հագել էր տոնական շորեր՝ թանկարժեք կոստյում, բաց գույնի վերնաշապիկ, փողկապը կապած, գլխին ցիլինդր, մի ձեռքին «Մարլբորո» ծխախոտի տուփն էր, որն անընդհատ ձեռքում պտտում էր, իսկ մյուս ձեռքին՝ վառիչը: Նա մոտեցավ մեզ, բարևեց և դիմեց իրեն ավելի մոտ կանգնած Մոնթեին, ում, ինչպես հասկացա, նա հաստատ չէր ճանաչում.

- Ախպեր, չե՞ս ասի՝ մարմարաշենցի կռվող տղերքին ոնց գտնեմ:

Մոնթեն հայացքով ոտից գլուխ զննեց նրան, շրջվեց դեպի մեզ և ասաց.

- Ձո, աս եվրոպացի ֆիդային ո՞վ է:

Մենք սկսեցինք քահ-քահ ծիծաղել: Ծիծաղի պատճառը ոչ միայն մարմարաշենցի կամավորական Գառնիկ Գրիգորյանի՝ Բուռզոյի հանդիսավոր տեսքն էր, այլ Մոնթեի արտահայտությունը: Երբ հանդարտվեցինք, Մոնթեն Բուռզոյի թևից բռնած ուղեկցեց մինչև մեքենա և ինձ հանձնարարեց նրան հասցնել ճարտար գյուղ: Այստեղ Բուռզոն գլխի ընկավ, որ ինքը հանդիպել է լեգենդար Մոնթեին: Այսօր էլ Մարմարաշենում Բուռզոյին անվանում են «Եվրոպացի ֆիդայի», իսկ նա դրանից չի նեղվում, ընդհակառակը…

Կոմիտասը մի դրվագի էլ անդրադարձավ: Նա պատմեց, թե ինչպես են հասել Ղարաբաղ 1993 թվականի հունիսի 1-ի ուշ երեկոյան՝ Մասիսի կապի հանգույցում մեզանից բաժանվելուց հետո: Երբ Մասիսից դուրս են եկել Մասիս-Մարմարաշեն և Երևան-Արարատ մայրուղու խաչմերուկի մոտ, բեռնատարն արդեն իրենց է սպասել՝ Մարտունու ռազմա-

ճակատի համար անհրաժեշտ բեռով բարձված: Մոնթեն որոշել է վառելանյութը խնայել: Նա «Վիլիսը» կապել է տալիս բեռնատարի ետևից և ճանապարհ ընկնում: Գիշերը, դեռ լույսը չբացված, հասնում են Սիսիանի խաչմերուկ: Բի Բի Սի-ի թղթակիցը՝ Անին, ցրտից արթնանում է և դիմում կիսարթուն - կիսաքնած Մոնթեին.

- Մոնթե, ցրտեց, ես մրսում եմ, մեքենայում հագնելու որևէ բան չունե՞ք:

Հակառակի պես մեքենայում չկար այն, ինչ ուզում էր Անին: Բոլորն էլ շատ թեթև էին հագնված:

Մոնթեն ելքը գտնում է:

- Անի, մի բան մտածեցի: Տաքանալ կուզես, կոնյակ խմե:

- Է, լավ բան ասացիր, Մոնթե:

Նա իր պայուսակից հանեց կոնյակը, հմտությամբ շիշը բացեց և շշից էլ սկսեց կում-կում խմել:

Մոնթեն սկսեց կատակել Անիի հետ:

- Անի, մյուս անգամ որ գաս Ղարաբաղ, նկատի առ, որ Հայաստանի բարձրադիր գոտիներում ուշ գիշերներին ցուրտ է անգամ ամռանը: Սա մեկ, և երկրորդը, եթե տաք շոր առնելը կմոռնաս, հետդ կոնյակ առնելը չմոռնաս:

Երկուսն էլ այլևս չքնեցին: Անին մեկ-մեկ կոնյակ էր խմում, իսկ Մոնթեն խորասուզվել էր մտքերի մեջ…

Կոմիտասի այդ օրվա ամենահետաքրքիր հիշողությունը Մոնթեի պատերազմ վարելու արվեստին էր վերաբերում.

- 1992 թվականի հունիսի 27-ին վաղ առավոտյան ադրբեջանական զորքերը ծավալուն հարձակման անցան Մարտունու պաշտպանական ճակատի ուղղությամբ: Նրանք կանոնավոր շարքերով, նոր զինվորական համազգեստներ հագած,

ավտոմատները հիտլերականների պես երկու ձեռքով գրկած Կարմիր Շուկայից մինչև Մարտունի ձգվող տարածքի ամբողջ երկայնքով գալիս էին ու գալիս: Կարծես պատերազմ չէին գնում: Նրանց ուղեկցում էին մեծաթիվ տանկեր, զրահամեքենաներ և ուղղաթիռներ:

Նախօրոք հետախուզությունը Մոնթեին տեղեկացրել էր թշնամու հավանական հարձակման մասին: Այդ պատճառով նա որոշեց հունիսի 27-ի ուշ երեկոյան գնալ Կարմիր շուկա: Տեղ հասանք ժամանակին: Առավոտյան ինձ կարգադրեց գնալ ճարտարի գինու գործարան, անցնել հետնամաս և սպասել: Ես պետք է այնպես գնայի, որ մեր «Վիլիսը» մերոնք և թշնամին նկատեին:

Այդպես էլ արեցի: Հեռվից տեսնելով Մոնթեի «Վիլիսը», մեր տղաներն էլ ավելի էին գոտեպնդվել: Իսկ թշնամուն Մոնթեի երևալը հաստատ խառնաշփոթի էր ենթարկել: Փաստորեն, Մոնթեն այդ իր մարտավարական հմուտ քայլով ոգևորել էր հայ զինվորին, իսկ թշնամուն՝ ընկճել: Այդ օրը Մարտունու ինքնապաշտպանության ուժերը տարան ծանր, սակայն փառահեղ հաղթանակ: Թշնամին շատ մեծ կորուստներով խուճապահար նահանջեց: Փաստորեն Մոնթեն հունիսի այդ հաղթանակով Մարտունու շրջանը դարձրեց այն անխոցելի պատնեշը, որը վերջնականապես շրջեց Շահումյանի և Մարտակերտի պարտությունների էջը:

Մոնթեբերդում

Մոնթեի զոհվելու օրվանից անցավ մեկ տարի: Զանգահարեց Մանուկը. «Ի՞նչ ես ասում, Ղարաբաղ չպիտի՞ գնանք»:

- Անպայման կգնանք,- ասացի ես: Այդ դեպքում, ինչպես ասաց Մանուկը, կգնանք Արցախ ոչ թե քո մեքենայով, այլ ավտոբուսով, եթե իհարկե դեմ չես:

Պայմանավորվեցինք հանդիպել հունիսի 11-ին ԵՊՀ՝ Մաշտոցի պողոտայում գտնվող հանրակացարանի մոտ, որտեղից ավտոբուսը պետք է ուղևորվեր Արցախ՝ Մարտունի: Ավտոբուսը հատկացրել էր Պաշտպանության նախարարությունը: Մանուկը նախօրոք տեղեկացված էր: Բոլոր ուղևորները գնում էին Մարտունի՝ Մոնթեի տարելիցին և արձանի բացման արարողությանը մասնակցելու: Երբ Ստեփանակերտ հասանք, արդեն կեսգիշերից անց էր: Գիշերեցինք հյուրանոցում, իսկ վաղ առավոտյան ուղևորվեցինք Մարտունի:

Անցանք Աղդամի միջով: Ամենուր զգացվում էր պատերազմի հետքը: Սակայն մի բան չվրիպեց ոչ մեկի աչքից. ծաղկած նռնենիները, գույնը որդան կարմրի՝ կաս կարմիր: Հայկական նռնենիները իրենց խաղացող գույներով դիմավորեցին մեզ: Դրանք կարծես ասում էին. վերջապես եկաք... Հասանք Մարտունի: Քաղաքն ապրում էր իր բնականոն կյանքով: Մեզ սկզբից տարան Մարտունիում տեղաբաշխված զորամասը: Այնտեղ մենք ծանոթացանք հրամանատարներ Մովսես Հակոբյանի, Նելսոն Սողոմոնյանի հետ: Նախաճաշելուց հետո, ժամը 12-ին գնացինք հրապարակ, որտեղ կանգնած էր Մոնթեի արձանը՝ սպիտակ պաստառով

ծածկված: Կատարվեց բացման արարողությունը: Ամենուրեք զգացվում էր հաղթող ազգի ոգին:

Մոնթեի տարելիցը նշվեց բնության գրկում, «Սպիտակ» աղբյուրի մոտ: Շատ մարդիկ էին հավաքվել, նրանց մեծ մասը զինվորականներ էին: Խոսակցության թեման Մոնթեն ու պատերազմն էին: Հաղթանակած բանակի զինվորը դեռ հանդարտված չէր: Բոլորը հույս ունեին, որ կփոխվի իրավիճակը և ավարտին կհասցնեն կիսատ թողած ազատագրումը...

Այդ օրը Մանուկի հետ գիշերեցինք Մարտունու զորամասում՝ զինվորական մահճակալների վրա: Լուսադեմին արթնացանք թռչունների ծլվլոցից: Գույնզգույն փետուրներով երկու թռչնակ նստած էին բաց պատուհանի փեղկին և իրենց գեղեցիկ ձայնով մեզ կարծես բարի լույս էին ասում, ողջունում մեր գալուստը ազատ Արցախ: Իրենք այնքան անվախ և ազատ էին զգում իրենց, որ մենք զարմացել էինք:

Նրանց «համերգը» մոտ 5-6 րոպե տևեց: Զարմանալի երևույթ էր...

Երևան վերադառնալու ճանապարհին եղանք նաև Շուշիում: Անգամ կիսաքանդ վիճակում Շուշին վեհորեն բազմած էր իր բարձունք-գահին...

Ամենուր հայոց խոսքն էր հնչում…

Մաս II
Ժամանակը հուշում է

Մոնթեի կիսանդրին և նկարը

2010թ. մայիսին, Շուշիի ազատագրման օրը, ընտանյոք հանդերձ գնացինք Երևանի «Հաղթանակ» զբոսայգի, մոտեցանք այն ծառուղուն, ուր տեղադրված է Մոնթեի կիսանդրին: Հուշարձանին մոտենալը գրեթե անհնար էր՝ այնտեղ կանգառած ավտոմեքենաների պատճառով: Մի կերպ մոտեցանք և ծաղիկները դրեցինք հերոսի կիսանդրու պատվանդանին ու ետ դարձանք: Այդ պահին մեր կողքով անցավ միջին տարիքի մի տղամարդ: Նա կտրուկ կանգ առավ, ուշադիր նայեց Մոնթեի կիսանդրուն, այնուհետև հայացքն ուղղելով դեպի կանգ առած մեքենաները, քթի տակ ինչ որ հայհոյախառն արտահայտություն արեց և հեռացավ ...: Ակամա մտածեցի, որ թե՛ մենք, թե՛ այդ անծանոթը մեքենատերերի մասին նույն եզրակացությունն էինք արել. «Ինչպիսի լկտիություն»…:

…

2011թ. մարտի կեսին գյուղի հարևաններիս առաջարկեցի մեր փողոցի դիմաց՝ ազատ հողատարածքում ծառատունկ անել: Որոշեցինք և գործի անցանք:

Փաստորեն, այդ օրը հիմնվում էր մի փոքրիկ ծառուղի:

Ծառուղին ծառուղի, սակայն ժամանակ առ ժամանակ, ինձ մի միտք էր անհանգստացնում, մանավանդ, երբ գալիս էի Նոր Կյուրինի իմ տուն և Մոնթեի նկարին «բարլուս» ասում: Հետո ի՞նչ, «բարլուս» ու վե՞րջ, մտածում էի: Միգուցե այս տարածքում նրա հիշատակը հավերժացնող աղբյուր-հուշարձա՞ն կառուցենք:

Ամեն անգամ ծառերը ջրելիս, կարծես, դրանք ինձ հուշում էին. գուցե տարիներ առաջ Մոնթեի «Տեղը կհավնիմ, շատ կհավնիմ, ժամանակը չէ, հետագային» արտահայտության «հետագայինը» այսո՞ր է:

Նույն տարվա ապրիլի վերջին զանգահարեցի Մանուկ Հովհաննիսյանին և նրան հայտնեցի Մոնթեի հիշատակին առնչված իմ մտածումները: Խոսքը, իհարկե, աղբյուր-հուշարձանի կառուցման մասին էր: Մանուկին ասացի՝ կա համապատասխան ազատ հողատարածք, նա լավ ծանոթ էր տարածքին, և նրա պատասխանը հակիրճ ու միանշանակ դրական էր:

Արդարև՝ լեգենդ դարձած հայ հերոսի հիշատակի հավիտենացումը ապրողներիս պարտքն է …

Մենք պայմանավորվեցինք նախ և առաջ տեղեկացնել Մասիսի շրջանում ապրող Մոնթեի թիկունքային ու զինակից ընկերներին՝ Կարլեն Միքայելյանին, Հովիկ Հայրապետյանին ու Հրայր Կարապետյանին և իմանալ նրանց կարծիքը:

Կարլեն Միքայելյանը այդ ժամանակ արդեն ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ղեկավարն էր:

Հրայր Կարապետյանը «Մոնթե Մելքոնյան» բարեսիրական հասարակական կազմակերպության ծրագրերն էր ղեկավարում:

Հովիկ Հայրապետյանը գնդապետ էր և ծառայում էր հայկական բանակում:

Նախնական պայմանավորվածությունը ձեռք բերելուց հետո որոշվեց մոտակա օրերին հանդիպել Նոր Կյուրին գյուղում:

Հանդիպումը կայացավ 2010թ. մայիսի երրորդ կիրակի: Հանդիպմանը ներկայացել էին Մանուկ Հովհաննիսյանը և Կարոլեն Միքայելյանը: Հարկավոր էր նախ և առաջ տեսնել ազատ կարգավիճակ ունեցող այն տարածքը, որտեղ հնարավոր էր իրականացնել իմ մտահղացումը: Տարածքի մոտ 80%-ը Նոր Կյուրին գյուղի սահմանագծում է՝ հին ու նոր թաղամասերի միջև, իսկ 20 %-ը՝ սահմանագծից դուրս և պատկանում է Նոր Խարբերդ համայնքին: Մանուկը հիշեց Մոնթեին տարածքից տնամերձ հատկացնելու վերաբերյալ 1991թ. իր առաջարկը:

Թե՛ Մանուկը, և՛ թե Միքայելյանը հավանություն տվեցին տեղի ընտրությանը. հողատարածքի ընդարձակությունն ու դիրքը նրանց հուշեց այլ մտահղացում:

Հողի ընդարձակությունը հնարավորություն կտա հիմնելու բավականին մեծ այգի-պուրակ, կառուցելու աղբյուր-հուշարձան, թանգարան-գիտական կենտրոն, աշտարակ-դիտարան և, իհարկե, Մոնթեի հուշարձանը:

Քննարկման արդյունքում որոշվեց իմանալ համայնքների ղեկավարների կարծիքը և դրական արձագանքի դեպքում դիմել «Մոնթե Մելքոնյան» բարեսիրական հասարակական

կազմակերպության ղեկավար, Մոնթեի զինակից և մտերիմ ընկեր Ալեք Ենիգոմշյանին՝ առաջարկը քննարկելու համար:

Հաջորդ օրն իսկ հանդիպեցի Նոր Կյուրին գյուղի երիտասարդ համայնքապետ Գևորգ Օհանյանի և Նոր Խարբերդ գյուղի համայնքապետ Կամո Կակոյանի հետ: Նրանց հայտնեցի մեր մտադրության մասին: Նրանք առանց երկմտելու և մեծ հոժարակամությամբ այդ գործին օժանդակելու պատրաստակամություն հայտնեցին:

Հանդիպում

«Մոնթե Մելքոնյան» ՀԿ ղեկավար Ալեք Ենիգոմշյանի հետ իմ և Մանուկի հանդիպումը կայացավ Երևանում՝ Հրայր կարապետյանի միջոցով: Ալեքին թե՛ ես, և թե՛ Մանուկը ծանոթ չէինք:

Նա ոչ միայն ԱՍԱԼԱ-յի մարտիկներից է եղել, այլև նրա գաղափարախոսներից: Նա վիրավորվել էր Ժնևի հյուրանոցներից մեկում գործողությանը նախապատրաստվելիս:

Հրայրը նրա հետ մեզ ծանոթացնելուց հետո անցավ մեր գալու բուն նպատակին: Ակնհայտ էր, որ Ենիգոմշյանը համեստ, զրուցակցին լսելու մեծ ունակություն ունեցող հավասարակշռված անձնավորություն է: Նա ուշադիր լսեց նաև ինձ ու Մանուկին: Մեր հղացած գաղափարը նրա սրտովն էր: Նրա ղեկավարությամբ իրականացվում են ծրագրեր՝ նպատակաուղղված ԼՂՀ և ՀՀ սահմանամերձ շրջանների զարգացմանը: ՀԿ-ն օժանդակում է առողջական խնդիրներ ունեցող երեխաներին:

Հանդիպմանը ներկա էր նաև Մարտիրոս Ժամկոչյանը: Գաղափարը բոլորի սրտովն էր, սակայն տեղի ընտրության հարցում որոշակի թյուրըմբռնումներ կային, որոնք հաղթահարվեցին քննարկումից հետո՝ հիմք ընդունելով հետևյալ հանգամանքները՝

1. Նոր Խարբերդի և Նոր Կյուրինի գյուղերի անվանումների պատմահիշողական նշանակությունը՝ Խարասար անվանումով Մոնթեի հայրական պապի գյուղը պատմական Խարբերդում էր, իսկ Կյուրին (Գյուրուն) բնակավայրը պատմական Սեբաստիա նահանգում էր: Սեբաստիայում էր նաև Մարզվան գյուղաքաղաքը: Այնտեղից էր Մոնթեի մայրական պապը:

2. Ազգի ինքնաճանաչության նպատակով, հայի ինքնության և պետականության նվիրյալներին՝ անցյալից մինչև մեր օրերը, ինչպես նաև հայերի քաղաքակրթական ավանդը օտարներին հավաքականությամբ և առարկայորեն ներկայացնելու՝ տարածքի մեծության ընձեռած հնարավորությունները:

3. Մոնթեի պատասխանը Մանուկի 1991 թ. արած առաջարկին. «Է, տեղը կհավնիմ, շատ կհավնիմ սակայն ժամանակը չէ, հետագային …»:

4. Մոնթեի հրամանատարությամբ մարտնչած Մասիսի շրջանի կամավորականները, ինչպես նաև շրջանի հասարակության, մասնավորապես Մոնթեին անձամբ ճանաչողների՝ այդ մտահղացումը հավանությամբ ընդունելը: Այն ողջունել են նաև նրա զինակից և թիկունքային մտերիմ ընկերները:

5. Հողատարածքի՝ Մեծ հայքի Միջնաշխարհ Արարատյան դաշտում և Երևանի սահմանագծից ոչ հեռու լինելը (ընդամենը 6 կմ է):

6. Հիանալի տեսադաշտի առկայությունը և զբոսաշրջային մերձավոր երթուղիների անցման հանգամանքն ու երկարատև տաք կլիման:

Քննարկեցինք ապագա հուշահամալիրի կառուցմանն առնչված տարբեր խնդիրներ: Ծրագրի հավանական իրականացման համար նպատակահարմար համարվեց, որ այն ունենա առանձին բանկային հաշվեհամար, համացանցային կայք և ծրագրի իրականացման համար ստեղծվեն գրասենյակային ու այլ պայմաններ:

Հանդիպումն ավարտվեց հետևյալ եզրակացությամբ. բոլոր խնդիրները լուծելի են: Իսկ Ալեքը խոստացավ, որ կիմանա նաև Մոնթեի ընտանիքի կարծիքը և կտեղեկացնի բոլորիս:

Որոշում

Համաձայն պայմանավորվածության, Ալեք Ենիգոմշյանը 2010թ. հունիսի սկզբին դիմեց Մոնթեի ընտանիքի անդամներին՝ Մարգար Մելքոնյանին և Սեդա Գպրանյան-Մելքոնյանին՝ այս գաղափարի իրականացման վերաբերյալ նաև նրանց կարծիքը իմանալու համար:

2010 թ. հունիսի վերջին Ալեքից տեղեկացանք, որ Մոնթեի ընտանիքը ողջունել է վերոհիշյալ գաղափարը և հավանության արժանացրել:

Աջակցության ակնկալիքով ՀՀ պաշտպանության նախարարություն դիմելու ժամանակն էր:

Նույն օրն ևեթ համապատասխան գրություն հղվեց ՀՀ ՊՆ Զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-գնդապետ Յու. Խաչատուրովին, և շուտով ՀՀ կառավարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության առաջարկով և Արարատի մարզպետարանի ներկայացմամբ, ընդունեց հուշահամալիրի կառուցման համար անհրաժեշտ հողատարածքի հատկացման վերաբերյալ 10 հունիսի 2011 թվականի N793-Ն և N794-Ն որոշումները: Ղեկավարվելով այդ որոշումներով, ՀՀ Արարատի մարզի Նոր Կյուրին և Նոր Խարբերդ համայնքները անհատույց /անժամկետ/ օգտագործման իրավունքով 2.92 հա հողատարածք հատկացրին «Մոնթե Մելքոնյան» ՀԿ-ին:

Որոշ ժամանակ անց ճարտարապետ Տիգրան Ազատյանը կազմեց «Մոնթե Մելքոնյանի անվան թանգարան - հուշահամալիրի կառուցում» ծրագրի փաթեթը և այն քննարկման ներկայացվեց ՀԿ-ին ու նախաձեռնող խմբին: Ծրագիրն արժանացավ հավանության: Ալեք Ենիգոմշյանը պատրաստակամություն հայտնեց գումար հատկացնել ծրագրի իրականացման մեկնարկային փուլի աշխատանքների իրականացման համար: Այդ առնչությամբ անհրաժեշտ էր կատարել ծրագրի իրականացման համար պահանջվող ֆինանսական միջոցների խոշորացված հաշվարկը՝ իմանալու ընդհանուր գումարի չափը: Այն նույնպես իրականացրեց Տ. Ազատյանը: Ունենալով թե՛ ծրագիրը, և՛ թե ծրագրի համար պահանջվող գումարի չափը, մեկ անգամ ևս այն դարձավ քննարկման առարկա:

Արդյունքում, ծրագրի իրականացումը հնարավոր դարձնելու նպատակով, որոշվեց ստեղծել հիմնադրամ՝ ՀԿ-ի և նախաձեռնող խմբի բանավոր համաձայնությամբ:

Այն անվանվեց «Մոնթե Մելքոնյան թանգարան» հիմնադրամ: Հիմք ընդունելով «Մոնթե Մելքոնյան» ՀԿ-ի և «Մոնթե Մելքոնյան թանգարան» հիմնադրամի հայտերը, ՀՀ կառավարության 23.08.2012 թվականի N 1072-Ն որոշման համաձայն 2.92 հա հողատարածքը, սահմանված կարգով և անհատույց /անժամկետ/ օգտագործման իրավունքով համայնքները հատկացրին հիմնադրամին:

Ծրագիր

Անցնելով պատմական երկար ճանապարհ, հայ ժողովուրդն ստեղծարար աշխատանքով գեղակերտել է իր բնատարածքը, ստեղծել մեծարժեք կոթողներ ու մշակութային հուշարձաններ, բազմատեսակ համապիտանի արժեքներ: Միաժամանակ, հարկադրաբար նա պայքարել է իր ստեղծարարության արդյունքներին աչք դրած օտար հափշտակողների, իր բնօրրանը բռնատիրող զանազան զավթիչների դեմ:

Ժամանակներն անցնում են, սակայն բարքերը քիչ են փոխվում: Մեր ժողովրդի ազնիվ զավակները ևս մի ազատամարտ մղեցին ընդդեմ բռնակալների նաև նոր ժամանակներում, ընդհուպ մեր օրերում՝ 2016 թվականի ապրիլին…

Ձեռքս գրիչ առնելիս ձգտել եմ, իմ հնարավորության սահմաններում, նաև ներկայացնելու հայոց ազնիվ զորականներից Մոնթեի՝ զարգացած ու հզոր հայրենիք ունենալու մտո-

ռումները: Դրանք ուսանելի են. իր հողն ու հայրենիքը սիրող, ազնվական, իր անձնական շահը պետական շահից չվերադասող ամեն մի հայի համար:

Այս գրքի ընթերցողները թող սույն տողերն ընդունեն որպես տեքստի նախաբան:

ՀՀ ազգային հերոս և Արցախի հերոս Մոնթե Մելքոնյանի, նրա զինակիցների ու մարտական հետնորդների օրինակով նոր սերնդի հայրենասիրական դաստիարակության՝ նշված խնդիրների լուծմանն արժանվույնս նպաստելու հեռամետ նպատակով ստեղծված «Մոնթե Մելքոնյան թանգարան» հիմնադրամը սկսել է «Մոնթե Մելքոնյանի անվան թանգարան - գիտական (գիտաճանաչողական) կենտրոնի կառուցում» ծրագրի՝ հողատարածքի բարեկարգման, կառուցապատման և հողօգտագործման աշխատանքները:

Հիմնադրամի նախաձեռնությամբ հուշահամալիրի տարածքում 2015 թվականի ապրիլին և 2016 թվականի մարտին իրականացվեց ծառատունկ. 0.81 հեկտարի վրա արդեն փթթել են տարբեր ծառատեսակներ ու խաղողի արմատակալներ: Այդ աշխատանքներին զուգընթաց, իրականացվեց հուշահամալիրի տարածքից խմելու ջրագծի տեղափոխումը՝ Արարատի մարզպետարանի օժանդակությամբ (մարզպետ՝ Արամայիս Գրիգորյան):

2017 թվականի հոկտեմբերին տեղադրվեց Մոնթեի անունը հավիտենացնող խաչքար-հուշակոթողը: 2018թ. բարեկարգվեց կոթողի շրջակայքը:

Այս աշխատանքների իրականացմանը մասնակցեցին մեծաթիվ անձինք, ովքեր ցանկանում են Հայաստանը տեսնել

զարգացած, ուժեղ ու ապահով: Իմ համոզմամբ, նրանք հայոց սուրբ պատգամների կրողներն են:

Խաղողի արմատակալները և տնկիների մի մասը հիմնադրամին հատկացվեցին ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար Գառնիկ Պետրոսյանի միջնորդությամբ:

Դրանք մեծ սիրով ու պատրաստակամությամբ տրամադրեց Արտավազդ Ղազարյանը՝ Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղից:

Իսկ բնապահպանության նախարարության կենսառեսուրսների կառավարման գործակալության պետի տեղակալ Հարություն Գալոյանի միջնորդությամբ, հիմնադրամին նույնպես մեծ սիրով դեկորատիվ տնկիներ տրամադրեց Համլետ Ղուլոյանը՝ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղից:

Ծառատունկին մասնակցեցին Մոնթեի հրամանատարությամբ մարտնչած «Հայդուկ» ջոկատի տղաներից Հովիկ Հայրապետյանը (հրամանատար, այդ ժամանակ ՀՀ ոստիկանության զորքերի գնդապետ, ներկայումս՝ թոշակառու) և Մինաս Գևորգյանը (նշված ջոկատի ազատամարտիկ), այդ ժամանակ ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ղեկավար Կառլեն Միքայելյանը (ներկայումս թոշակառու) և հասարակական ակտիվ գործիչ Վահագն Չախալյանը (Ջավախքից), ինչպես նաև համայնքի գործուն ներկայացուցիչներ Վազգեն Սիանոսյանը, Ավետիք Գուրոյանը, Գուրգեն Եգորյանը, Նադիր Մստոյանը, Աբրահամ Օհանյանը, Հարութ Կարապետյանը, Էդիկ Սարգսյանը, Աշոտ և Խաչատուր Կարախանյանները, Զոհրաբ Մխիթարյանը, Սարգիս Ավագյանը, Գարուշ Տոնոյանը, Մյասնիկ Գրիգորյանը և Սեյրան Հարությունյանը,

իսկ Մարզպետ Միերյանը աջակցեց շրջաններից տնկիների տեղափոխման հարցում:

Մոնթեի հիշատակը հավերժացնող խաչքար - կոթողը կանգնեցվեց հայտնի ճարտարապետ Տիգրան Ազատյանի մշակած նախագծով: Նա է մշակել տարածքի բարեկարգման նախագիծը ու ծրագրով նախատեսած կառույցների էսքիզները: Կոթողի բազալտե տարրերը հատկացրեց Մարմարաշենի տարածքում գործող քարամշակման արտադրամասի սեփականատեր Հայկ Մուրադյանը, իսկ տուֆե խաչքարը և հավերժության քանդակը կերտեց հայտնի քանդակագործ Արտակ Համբարձումյանը: Երկրորդ, իմ նախկին ուսանող Գառնիկ Ֆահրադյանի ձեռակերտած և ընկերոջը՝ Պետրոս Գևորգյանին նվիրված խաչքարը, Պետրոսի առաջարկով, ընդգրկվեց կոթողում՝ ամբողջացնելով այն:

Տիգրան Ազատյան

Ծառատունկ իրականացվեց նաև 2019 թվականին: Տնկիները անհատույց նվիրատվությամբ հատկացրին Գարուշ Հակոբյանը՝ Արարատի Մարզի Նարեկ գյուղի համայնքապետ և Էջմիածնի պետտնկարանի ղեկավար Արտյուշ Հակոբյանը: Ինչպես նախկինում, այս անգամ էլ տնկիները հատկացվեցին ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար

Գառնիկ Պետրոսյան

Գառնիկ Պետրոսյանի միջնորդությամբ: Մասնակցեցին Մարմարաշենի և Նոր Կյուրինի աշակերտները, Մոնթեի թիկունքային և մարտական ընկերները՝ Պետրոս Գևորգյանը, Մինաս Գևորգյանը, Մանուկ Հովհաննիսյանը, Արամայիս Մանուկյանը և այլ անձինք:

Ինչո՞ւ այս տեքստում գրվեցին շատ ազգանուններ: Ես այսպիսի սկզբունքով փորձեցի հարգանքի տուրք մատուցել նրանց՝ իրենց անհատույց, թեկուզ և փոքր առարկայական ներդրումների ու աշխատանքների համար: Թող սույն գրքի ընթերցողը նույնպես եզրակացություն անի և ջանա հոգուտ բարի և ազգաշահ գործերի:

Մաս III
Ազատամարտի Ազնվականը

Հանդիպում Գուրգեն Մելիքյանի հետ

…Արցախյան ազատամարտի ու ԼՂՀ վերաշինության երախտավոր, ԵՊՀ-ի արևելագիտության ֆակուլտետի դեկան Գուրգեն Մելիքյանի ծննդյան 80-ամյակը շնորհավորելու նպատակով, 2016թ. դեկտեմբերի վերջին եղանք Մայր բուհում:

Աշխատասենյակում խորասուզված էր հայերենի բառաշխարհում: Մերձավոր լեզուներից կատարված փոխառությունների նոր հիմնավորումներ ու փաստարկներ, էական ճշտումներ ներկայացրեց, բավարարելով մեր հետաքրքրասիրությունը: Ամենաերեց համալսարանականին շնորհավորելով հոբելյանի առթիվ, հայտնեցինք «Մոնթե Մելքոնյան թանգարան» հիմնադրամի հուշահամալիր ստեղծելու, նաև սույն գրքի հրատարակման մասին: Չէ՞ որ կրթության ու գիտության ազնիվ մշակն իր հայրենասիրական գործունեության բերումով մտերմացել էր Մոնթեի հետ:

Տեղեկանալով մոնթեականությունն առավել հանրայնացնելու, նոր սերնդի ոգեղեն կրթությանը ծառայեցնելու մեր ծրագրին՝ մի պահ խոհականորեն լռեց, վերհուշից հետո խոր

շունչ քաշեց, կյանքը ժամանակի խորքով տեսանող պատգամախոսի կերպափոխումով ասաց.

- Մեր ամեն ազատակռիվ յուրահատուկ հերոսներ է ունեցել: Մոնթեն Արցախյան ազատամարտի ամենաերևելի ազնվականն էր: Հիմա քիչ են այդպիսիք, բայց այդ քիչը նյութամիջուկի հյուլեի հզորությամբ, կյանքն սկզբնավորող ու հավիտենացնող բջիջի պես հավասարակշռում է մնացյալ շատին: Շատ, որն զբաղված է միայն սպառելով, տարված է նյութապաշտությամբ, հիվանդ է հարստանալու մոլուցքով…

Պատմության խորշակը տարել է ու ցրել մեր ազնվականությանը: Այն կամ իր կյանքն էր նվիրաբերում հայրենյաց օրահասական կռիվներում, կամ հետագա նվաճյալ հայաստանից տարագրվում՝ կամա-ակամա այլ երկրների ու ժողովուրդների վերելքին ծառայում, մեծանուն արևելագետ Ն. Մառի բնորոշմամբ՝ «Ազնվացնելով նոցա արյունը իր ազնիվ արյամբ, բարգավաճելով նոցա հասարակական կյանքը իր ճարտար ձեռքերով»:

Բայց հայ ժողովուրդն անընդհատ նոր ազնվականություն է ծնել-ձևավորել՝ հանուն ինքնապահպանության:

Մոնթեն հայրենանվեր ազնվականության շառավիղ էր և եկավ արտերկրից իր ազնիվ հայրենակիցներին միանալու, մեր ազատամարտին ծառայելու: Ցավոք, նա նահատակվեց, բայց անմահացավ:

Նրա ոգեղենության կրողներն են այսօրվա մեր երիտասարդները, 2016թ. ապրիլյան քառօրյա կռվի հայ քաջորդիները: Այո, Մոնթեի բարեբարո էությունը, ազնվագույն կերպարը պետք է դառնան նոր սերնդի ապրելակերպի ու գործելակերպի կողմնորոշիչ, որպեսզի ապրեն հայն ու Հայաստանը՝

իր Արցախով, իր հեռավոր ու մերձավոր համայնքներով, ետ առնելիք Մեծ Հայքով…

Մոնթեի՝ ազնվագույն զինվորի ու հրամանատարի կերպարը Գ.Մելիքյանն ամբողջացրեց իրենց հանդիպումների ուշագրավ դրվագներով.

- Գանձասարում էինք, 1992 թվականն էր, օգնություն էինք տարել: Երբ Մոնթեն իմացավ, որ մենք այնտեղ ենք, եկավ: Լուսանկարվեցինք: Այդ օրն անգլիացի մի թղթակցի հետ զրույցում Մոնթեն ասաց. «Եթե կորցնենք Արցախը, կշրջենք մեր պատմության վերջին էջը»: Չեմ կարծում, թե որևէ մեկն այդպիսի կարգախոս ունենար:

- Մոնթեն տեսակ էր: Զինվորագրվելն ուսադիրների հետ կապ չունի: Նա ինձ համար զինվոր էր, հրաշալի հրամանատար, մաքրամաքուր ընկեր: Երբ նյութական օժանդակություն էինք տանում, անմիջապես կանչում էր ազատամարտիկներին ու ասում, որ Մելիքյանն այսքան գումար ու օգնություն է բերել: Իմ կարծիքով, քանի Մոնթեի տեսակը կա, մենք կհարատևենք:

- Գնացել էի Մաճկալաշեն, այնտեղի ջոկատի տղաներին օգնելու: Իմացա, որ գյուղի ջոկատի տղաներից մեկը՝ Կոմիտասը զոհվել է, բարձրացա գերեզմանոց, որը Ղոջարից թուրքերի անմիջական նշանառության տակ էր: Իմ ուսանող Արշակի հետ էինք: Մոնթեն գալս իմացել էր ու եկել տեսնելու: Ասել էին, որ գերեզմանոց ենք բարձրացել, շատ էր զայրացել: Եկավ, գոռաց, ասում էր. «Մեռնիլ կուզե՞ս, կուզես հերոսանա՞լ, մեզ մեռելներ պետք չեն, ողջեր են պետք» :

-Մի օր էլ դիրքերում էինք: Կրակոցի ժամանակ ուզես-չուզես կուչ ես գալիս: Ականանետերով կրակում էին, ժպտալով

ասաց. «Որտեղ որ ընկնում է, դրանից ավելի հեռու չի գալիս, մի վախեցիր»:

-Մի անգամ Մոնթեն ասաց, «Ընկեր Մելիքյան մեր ժողովուրդը իր 5%-ով է ապրում, ավելին պետք չէ, այդ 5%-ը ճիշտ ուղու վրա լինի՝ մենք կհաղթենք»: Այո՛, մենք հաղթեցինք որովհետև այդ 5%-ը կար: Մոնթեն այն տեսակն էր, որ մեր երկրից ոչինչ չեր ուզում, միայն ուզում էր տալ երկրին: Երբ մարդ ուզում է տալ, անպայման մտածում է՝ ինչպես տա, իսկ տալ չցանկացողը միշտ պատճառներ կհնարի:

-Երբ գնացել էինք Մոնթեի աճյունը բերելու,Մարտունու բնակիչները չէին տալիս, ասում էին՝ Մոնթեն պիտի այստեղ մնա: Ա՛յ, այդքան էին սիրում, Մոնթեն ժողովրդին էր պատկանում:

…

Ամեն տարի Մոնթեի թե՛ ծննդյան, և թե՛ զոհվելու օրը Գուրգեն Մելիքյանին տեսնում ենք Եռաբլուրում: Նրա ներկայությունը՝ իր պատկառելի արտաքինով, համեստ ու առաքինի կեցվածքով ներկաներին մոնթեականության նոր շունչ է հաղորդում: Շատերն են ուզում նրանից Մոնթեի մասին նոր խոսք լսել, նրա հետ խնկարկել Մոնթեի շիրիմը, ոգեկոչել հիշատակը, ինչու չէ, լուսանկարվել այդ վեհ անձնավորության հետ:

Այսպես խոսեց Սամվել Մուրադյանը

(բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ հայ գրականության ամբիոնի վարիչ)

- Գիտե՞ք, Մոնթեի կինը՝ Սեդան, մեր համալսարանում է բարձրագույն կրթություն ստացել, այնուհետև պաշտպանել թեկնածուական թեզը: Նա սփյուռքահայ այն ուսանողներից էր, ովքեր լիարժեք տիրապետում էին արևմտահայ բանաստեղծների գրական ժառանգությանը: Մեր բանիմաց, բարեհոգի ու հմայիչ ուսանողուհիներից էր:

Իսկ մեր հպարտություն Մոնթե Մելքոնյանին հանդիպելու պատիվն ինձ վիճակվեց պատահաբար, այն էլ մեկ անգամ: Բայց նրա անհատականությունն այնպես տպավորեց, որ երբեք չեմ մոռանում այդ դիպվածային կարճատև հանդիպումը, ավելին՝ վերհուշս միշտ ավելացնում է կենսաուժս, հոգիս ցնծում է հայի հերոսականությամբ…

Հանկարծ զանգահարեց և շտապ իր աշխատասենյակ կանչեց ամբիոնի վարիչը՝ մեր երջանկահիշատակ Հրանտ Թամրազյանը (բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր ԵՊՀ հայ գրականության ամբիոնի վարիչ, ծանոթ.՝ հեղինակի):

- Խնդրում եմ սպասել այստեղ, կարևոր մեկն է գալու, պայմանավորված ենք: Ինձ էլ ռեկտորը կանչեց, երևի շատ

չեմ ուշանա, ընդունիր մինչև գամ, - հապշտապ ասաց նա ու դուրս եկավ:

- Բայց ո՞վ է այդ մեկը.

- Կճանաչես:

Ում դիմավորելու էի, երբեք չէի տեսել: Բայց արդեն շատերն էին խոսում նրա մասին: Գիտեի, որ Մոնթեն ԱՍԱԼԱ-յի տղաներից է, Մարտունու պաշտպանական ուժերի հրամանատարը, թշնամու ահ ու սարսափը:

Թամրազյանի աշխատասենյակ մտավ ջինս հագած մի անձնավորություն: Մազերը մի քիչ խառնիխուռն էին, մորուքը՝ կարճ: Լուսանկարից ճանաչեցի:

- Բարև, ո՞ւր է Թամրազյան,- հատու և հնչեղ ասաց նա՝ խոսքին զուգընթացելով ակնթարթային, բայց ամուր ձեռքսեղմումը:

- Մարդկային ջերմության հետ այդ ձեռքսեղմումից ուժ զգացի, մարզված մարդու ավյունն ու կորովը փաստող ուժ, որ շատ էր պատշաճում նրա հագուկապին, ձիգ կեցվածքին:

- Շուտով կգա,- ասացի ու առաջարկեցի նստել, ինքս հարցնելով՝ ո՞նց եք, ե՞րբ եք եկել:

- Է, լավ եմ, նոր եկած եմ, - դարձյալ հատու և կարճ ասաց նա՝ սպասողական հայացքն ինձնից դեպի դուռը դարձնելով: - Շատ չի պիտի մնամ, շուտ պիտի երթամ,- դեռ կիսահաղորդ անծանոթներիս խոսքը գործնական հուն տարավ:

Զգացի, որ հետամուտ է իր անելիքին, նախատեսածին: Խոսելակերպն ու շարժուձևը մեկ թվացին կիրթ մտավորականի, մեկ՝ եռանդուն, անհանգիստ մարդու: Իսկ աչքերը մեծ մտապաշար, աշխարհիտեսածություն էին արտահայտում, վստահական համոզմունքի առկայություն, ինչպես հասկացա մեր սիրե-

լի Գուրգեն Մելիքյանի հետ եկած Հրանտ Թամրազյանի ու իր զրույցին ներկա լինելով:

- Ի՞նչ են ուզում այդ ազերի-թուրքերը,- Մոնթեին հարցրեց Թամրազյանը:

- Է, անոնք մատները խոթեր են մեր հողերու մեջ, կուզեն իրենցը դարձնել: Հարկ է ադ մատները կտրել արմատեն, հողն ազատել…

Լսում էի Մոնթեին ու զուգընթաց հիշում հայոց ցավի ու ցասման երգիչ Սիամանթոյի «Ես երգելով կուզեմ մեռնիլ» բանաստեղծությունը.

«… Երիտասարդ էր: Աչվրներուն կայծը երկնքի աստղերեն էր որ կծորեր,

Եվ հասակին ձևերը մարմարներու զորություններեն էր կերտված…

Մտածումը մարդկային արդարության էջերեն հստակորեն ջահավառյալ…

Ճակտին վրա իրենց ցավի և բարության ծաղիկներն ունեին»:

Գիտնական-դասավանդողներիս հետաքրքրում էր մեր ու թշնամու ուժերի հարաբերակցությունը, մտահոգում եկվոր թուրքի կողմից հարկադրաբար մեր դեմ կռվող հազարամյա հարևան ժողովուրդների՝ լեզգիների, թալիշների, ավարների, այլազգիների իզուր զոհվելու իրողությունը…Չէ՞ որ քաջերն են կռվում, մեկմեկու կործանում և դրանից օգտվում է պատերազմի հրձիգը, այս դեպքում՝ Այսրկովկասին օտար թուրքը… Մոնթեն նաև արևելագետ գիտնական էր, հետաքրքրված էր Կովկասով.

«Մտերմաբար քով քովի, Հայրենիքին տառապանքեն կիտսեինք,

Իր ծանրախոհ գլուխը սգավոր կիսաստվածի մը արյունոտ սրտին կնմաներ…

Նայվածքները նայվածքներուս մեջ, նույն ճակատագրին խորհրդանիշ փնտրեցինք…

Եվ մեր տրտում ժպիտները հոգիե հոգի մեղմորեն ճառագայթվեցան»:

Սիամանթոյական այս հոգեվիճակով ու փոխըմբռնումային զրույց էր, և այն Մոնթեն դարձյալ տարավ օրվա անհրաժեշտությունների հունով. Մելիքյանին ու Թամրազյանին դիմեց հեռադիտակներ և ճակատին անհրաժեշտ այլ բաներ հայթայթելու հարցով: Նա գործնական էր, դրսում իրեն սպասող ավտոմեքենա կար. Շտապում էր իր առաքելությունը կատարելու, ճակատագրին ընդառաջ.

«Այս իրիկուն՝ հավատքի և հրաժեշտի իրիկուն է, ընկեր,

Երիվարս թամբած եմ արդեն՝ և կյանքի ու կռվի տենդեն՝ դուռիդ առջև կվրնջե…

… Ես որբ մըն եմ և ըմբոստ մը, մնաս բարով, կորուսյալներս փնտրելու կերթամ…

Քու երգերեդ երգ մը տուր ինձ, երգ մը, ես երգելով կուզեմ մեռնիլ…»:

Մոնթեի պես վառ անհատականությունն իր կերպարով, ոչ տնական զրույցով յուրովի ամրապնդեց կյանքի ու գրականության սերտ կապի մեր մտասևեռումը. Հայ ժողովուրդը հոգեծնել է իր գրողներին, նրանք էլ՝ իրեն պաշտպանող զորական ուժը՝ սկսած մեր առաջին ազատամարտիկներից մինչև Արցախյան պատերազմի ու 2016թ. ապրիլյան քառօրյա կռվի կամավորականները:

Հայրենյաց ճակատագրի համար բոլորն են տագնապում, առավել ևս՝ զգայուն արվեստագետները, ինչպես Վահան Տերյանը, զենքով անգամ մարտաշարք մտած Եղիշե Չարենցը, ապա ոտքի է ելնում ցասման ոգով համակված զորական ուժը, որի մարմնավորումներից է Մոնթե Մելքոնյանը:

Տարիներ առաջ, երբ Գուրգեն Մելիքյանի նախաձեռնությամբ և իր ամերկահայ ընկերոջ՝ Վահե Կազանչյանի նյութական օժանդակությամբ Բերձորում Հաղթանակի այգի հիմնեցինք Մոնթեի անվամբ, որոշեցինք հուշաքարին դրոշմել հերոսի հայտնի խոսքը. «Եթե կորցնենք Արցախը, կշրջենք մեր պատմության վերջին էջը»: Երևան-Ստեփանակերտ մայրուղուն հարող այգետարածքը ծառատնկեցին Երևանի և Ստեփանակերտի պետհամալսարանների ուսանողներն ու դասախոսները:

Ինչպես միշտ, Մելիքյանը իր տարերքի մեջ էր՝ նրա շուրթերից, արդեն որերորդ անգամ, նորից հնչում է սփյուռքահայ բանաստեղծ Լեւոն Զավեն Սյուրմելյանի ԱՍԱՑՈՒԱԾՔ ԾԱՌ ՏՆԿԵԼՈՒ ԱՌԹԻ հայտնի բանաստեղծությունը՝

Տեր, օրհնէ՛ ծառն այս մատղաշ: Ես կտնկեմ զայն ահա
Փխրուն եւ սև հողին մեջուր պապերս կպառկին.
Ես՝ անոնց թոռը հսկայ, այս հողի տէրն եմ կրկին,
Ու արեւուն տակ կաճիմ՝ անունն իրենց շուրթիս վրա…

Պիտի բանայ ծառն այս մեծ իր բազուկներն ու հոգին,
Գրկած իր մեջ պապերուս արեւոտ շունչը անմահ,
Տե՛ր, միսմինակ, նազելի այս ծառը աղոթք մը ըլլայ,
Ու փաթթուիլ իր մարմնոյն գան սիրողները գիւղին…,

Երկաթագիր պատմութիւնն այս մըտերիմ հողերուն
Աչքիս արցունք կըբերէ…Փառք ու մեռել շատ ունի
Երկիրն իմ հին, ալեւոր, որուն ես թոռն եմ վայրի,
Խհոգումներով բեղնաւոր, երազներով օրօրուն…:

… ՄԵՌԵԼ ՆԵՐՍ ԻԲՐԵԻ ԽԱՉ՝ ԵՍ ԱՅՍ ԾԱՌԸ ՏՆԿԵՅԻ…:

Մոնթեն ստեղծարար ու ազատատենչ հայ ժողովրդի էությունից, մեր գրականության խորաշերտից ծնված էպոսային հերոսներից է՝ մեզ համար կերպարային ուղենիշ համայնի տիրակալ ժամանակի հոլովույթում…

Ալեք Ենիգոմշյանի խոսքը

- Հաճախ եմ հիշում և ըստ օրվա իրադարձությունների անդրադառնում Մոնթեի հետ անցյալ հանդիպումներիս ու մեր զրույցներին:

Երբեմն շրջակա իրականությունը առավել սթափ գնահատելու համար մտովի դիմում եմ նրան, վերհիշում նրա դատողությունները:

Մեր պատրանքային զրույցների գլխավոր նյութը հայրենի իրականությունն է, որ պետք է պայմանավորի համահայկական իրականությունը, նրա ապագան ամբողջ բնատարածքում:

Մոնթեի ու իմ հարցումները և պատասխանները համառոտակի պատկերվում են այսպես.

Այսօր ամենից շատ ինչի՞ կարիք ունեն Հայաստանն ու հայությունը:

Այն բանի, որ՝

- երկիրը լինի ինքնիշխան, ժողովրդավարական և արդար,
- կառավարողների կոչումը լինի պետությանը, ազգին և քաղաքացուն ծառայելը,
- քաղաքացին առաջնորդվի ազգային, պետական և հանրային գիտակցությամբ,
- վերանան բոլոր տեսակի անարդարությունները,
- պետության և քաղաքացու, հասարակության և պետության, քաղաքացու և հասարակության շահերը չհակադրվեն, այլ լրացնեն, ամբողջացնեն միմյանց,
- սիրենք մեր երկիրը, հայրենիքը ոչ թե բաժակաճառերով, վերացականորեն, այլ աշխատելով նրա հզորացման համար, աշխատելով քաղաքացու և հայ մարդու նյութական բարեկեցության, հոգևոր հարստացման համար, նրա հողն ու ջուրը գուրգուրելով, մեր մարմնով նրան պաշտպանելով,
- զինվորը համարվի մարդ և արժեք,
- լինենք մշակութային ազգ, և այլն և այլն…

Մոնթեն այս բոլորն էր և այս բոլորը Մոնթեն են:

Եթե Մոնթեն այսօր լիներ մեզ հետ, նա կլիներ այս արժեքների պաշտպանը, ամբողջ էությամբ այս արժեքների համար պայքարող մարտիկը, կլիներ այս արժեքները ոտնահարողների վճռական հակառակորդը:

Եթե մենք անկեղծ ենք Մոնթեի հանդեպ մեր սիրո ու հարգանքի մեջ, մենք ևս պիտի լինենք այս արժեքների կրողները, այլապես այդ սերն ու հարգանքը կեղծ են, սուտ:

Մոնթեն այնքան պարզ, համեստ ու նվիրված մարդ էր, հարցերին վերաբերվում էր հոգու, մտքի ու բարոյականության այնպիսի բարձրությունից, որ երբեք մեծարանքի կարիք չի զգացել, ընդհակառակը, միշտ անհարմար է զգացել և խորշել է մեծարանքից:

Մենք միայն նրան նմանվելով, նրա կրած արժեքները ինքներս էլ կրելով հարգած կլինենք նրան, նրա անմարելի հիշատակը, նրա կիսկատար գործի շարունակումը՝ հայոց բնօրրանի ամբողջական ազատագրումը…,- եզրափակեց Ալեք Ենիգոմշյանը:

Լևոն Ղ. Շիրինյանի մոնթեական խոհերը

(Հայ քաղաքագետ, հասարակական գործիչ, ՀՊՄՀ քաղաքագիտության և իրավունքի պատմության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր), փիլիսոփայական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր)

Ոսկեղենիկ հայերենով և սրտի ջերմությամբ գրված Սիրակ Չախալյանի «Մոնթեն նայում է Արարատին» հուշագրությունը ինձ վերադարձրեց անցյալ դարի 90-ական թվականներ,

մեր նորօրյա Ազատամարտ՝ նույնքան հերոսական, որքան և բախտորոշ օրեր, երբ հերթական անգամ հայ ժողովուրդը կանգնեց լրջագույն փորձության առաջ, մի փորձություն, որը բացառում էր կոմպրոմիսը (փոխզիջում) ու առավել ևս՝ նահանջն ու պարտությունը:

Բախտորոշ օրերը ծնեցին համապատասխան հերոսների, խոնարհ-հերոսների փաղանգը…Մոնթե Մելքոնյան (Ավո), Լեոնիդ Ազգալդյան, Սիմոն Աչիկգյոզյան և բազում - բազում այլ հայորդիներ, որոնք ժամանակի ընթացքում դառնալու էին լեգենդներ…: Նրանցից յուրաքանչյուրը բերելու էր հայրենի հողի պաշտպանության ու ազատագրման սրբազան գործի իր լուման, նվիրելու էր երբեմն նաև իր անձը, ձուլվելու հայրենիքի հավերժության հետ:

Դժբախտաբար, ինձ բախտ չի վիճակվել ճանաչել, առավել ևս հաղորդակցվել Մոնթեի հետ, սակայն քաջածանոթ եմ նրա կենսագործունեությանն ու գաղափարական կողմնորոշումների հետ: Մասնավորապես գրավիչ է նրա պետականության աշխարհաքաղաքական ըմբռնումը, նորոգվող Հայաստանի «սահմանաքարերի տեղադրությունը»…

«Իմ կարծիքով, հարկավոր է,- ասում էր Մոնթեն,- ամբողջացնել Արցախի պատմական սահմանները՝ Արաքսի և Քուռի միջանկյալ տարածքը: Աշխարհագրական տեսանկյունից մեր դիրքերն ավելի հեշտ կլինի պահպանել, որովհետև կհասնենք գետերով ու սարերով բաժանված բնական սահմանների»:

Ահա և Քուռ-Արաքսյան Հանրապետության կոնցեպտի նախադրյալներից մեկը…

Հավերժ փա՛ռք խոնարհ հերոսներին, առավել ևս՝ նրանց ռազմավարական հարցադրումներին:

Աշոտ Մելքոնյանը հիշում է

(ՀԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս)

1990 թ. վերջն էր կամ 1991թ. սկիզբը լավ չեմ հիշում, երբ մեկը բախեց աշխատասենյակիս դուռը: Ներս մտավ ինձ անծանոթ մի անձնավորություն: Այդ ժամանակ Պատմության ինստիտուտի գիտական քարտուղարն էի:

- Բարև, դուն Մելքոնյան ես, ես ալ Մելքոնյան եմ: Դուն պատմաբան ես, ես ալ պատմաբան եմ,- և հարմար նստելով, շարունակեց խոսքը, - ես ԱՍԱԼԱ-են եմ, վերջերս հայրենիք եկած եմ:

Ճիշտն ասած, ես այստեղ մռայլվեցի, մեղքս ի՞նչ թաքցնեմ՝ անլուրջ մարդու տպավորություն թողեց, թե ինչպե՞ս կարող է խորհրդային երկրում հայ նորօրյա ազատամարտի ներկայացուցիչը իրեն այդպես ներկայացնել:

- Լավ, դուն չհավատացիր, աս կկարդաս,- և իմ սեղանին դրեց 50 էջանոց, գրամեքենայով, բայց մանր՝ պետիտ տառաչափով տպված մի նյութ:- Երկու օրեն ետքը կուգամ, տեսնիմ ինչ կըսես, - և ավելացրեց, -մեկ օրինակ ալ ձգած եմ արևելագետներու մոտ, -ասաց նա և գնաց:

Ինձ անհրաժեշտ եղավ երկու գիշեր այդ նյութը մի քանի անգամ կարդալու համար: Ուղղակի «կուրացել» էի: Երբ նյութի բովանդակությունը լիարժեք ընկալեցի, ամոթ զգացի, որ

այդ մարդու նկատմամբ մեր հանդիպման սկզբնապահին հավատով համակված չեմ եղել:

Երկու օր անց եկավ և անմիջապես ասաց,- «Հավատացի՞ր»:

- Անշո՛ւշտ, անշուշտ,- հաջորդեց իմ պատասխանը::

-Կարո՞ղ ենք նյութը տպել,- հարցրեց Մոնթեն:

- Կփորձենք,- ասացի նրան:

Ինձ համար այսպիսի նյութի տպագրելը խորհրդային երկրում շատ դժվար կլիներ, եթե ոչ անհնարին: Բաժանվելիս նա ասաց. «Մեկուն նույնպես խնդրած եմ»: Հետո տեղեկացա, որ այդ նյութն արդեն տպվել է:

Այդ ամիսներին Մոնթեին հաճախակի տեսնում էինք Ակադեմիայի շենքում, Օպերայի հրապարակում ու մերձակայքում, ԵՊՀ-ի հանրակացարանում, որտեղ նա ապրում էր կնոջ՝ Սեդայի հետ: Ավելի ուշ նա արդեն Ղարաբաղում էր: Սկզբում ազատամարտիկի կարգավիճակով Արցախի Շահումյանի շրջանում էր, որոշ ժամանակ անց՝ արդեն Մարտունու շրջանի պաշտպանական ուժերի հրամանատարն էր: Ի պատիվ իրեն, նա կարողացավ համախմբել շրջանի բոլոր պաշտպանական ջոկատները, ինչն էլ հնարավոր դարձրեց բեկումը ռազմադաշտում՝ հօգուտ մեզ: Որոշ ժամանակ անց ետ գրավվեց Մարտունու շրջանի նախկինում կորսված տարածքների մեծ մասը: Փաստորեն, Մոնթեի գալուց հետո, Մարտունու ինքնապաշտպանական ուժերը պաշտպանական մարտերից անցան հարձակողականի: Հարձակվել, ազատագրել և ամրանալ նոր դիրքերում ու դրանք պահել: Մոնթեի այս ռազմավարությունը և մարտական գործողություններում նրա անմիջական մասնակցությունը նպաստեցին,

որ մեր զինուժերը հաղթանակ հաղթանակի հետևից տանեն: Մարտունին դարձել էր ամրոց: Ոչ միայն Մարտունու շրջանում, այլև ամբողջ Արցախում արդեն խոսում էին նրա անհերևակայելի հաղթանակների ու անպարտելիության մասին, ժողովուրդն արդեն սկսել էր լեգենդներ հյուսել նրա մասին, լեգենդներ, որոնք ծնվում էին իրականությունից:

Երբ 1993 թվականի գարնանը, նաև Մոնթեի և իր ջոկատների գործուն աջակցությամբ, ազատագրվեց Քարվաճառը, Մոնթեին մենք տեսանք Դադիվանքում: Տեսախցիկի առջև նա ասում էր. «Ահա ևս մի վկայություն, որ ասիկա մեր հայկական հողն է»: Լինելով պատմաբան, նա լավ գիտեր, թե ինչ է նշանակում Արցախի կորուստը: Դեռևս իրենից առաջ՝ 1914թ. վերջին Մշեցի Պանդուխտը և Ալեքսանդր Մնացականյանը ԱՄՆ-ից, երեք կամավորական ջոկատներով՝ Արխանգելսկի և Մուրմանսկի վրայով, կտրելով ամբողջ Ռուսաստանը, հասել էին Հայաստան՝ մասնակցելու 1-ին աշխարհամարտի կովկասյան ռազմաճակատի ռազմական գործողություններին: Նրանք եկել էին կռվելու մեր դարավոր թշնամու՝ թուրքի դեմ, եկել էին նաև Արևմտյան Հայաստանն ազատագրելու: Մոնթեի մասնակցությունն Արցախյան ազատամարտին պատահական չէր: Այդ իմաստով նա արտահայտում էր սփյուռքահայության ըղձանքները: Նա լավ գիտեր հայոց պատմությունը և, քանի որ մեծ ճանապարհ էր անցել, լավ պատկերացնում էր՝ ինչ կնշանակեր Արցախի կորուստը: Դա կլիներ Հայաստանի կորստի սկիզբը: «Եթե կորցնենք Արցախը, կփակենք մեր պատմության վերջին էջը»: Այս պատգամը մեր ժողովրդի, զինվորականության համար այն ուղենիշն է, որը երբեք չպետք է մոռանալ: Այո, անհնար է այն մոռանալ. Վկան՝

Ապրիլյան պատերազմը և մեր քաջազունները, որոնք կյանքի գնով պահեցին հողը հայրենյաց:

Մոնթեն իր ինքնությանը հավատարիմ ու հայրենաճանաչ հայորդի էր և իսկապես՝ իմացյալ մահվան պատրաստ զորական: Ուշագրավ է, որ ունենալով գիտահիմացական լայն հետաքրքրություններ, արյան մղումով ձգտելով հաղորդակից լինել հայոց անցյալին, մեր և հարևան ժողովուրդների մշակույթին, նա դիմեց մեզանում պատշաճ ուշադրությունից գրեթե դուրս մնացած վիմափոր կառույցների ուսումնասիրությանը: Երջանկահիշատակ Արմեն Զարյանի վկայությամբ՝ իտալական աղբյուրներում հիշատակություններ կան նույնիսկ հեռավոր Սիցիլիայի վիմափոր կառույցների ստեղծմանը հայ քարագործների մանակցության մասին . . .

Ափսոս, որ պրպտուն հայորդուն երկարակեցություն և ընդգետնյա կամ ժայռափոր բավիղներն ու կացարանները հիմնավորապես ուսումնասիրելու բախտ չվիճակվեց: Բայց կարծում եմ, որ նրա հնագիտական ընտրությունը նույնպես հետնորդներ կունենա, ինչպես ունեցավ նրա հերոսականությունը Արցախյան ռազմաբեմում. . .

Մենք՝ պատմաբաններս, վարժված ենք, որ լեգենդների մասին գրենք, խոսենք արխիվային նյութերով, պատմական ուսումնասիրություններ կատարելով: Բայց Մոնթեի պարագայում այնքան երջանիկ եմ, որ բախտ ունեցա նրա հետ անձամբ ծանոթ լինելու, որովհետև ապրում էինք մի ժամանակաշրջանում, երբ մեր կողքին արարող և ապրող մարդիկ դարձան լեգենդներ, նրանց թվում, անկասկած, նաև Մոնթեն էր:

Պատմում է Մարտիրոս Ժամկոչյանը

Մոնթեի հետ ծանոթացա Բեյրութում, 1978թ. ապրիլի 24-ն էր: Նրան, փաստորեն, «հայտնաբերեցինք» այդ օրը: Նա բեմում ազատ ելույթ էր ունենում: Քանի որ ես ու Ալեքը անգլերեն էինք հասկանում, նկատեցինք, որ այս տղան մեզ հարազատ թեմաներից էր խոսում: Ելույթը վերջացնելուց հետո դրսում ծանոթացանք: Սկզբում ծանոթացանք, չասելով՝ մենք ով ենք և ինքը ով է ու ինչի համար է եկել Բեյրութ: Այդ օրվանից սկսեցինք շփվել և ժամանակի ընթացքում մտերմացանք: Նա հայերեն չգիտեր, սակայն զգացվում էր, որ ուզում էր օր առաջ տիրապետել հայերենին: Մեկ տարի ես բացակայեցի քաղաքից և նրանից ոչ մի լուր չունեի, սակայն մեկ տարի անց նորից հանդիպեցինք: Նա Ալեքի հետ էր և արդեն ԱՍԱԼԱ-յի հավաքակայանում: Եվ այսպես սկսվեցին մեր սերտ հարաբերությունները, մարտական համագործակցությունը՝ հանուն վեհ նպատակի:

09.06.1981թ. մեկնեցի գործողության Շվեյցարիայի մայրաքաղաք Ժնև: Այդ օրվանից Մոնթեի հետ կապ չեմ ունեցել: Օրերից մի օր նամակ ստացա նրանից: Նա գրել էր, որ տեղյակ է՝ մոտ ժամանակներս վաղաժամկետ ազատվելու եմ: Եվ ուզում էր, որ ես Հայաստան գամ՝ համատեղ պայքարը շարունակելու համար:

1990թ. աշնանից կես ազատ կարգավիճակ ունեի: Ցերեկներն աշխատում էի դրսում, իսկ գիշերները քնում բանտում: Լուր ստացա, որ Վազգեն Սարգսյանը եկել է Ժնև: Հայկական համայնքի կապերի շնորհիվ ցանկացա հանդիպել նրան: Եվ հաջորդ օրը համայնքը կազմակերպեց մեր հանդիպումը: ժամը 6-ից հետո միայնակ այցելեցի նրան: Նա իջևանել էր Ժնևի հյուրանոցներից մեկում՝ անվանումը չեմ հիշում: Ես հեռակա կարգով ծանոթ էի նրան և գիտեի նրա մասին: Նա հարցրեց իմ ինքնությունը և մի-մի բաժակ հայկական կոնյակ խմեցինք: Այնուհետև նրան հայտնեցի իմ ցանկությունը՝ օժանդակի, որպեսզի ես Հայաստան գամ:

Նա հարցրեց՝ Մոնթեի մասին ինչ կասեմ և ավելացրեց. - Գիտ՞ես, որ նա արդեն Հայաստանում է, վերջերս է եկել: Ես հարցրեցի. - ի՞նչ կուզես իմանալ՝ նրա անձնականի՞, թե՞ գործունեության մասին:

Ասացի, որ նա Լիբանանում հայկական թաղամասերի ինքնապաշտպանությանն է մասնակցել, լավ տիրապետում է սովետական և այլ երկրների զենքին: Ռազմական մեծ հմտություն ունի:

Սարգսյանն այլ հարցեր էլ տվեց՝ 1983 թվականին Մոնթեի ԱՍԱԼԱ –յի հեղափոխական շարժման ստեղծման վերաբերյալ և բուն ԱՍԱԼԱ-յից հեռանալու պատճառների մասին: Իմ պատասխանը հետևյալն էր.

Կասկած չունեմ նրա ազնվության վրա, կարող եք հարյուր տոկոսով իրեն վստահել:

- Լավ, ես հիմա վերադառնում եմ Հայաստան, և Մոնթեի հետ ամեն ինչ կանենք, որ դու գաս հայրենիք: Կրկնում եմ, ամեն ինչ, որպեսզի Հայաստան գաս: Քո իրավապաշտպանի և

հայկական եկեղեցու ատենապետ Էժեն Փափազյանի միջոցով կիմանաս՝ ինչ է անհրաժեշտ, որպեսզի կարողանաս մտնել սովետական դեսպանատուն և վիզա խնդրել Հայաստան գալու համար, - ասաց Վազգեն Սարգսյանը:

Այդ հարցում ինձ օգնեցին փաստաբան Ժեռալդ Բենուան, Էժեն Փափազյանը և ողջ Շվեյցարիայի հայկական համայնքը: Համայնքն իր մեծ դերակատարումն ունեցավ թե՛ բանտում իմ եղած և՛ թե բանտից վաղաժամկետ դուրս գալու ժամանակ: Ես շնորհակալ եմ նրանց, թող ներեն ինձ, որ նրանց անունները չեմ տալիս…

1991թ. հունիսի վերջին ես արդեն Հայաստանում էի: Տեղ հասա Փարիզ - Երևան չվերթով: Օդանավակայանում ինձ դիմավորեցին Մոնթեն, Զավեն Պետրոսը (Պետրոսյանը) և հայաստանցի ընկերներից մեկը:

Երբ ինքնաթիռից դուրս եկա, արդեն առավոտյան ժամը 6-ն էր: Մոնթեի և մյուս տղաների հետ հայրենի հողում հանդիպումը մի անբացատրելի բան էր: Երբ արդեն նստեցինք մեքենան, որով նրանք եկել էին ինձ դիմավորելու, խնդրեցի ինձ ուղեկցել Վազգեն Սարգսյանի մոտ: Մոնթեն ասաց. «Է, Մարտիրոս, նա հիմա քնած կլինի, նրա մոտ կգնանք ժամը 9-ին մոտիկ»: Նրանք ինձ ման տվեցին քաղաքով մեկ, արդեն ժամը 8-ն անց էր՝ գնացինք Հայաստանի կոմկուսի կենտկոմի ամառանոց, որտեղ բնակվում էր Վ. Սարգսյանը: Հասանք տեղ և նախօրոք պահակախմբի թույլտվությամբ, նրան զգուշացնելուց հետո, մտանք նրա բնակարանը: Անչափ ուրախացավ, ջերմագին ընդունելություն էր: Նա կոնյակ լցրեց մեր բաժակները և շնորհավորեց իմ ազատվելու կապակցությամբ ու ասաց. - բարով ես եկել Հայաստան:

- Ես ուզում եմ անմիջապես մեկնել Արցախ՝ միանալու ինքնապաշտպանական ջոկատներին, խոսեցի:

Արցախում այդ ժամանակ կազմավորված ջոկատները գործում էին ոչ բացահայտ: Նա կտրուկ, ջղայնացած հայացքով նայեց ինձ. -Մի քանի ժամ առաջ ես բանտից դուրս եկել, հիմա ուզում ես գնալ ռազմաճակատ: Առայժմ քեզ չեմ թողնի, արգելում եմ գնաս Արցախ: Քեզ, նախ և առաջ, հանգստանալ է պետք, դու դեռ պետք է համակերպվես ազատությանը, հետո կորոշենք»:

Ես նայեցի Մոնթեին, նրա աչքերը կարծես ինձ ասացին, որ այդ մասին հետո կխոսենք: Ես ասացի Վ. Սարգսյանին, թե ո՞ր-տեղ եմ բնակվելու: Նա հանձնարարեց, որ ինձ տեղ հատկացնեն ԵՊՀ-ի՝ Լենինի պողոտայում գտնվող հանրակացարանում: Ինձ սենյակ հատկացրին հանրակացարանի 1-ին հարկում: Մոնթեն բնակվում էր 3-րդ հարկում: Այդ օրվանից սկսվեց իմ և Մոնթեի հայաստանյան համագործակցությունը: Բնականաբար, մեր պայքարը ուղղված էր լինելու հայրենիքի անկախության վերականգնմանը օժանդակելուն, Արցախի ինքնապաշտպանությանը և ազգային բանակի ստեղծմանը: Մոնթեն արդեն վստահ էր, որ անկախության հարցը մոտ ապագայի խնդիր է: Նրան մտահոգում էր Արցախի խնդիրը և պաշտպանության կանոնավոր բանակի շուտափույթ ստեղծումը: Երբ սկսվեցին ծավալուն մարտերը Ղարաբաղում, Մոնթեն անմիջապես մեկնեց Հյուսիսային Արցախ: Երբ այնտեղից վերադարձավ Երևան, արդեն համոզված էր, որ ազգի անվտանգության երաշխիքը օր առաջ կանոնավոր բանակ ունենալն է:

Մոնթեի հետ պայմանավորվել էինք. առայժմ ես մնալու եմ Երևանում ու զբաղվելու եմ ռազմաճակատին թիկունքից աջակ-

ցելու հարցերով: Մասնավորապես կազմակերպելու էի Սփյուռքից Հայաստան ուղարկված տարատեսակ միջոցների՝ զենք-զինամթերքի, զինվորական լրակազմի, զրահաբաճկոնների, սննդամթերքի և այլ պարագաների պահեստավորմամբ ու տեսակավորմամբ, որից հետո ուղարկելու էի Արցախ: Իմ գործունեության ճանապարհային քարտեզը հետևյալն էր՝ օդանավակայան -ք. Մասիս, որտեղ պահեստավորվում էր Սփյուռքից ուղարկված օժանդակությունը, տեսակավորվում և ուղարկվում Ղարաբաղ: Եվ այսպես միշտ՝ մինչև զինադադարը:

Մոնթեն օր առաջ ուզում էր տեսնել Հայոց կայացած բանակը: Կանոնավոր և կայացած բանակն էր լինելու Արցախի անվտանգության պատվարը: Նա տեսավ այն:

Երբ Մարտիրոս Ժամկոչյանն ավարտեց իր խոսքը, ակամա հիշեցի Գուրգեն Յանիկյանին, ում մասին կարդացել էի Ֆրանսիայում տպագրվող ու Հայաստան առաքվող հայալեզու «Աշխարհ» շաբաթաթերթում՝ դեռևս 1993 թվականին: Զարմանալի է, այն տարիներին այդ շաբաթաթերթը վաճառվում էր Հայփոստի կրպակներում: Թերթի երեք էջերի նյութերը հայերեն էին, իսկ չորրորդը՝ ֆրանսերեն: Թերթում հակիրճ նկարագրված էր, թե ինչպես 78-ամյա ծերունին 1973թ. հունվարի 27-ին, որպես անհատ, վրեժխնդիր եղավ ԱՄՆ-ում զգետնելով ցեղասպան Թուրքիայի հյուպատոսին և փոխհյուպատոսին:

Այս առնչությամբ հարցրի Մարտիրոսին՝ ի՞նչ կասի Գուրգեն Յանիկյանի մասին: Նրա պատասխանը հակիրճ էր: Յանիկյանն այդ քայլով նախ և առաջ վրեժխնդիր եղավ 1915թ. անմեղ զոհերի համար, և երկրորդը, նա, փաստորեն, հայ երիտասարդությանն ուղղորդեց զինյալ պայքարի (քարոզ-

չության)՝ դառնալով Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի հոգևոր հիմնադիրներից մեկը:

- Ես գիտեի, որ անհատս մենակ մնալու չէի, - այդ առիթով Յանիկյանը բանտից բազմիցս արտահայտվել և կոչ է արել հայությանը՝ ելնել Հայոց ցեղասպանության ճանաչման համար զինյալ պայքարի:

Վերհիշում է Զավեն Պետրոսյանը

(1980թ. անդամագրվել է ԱՍՍԼԱ-յին,
1982թ. գործուղվել է Լոնդոն գործողության)

Երբ Զավենին հանդիպեցի Երևանում նրա հիշողությունները գրառելու նպատակով, մենք միմյանց մտաբերեցինք: Հանդիպել էինք Մասիսում: Նա այդ օրը իմ աշխատասենյակ էր եկել Մոնթեի և Մանուկի հետ:

Ձախից առաջինը՝ Զավեն Պետրոսյանը

- Ես Մոնթեի հետ ծանոթացել եմ 1978 թվականին: Սկսել եմ շփվել նրա, եղբոր՝ Մարգարի, քրոջ՝ Մասիայի և մորաքրոջ տղայի՝ Դավիթի հետ: Երբ Բեյրութում խնդիր եղավ արաբ քրիստոնյաների հետ, որոնք ցանկանում էին, որ հայերը իրենց ուզածով շարժվեին, մենք նրանց այդ կարծիքը չընդունեցինք և դեմ դիմաց կռվի ելանք: Այդ ժամանակից սկսած հայերս շփման գծում սկսեցինք իրա-

կանացնել զինված հերթապահություն: Երբ հերթական հերթափոխը եղավ, ես նրանց կազմում տեսա նաև Մոնթեին: Նա դեռ հայերեն լավ չգիտեր: Նրա գիտեցած ամենակարևոր բառն էր կրակեմ – կրակեմ, որը անընդհատ կրկնում էր: Նա այդ արտահայտությամբ հասկացնում էր, որ զենք է ուզում: Իրեն կարաբին տվեցինք, որը ավելի ծանր զենք էր, քան Կալաշնիկովի ավտոմատը: Ինձ ասավ՝ կրակեմ: Երբ նա կրակեց առաջին անգամ, հրացանի զարկի հզորությունից ցնցվեց, մի պահ անհարմար զգաց: «Մոնթե՛, ըսի՝ շունչդ քաշե, հետո կրակե»: Այդ օրը եղավ մեր առաջին հանդիպումը ճակատագծում: Լինելով խոհեմ անձնավորություն, կարճ ժամանակում տիրապետեց մեր ձեռքի տակ եղած բոլոր զինատեսակները՝ այն կլիներ սովետակա՞ն, թե՞ այլ երկրների:

1980 թվականին անցա Գաղտնի բանակի շարքերը: 1982 թվականին ինձ ուղարկեցին Լոնդոն՝ գործողության, թիրախը թուրքական դեսպանատունն էր: Նախքան գործողությունը ինձ ձերբակալեցին: Իմ մոտ հայտնաբերված զենք-զինամթերքի համար դատապարտվեցի 8 տարվա ազատազրկման: Դատավարությունը երկար տևեց: Երբեք իրենց ճնշումներին չենթարկվեցի: Խենթից էլ խենթ էի դարձել: Ինչո՞ւ էի դիմել այդ քայլին. իրենց ես մանրամասն ներկայացնում էի դրա պատճառները և որոնք էլ պայքարի են հանել շատ հայ երիտասարդների: Մենք այս քայլերով աշխարհի ուշադրությունն էինք սևեռում մեր արդարացի պահանջատիրությանը:

1985թ. Մոնթեից մի հակիրճ նամակ ստացա: Նա գրում էր. «Չգիտեմ, թե դուն ինձի կհավատաս, թե՝ չէ, գաղտնի բանակից իմ և որոշ ընկերների բաժանումը ու «ՀԱՀԳԲ-հեղափոխական շարժում» խմբավորման հիմնումը ժամանակի պահանջն էր ու

խիստ անհրաժեշտ՝ հաշվի առնելով մի շարք հանգամանքներ: Վստահորեն ասում եմ, որ այն ինքնանպատակ չի եղել»:

Ես նրան նամակ գրեցի, որ, - «Մոնթե, եթե դուն և տղաքը չէիք կարողանալու փոխել իրադրությունը, ինչո՞ւ այդ բանը պատահեցավ, բայց տա աստված, եթե առողջ մնացինք, կտեսնըվինք երես առ երես, դուն ինձ կասես ամբողջ ճշմարտությունը և ես կորոշեմ՝ քեզի դեմ կամ քեզի հետ ըլլամ»:

Բանտից ազատվեցի 1988 թ. և գնացի Բեյրութ: 1990թ. սկզբին եկա Հայաստան: Նոյեմբեր-դեկտեմբերին ինձ ընկերներս լուր տվեցին, որ Մոնթեն արդեն Հայաստանում է և ապրում է այն ժամանակվա Լենինի պողոտայի վրա գտնվող ԵՊՀ-ի հանրակացարանում: Ես գնացի հանրակացարան և պահակին խնդրեցի, որ ուզում եմ տեսնել Մոնթեին, սակայն նա ասաց, որ Մոնթե անունով մարդ այստեղ չկա: Այդ ժամանակ սովետական հատուկ ծառայությունները հետաքրքրված էին ԱՍԱԼԱ-յի տղաներով: Մոնթեն այդ իրողությունը լավ գիտեր: Երկրորդ անգամ գնացի հանրակացարան և Այնճարից Սեդային նամակ փոխանցելու պատրվակով պահակին խնդրեցի, որ նա անձամբ գա և այն ստանա:

Լսելով նամակի մասին՝ Մոնթեն աստիճաններով վազելով իջավ առաջին հարկ և ինձ տեսնելով, մի պահ կանգ առավ ու աչքերը տրորեց: «Սեդա՛, Սեդա, եկո՛ւր, մեզ է ժամանել Զավենը»: Բարձրացանք իր բնակարանը: Մեր հանդիպումը տևեց մոտ երեք ժամ: Ես որոշեցի, որ պետք է լինեմ Մոնթեի կողքին: Նրան ասացի, - «Մոնթե այսօրվանից ես քո կողքին եմ»: Նա շատ ուրախացավ: Հաջորդ օրը գնացի իմ ընկերների մոտ և ասացի, որ ես Մոնթեի կողքին պիտի լինեմ:

Մինչև Մոնթեի հետ հանդիպումը Մասիսում ծանոթացել էի «Թեհլիրյան» միության նախագահ Մանուկ Հովհաննիսյանի և այլ ընկերների հետ: Մանուկի եղբայրներին, որոնք նույնպես ապրում էին Մասիսում, դեռևս ծանոթ էի Ղամիշլիից: Մոնթեի հետ իմ հանդիպումից մի քանի օր հետո նրան ծանոթացրի Մանուկի հետ: Փաստորեն, մոտալուտ պատերազմի տարաբնույթ խնդիրներին առնչվող մեր առաջին շփումներն սկսվեցին Մասիսի տղաների հետ:

Մոնթեն օր առաջ ուզում էր հանդիպել Վազգեն Սարգսյանին: Միասին գնացինք նրա աշխատավայր, որը Համագումարների պալատում էր: Հանդիպումը տեղի ունեցավ պալատի դիմացի Սիրահարների այգում գտնվող ճաշարանում: Վազգեն Սարգսյանը, լինելով անմիջական անձնավորություն, լսելով մեր նպատակը՝ Հայրենիքին օգտակար լինելու վերաբերյալ մեր ցանկությունը և պատրաստակամությունը, կոնկրետ շարադրեց մեր անելիքները, միաժամանակ ունենալով որոշակի նկատառումներ: Նա գիտեր մեր տղաներից շատերի մասին և ոչ միայն՝ նաև նրա օժանդակությամբ էին նրանցից մի քանիսը եկել Հայրենիք:

Արցախյան ազատամարտի օրերին, երբ Մարտունուց վերադարձա Երևան, Մոնթեն Ղարաբաղի իր զինակիցների մոտ մի առիթով իմ մասին ասել էր, - «Նրա փոքր մարմնին չխաբվեք, նա Բուրջ Համուդի ամենախենթ կռվողներից մեկն էր: Իմ հոգում առ այսօր տպավորված են Զավենի և իր ընկերոջ՝ Հակոբի քաջագործությունները: Նրանք անվախ, սառնասիրտ և խելացի կռիվ տալու կարողություններ ունեցող մարտիկներ են եղել»: Այս մասին տարիներ անց ինձ պատմեց Նելսոն Սողոմոնյանը՝ Երևանի Հանրապետական հի-

վանդանոցից ոչ հեռու ակնաբուժական կենտրոնում, որտեղ նա բուժվում էր, լավ չեմ հիշում՝ կարծեմ 2000 թվականին էր,- խոսքն ավարտեց Զավեն Պետրոսյանը:

Անցել էին շատ տարիներ: Սիրիական պատերազմը նորից խաթարեց հայի խաղաղ կյանքը Մերձավոր արևելքում: Հայ տղաները նորից դուրս եկան կռվի: Նրանք Սիրիայի կառավարական զորքերի շարքերում կռվում էին հակակառավարական տարբեր խմբավորումների դեմ, որոնք ցանկանում էին երկրի իշխանությունը վերցնել իրենց ձեռքը: Ընկել էր հայաբնակ Քեսաբը, սակայն անկոտրում էր նրանում ապրող հայի ոգին, նա չէր համակերպվում քաղաքի կորստի հետ: Կառավարական զորքերի աջակցությամբ հայ կամավորականները կռիվ մղեցին քաղաքն ազատագրելու համար: Այս անգամ էլ Զավեն Պետրոսյանը առաջիններից էր, որ ելավ կռվի և նրա անմիջական հրամանատարությամբ հայկական ջոկատը կռվեց ճակատագծի ամենադժվարին հատվածում: Քեսաբն ազատագրվեց:

Մարդ լեգենդը

(ՀՀ ԱԻՆ գնդապետ Սերգեյ Մելիքյանի հուշերից)

Մոնթե Մելքոնյանի հետ առաջին անգամ հանդիպել եմ 1992թ. հուլիսի 23-ին՝ ԼՂՀ Մարտունու շրջկենտրոնում, ուր ժամանել էր ՀՀ ԱԻՆ ՔՊ շտաբի սպաներից կազմված մեր խումբը՝ գնդապետ Հմայակ Հարոյանի հրամանատարությամբ: Խմբի կազմում էին համազորային, ինժեներական, կա-

պի, ՀՕՊ, քաղպաշտպանության և զինվորական այլ մասնագիտություններ ունեցող սպաներ: Մոնթեն մեզ դիմավորեց բարյացակամորեն ու ընդգծված ուրախությամբ: Նա առանձին-առանձին ծանոթացավ բոլորիս հետ: Այնուհետ մեզ տեղաբաշխեց շրջանի տարբեր բնակավայրերում: Մեզ առաջադրված էին միանգամայն որոշակի խնդիրներ՝ գործնական օգնության ցուցաբերում խաղաղ, քաղաքացիական բնակչության պահպանումն ու պաշտպանությունը կազմակերպելու, ինքնապաշտպանական ուժերի մարտական դիրքերի ինժեներական սարքավորման գործում: Անհրաժեշտ էր նաև ստեղծել պարետային ծառայություն և իրականացնել լուսաքողարկման միջոցառումներ:

Սակայն մի քանի օր անց մեզ առաջադրված խնդիրներն ընդլայնվեցին: Առաջացել էր ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը զինվորական կանոնագրքերին ու կանոնակարգերին համապատասխանեցնելու, բոլոր ուժերն ու միջոցները հաշվառելու, ինքնապաշտպանության ուժերից մարտական ստորաբաժանումներ ստեղծելու անհրաժեշտություն: Դա անհրաժեշտ էր առկա ուժերն ու միջոցները առավել հստակորեն ու նպատակահարմար օգտագործելու, արդյունավետ կիրառելու, ուժերը համակարգելու և կառավարելու համար:

Մեզ առաջադրված խնդիրներն սկսեցինք քայլ առ քայլ իրականացնել: Յուրաքանչյուր աշխատանքի կատարման կամ ընթացքի մասին պարբերաբար զեկուցում էինք Մոնթեին: Նա միայն ասում էր. «Է շատ լավ է», - և ավելացնում. -գիտցեք, սա նախապատրաստական աշխատանքները անչափ կարևոր են, պետք է շուտ ավարտինք:

Իսկ երբ վերոնշյալ նախապատրաստական աշխատանքները հիմնականում ավարտվեցին նաև մյուս շրջաններում, ԼՂՀ Ինքնապաշտպանության կոմիտեի (ԻՊԿ) նախագահ Սերժ Սարգսյանի հրամանով, 1992 թվականի օգոստոսի 14-ին Ինքնապաշտպանական ուժերի կազմում ստեղծվեցին Ասկերանի (հրամանատար՝ Վիտալի Բալասանյան), Հադրութի (հրամանատար՝ Արթուր Աղաբեկյան, 1993 թվականի սեպտեմբեր-դեկտեմբերին՝ Վարդան Ավետիսյան), Մարտակերտի (հրամանատար՝ Նորայր Դանիելյան, 1993 թվականի նոյեմբերից՝ Աշոտ Առուշանյան), Մարտունու (հրամանատար՝ Մոնթե Մելքոնյան, 1993 թվականի հունիսից՝ Մովսես Հակոբյան), երկրորդ (կազմավորվել է 1993-ի դեկտեմբերին, Մարտունու պաշտպանական շրջանի (ՊՇ) վերակազմավորմամբ, հրամանատար՝ Նելսոն Սողոմոնյան), Շահումյանի (կազմավորվել է 1994 թվականին՝ «Եղնիկներ» պարտիզանական ջոկատի հիման վրա, հրամանատար՝ Սերգեյ Չալյան), Շուշիի (հրամանատար՝ Վաչագան Իշխանյան), Ստեփանակերտի (Կենտրոնական, հրամանատար՝ Սամվել Կարապետյան) պաշտպանական շրջանները:

Լինելով շրջանի ինքնապաշտպանության շտաբում, ես հաճախ հնարավորություն ունեի տեսնելու և ընկալելու Մոնթեի աշխատառճը: Զարմանալին այն էր, որ չունենալով հա-

տուկ ռազմական կրթություն, նա մտածում ու գործում էր որպես իսկական, ուսյալ զինվորական: Ակնառու էր ռազմական գործողությունների իրականացման նրա մեծ փորձը, մասշտաբայնորեն մտածելու ունակությունը, ճիշտ ու կանխամտածված որոշումներ կայացնելու մեծ մտապաշարը: Նրա ընդունած յուրաքանչյուր որոշմանն ու արձակած հրամանին նախորդում էր սթափ հաշվարկը: Լավ տիրապետում էր ոչ միայն իր զինակիցների, այլև՝ հակառակորդի իրական ու հոգեբանական վիճակներին:

Մոնթեն շատ շարժուն էր: Նա օժտված էր գերմարդկային եռանդով: Հաճախ տարբեր խնդիրներ լուծելու նպատակով գնում էր տարբեր ուղղություններով և ուշ գիշերով վերադառնում շտաբ, քնում էր ընդամենը 3-4 ժամ, բայց վաղ առավոտյան նորից ոտքի վրա էր, պատրաստ ամեն պահ գնալու ցանկացած վայր, լուծելու առաջացած յուրաքանչյուր խնդիր:

Այո, այդ ժամանակներից անցել է ավելի քան քառորդ դար, շատ բան չեմ հիշում, իսկ շատ ազատամարտիկներ, որոնք անմնացորդ մարտնչեցին հանուն հայրենիքի, այլևս մեզ հետ չեն, սակայն առ այսօր մտքումս տպավորված է Մոնթե Մելքոնյանի ասույթներից մեկը, որն անձամբ եմ լսել. «Պատերազմի ժամանակ յուրաքանչյուր ոք պետք է զբաղվի իր իմացած գործով, որը կարող է անել լավագույնս: Սակայն, անհրաժեշտության դեպքում պետք է պատրաստ լինի նաև զենք վերցնելու և պաշտպանելու հայրենիքը, իր տունն ու տեղը, ընտանիքը, անգամ եթե պետք է դրա համար պահանջվի ամենաթանկը՝ իր կյանքը»:

Մանուկ Հովհաննիսյանի ճեպախոսքը

(Արցախյան ազատամարտի ժամանակ «Թեհլիրյան» միության նախագահ, Մոնթեի մտերիմ ընկեր ու համախոհ)

Բոլոր ժամանակներում և հասարակություններում, երբ պատերազմը դարձել է ինչ-ինչ խնդիրներ լուծելու միջոց, ծնվել կամ հորինվել են հերոսների անուններ: Վերջիններիս դեպքում քաղաքական, իշխանական, կամ ինչ որ անվան տակ պատսպարված խմբավորումները «թխել» են ինչ որ անուններ ու նրանց շուրջ հորինել միֆ և այն անվանել են հերոսացում, ծառայեցրել են իրենց անձնական կամ խմբակային շահերին:

Այլ է, երբ ազգն է փառաբանել իր ծոցից ծնված պարզ, համեստ ու խիզախ զավակներին: Այսպիսիներից էր նաև Մոնթեն, ում անունը ակնածանքով է հիշում մեր ամբողջ ժողովուրդը:

Մոնթեի նահատակվելուց հետո իմ շատ հարցազրույցներում նրա մասին խոսելիս միշտ նշել եմ, որ Մոնթեն այն հրամանատարներից էր, ովքեր չէին հրամայում «առ՛աջ», այլ՝ «իմ հետևի՛ց», և այն էլ ապացուցեց, որ հայրենիքին ծառայելը, առաջին հերթին իրավունք է:

Մոնթեի հայրենիք վերադառնալու առաջին օրերին էր, երբ ԱՍԱԼԱ-ի անդամ, հայրենասեր հայորդի Զավեն Պետրոսյանը ինձ և իմ մտերիմ ընկերոջը Սամվել Հովհաննիսյանին ծանոթացրեց Մոնթեի հետ ու այդ պահից էլ մշտապես կապ էինք պահպանում՝ մինչև նրա նահատակվելը:

Մոնթեին ծանոթացրի մեր «Թեհլիրյան» միության անդամների, նաև շրջանի այլ ընկերների հետ, ովքեր մեզ պես համոզված էին, որ ազերաթրքերի հետ պատերազմը անխուսափելի է, ուստի հրամայականն էր զենք - զինամթերքի հայթայթելը:

Եթե թղթին հանձնեմ այն ամենը, ինչ Մոնթեն հասցրել է անել հայրենիքում՝ ոչ լրիվ երեք տարվա ընթացքում, ապա հաստափոր գիրք կկազմի, բայց այդ կարճ ժամանակահատվածում, հայրենիքի անվտանգության համար արեց այնքան, որքան շատերն ամբողջ կյանքում չէին կարող անել: Ասում են «Մի ծաղկով գարուն չի գա», բայց ոչ՛, Մոնթեի պես հերոսները կարողացան անգամ ձմեռը վերածել գարնան:

Ասում են. «Թռչունը գեղեցիկ է իր երամով»: Մոնթեն և մեր բոլոր նահատակների «երամը» ճախրում է դեպի անմահություն՝ հետագիծ թողնելով մի լուսավոր ուղի, որով եթե մենք ընթանանք, ապա իսկապես կունենանք ազատ, անկախ, միացյալ ու հզոր Հայաստան:

Ապրիլյան պատերազմ և նորից կռվի դաշտում

Մոնթե Մելքոնյանի զինակից ընկերներից նախկինում «Հայդուկ» ջոկատի հրամանատար, ներկայումս ոստիկանության զորքերի գնդապետ Հովիկ Հայրապետյանը, լսելով ազերաթուրքերի՝ ԼՂՀ սահմանների վրա ապրիլյան հարձակման մասին, մի թյո՛ւ արեց ու քթի տակ հայհոյախառն նզովեց դիվանագիտական ճակատի «անմեղներին»՝ նրա և իմ կարծիքով, ժամանակին բուն հայկական հողերի՝ Քուռ - Արաքսյան միջտարածքի ազատագրման նպաստավոր պահը բաց թողնելու և

Հայկական զինված ուժերի սրընթաց առաջխաղացումը դեպի հյուսիս-արևելք արգելելու շտապողականության գործում: Պատմության մեջ քիչ լսված ու պատահած իրողություն: Բաց էր թողնվել մեր հողերը ազերաթուրքերից վերջնականապես ազատագրելու հնարավորությունը:

Չհամբերեց՝ անմիջապես դիմեց իր վերադասին և 30 հոգուց կազմված ջոկատն առաջնորդեց դեպի Արցախ՝ հայրենյաց սահմանները պաշտպանելու:

…

2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմի լուրն առնելուն պես, Արցախյան պատերազմի մասնակիցներից «Հայդուկ» ջոկատի ազատամարտիկ, մարմարաշենցի Մինասը, առանց երկմտելու ճամփա ընկավ դեպի Ղարաբաղ: Արդեն մոտ հիսուն տարեկան լինելով և անտեսելով բազում հոգսերը՝ ընկերների հետ ոչ թե մեկնեց, այլ սլացավ դեպի Արցախ՝ գիտակցելով, որ այդ երկրամասի կորուստը Հայաստանի կորստյան սկիզբն է լինելու, ինչպես հեռատեսորեն զգուշացնում էր Մոնթեն:

Մոր հորդորին, որ արդեն մասնակցել է Արցախյան առաջին պատերազմին, թող երիտասարդները գնան կռվելու, Մինասը պատասխանել է հակիրճ և սպառիչ. «Երբ հայրենիքը վտանգի մեջ է, իմ աչքին ոչինչ չի երևում, բացի չարագործ թշնամու ատելի կերպարանքը՝ աչքը տնկած մեր աստվածատուր հողին, մեր սրբություններին, պետք է նրան վանել իր հեռավոր որջը՝ թեկուզ մեր կյանքի գնով՝ հանուն ծնողաց, մանկանց ու կանանց»:

Վանեցու շառավիղ Մինասի հորական պապն ու տատը վանեցի էին, մորական պապը՝ նախիջևանցի, իսկ տատը՝

մշեցի: Այսպիսով՝ մայրը մշեցու ու սասունցու ժառանգ է: Իսկ ինքը՝ Մինասը, արարատյան բարբառով խոսող, վանեցու, մշեցու, նախիջևանցու և սասունցու հուշն ու հարգը, հայրենանվիրումը շարունակող հայ է:

…

Իսկ Նոր Խարբերդցի՝ արցախյան ազատամարտի վետերան Կամո Կակոյանը (ներկայումս Նոր Խարբերդի համայնքապետ) ապրիլյան պատերազմական իրավիճակի առաջին օրերին իր կազմավորած 10 հոգանոց կամավորական ջոկատով, որում նաև իր որդին էր, միացավ ազատամարտիկ հրամանատարներ Ջերմուկի Համոյի՝ Մուշեղ Բաբայանի և Մասիսի Սայադի՝ Սայեն Հայրապետյանի միասնական ջանքերով կազմավորված նորօրյա «Հայդուկ» կամավորական ջոկատին ու մեկնեց Արցախ:

Մի առիթով Կակոյանը պատմեց՝ 1993թ. մարտին Մարտակերտի շրջանում տեսել է Մոնթեին, երբ նա ելույթ է ունեցել ազատամարտիկների առջև՝ կանգնած տանկի վրա: Կակոյանը մանրամասն չէր հիշում նրա խոսքերը, բացի մի արտահայտությունից, «Մենք անպայման պիտի հաղթենք և ազատագրենք մեր պատմական հողերը», սակայն լավ հիշում էր, թե ինչպես էին նրան շրջապատել նրա ելույթից հետո: Բոլոր ազատամարտիկներն ուզում էին մոտիկից նրան տեսնել, մի պահ շփվել կենդանի լեգենդի հետ, գոնե մի բառ փոխանակել:

Եվ նորից, առանց հապաղելու, հայ ազգի զավակունք՝ նորօրյա և վետերան հայկազունները կանգնեցին ընդդեմ թշնամու: Եվ նորից՝ առանց հապաղելու ազգի թիկունքայինները կանգնեցին հայկազունների թիկունքին:

Վերջաբանի փոխարեն

Հայրենիք-Սփյուռք-Արցախ միասնական ոգին կերտեցին Արցախյան պատերազմի դժվարին, սակայն փայլուն հաղթանակը: Ընդ որում, Սփյուռքը Հայրենիքի հետ էր ոչ միայն տարատեսակ օժանդակությամբ, այլև դարասկզբի ազատամարտի և ետեղեռնյան վրիժառության ավանդույթներին հավատարիմ քաջորդիներով: Մոնթեն նրանցից մեկն էր՝ նվիրյալ, գիտակ ու ազնվասիրտ…

Մոնթե Մելքոնյանի գործունեության աշխարհագրությունը ԱՄՆ-ից հասավ Միջին Արևելք, այնտեղից Եվրոպա, ի վերջո՝ Հայաստան:

ԱՄՆ-ում ծավալեց հայկական պատմության վերաբերյալ գիտական գործունեություն, ընկերների հետ ստեղծեց Հայ ուսանողների միությունը (ՀՈՒՄ): 1978թ. կազմակերպեցին հայոց պատմության, մշակույթի և Հայոց ցեղասպանությանն առնչվող աննախադեպ ցուցահանդես:

Միջին Արևելքում նա միացավ հայության մեծ պայքարին: Հայկական հարցի լուծմանը վերաբերող տեսակետների բախումների բովով անցավ, դժվարություններ տեսավ, դիմակայեց շատ փորձությունների, սակայն կանգ չառավ երբեք: Միշտ իրար հաջորդեցին նրա անդուլ քայլերը՝ քայլեր վրեժի և քայլեր վեհ նպատակի…

Հայրենիքում նա կռվեց պատմական Հայաստանի 10-րդ նահանգի՝ Արցախ աշխարհի ազատագրման համար՝ կռվեց իր ամբողջ զորությամբ և հաղթեց:

«Պատմական այս պահը մեր ձեռքից չպետք է բաց թողնենք», «Եթե կորցնենք Արցախը, կշրջենք մեր պատմության

վերջին էջը» նրա արտահայտած այս մտքերը որպես կոչ համախմբման, տարածվեցին ամբողջ հայության մեջ:

Մոնթեն հեռուն էր տեսնում, անչափ հեռուն և վստահ էր՝ նպաստավոր պահերը երկար չեն տևում՝ օգտվել է պետք ճիշտ ժամանակին և՛ պատմական, և՛նպաստավոր պահից:

«Ինչքան արագ գործենք, այնքան շուտ կավարտենք այս պատերազմը»,

«Ղարաբաղի մնացյալ տարածքներն ու Նախիջևանն ալ կազատագրենք և՝ վե՛րջ այս պատերազմին»,

«Պատերազմից հետո պետք է հզորացնենք երկիրը, շատ-շա՛տ հզորացնենք: Այս կռիվը դեռ վերջինը չէ»,- նրա ամենօրյա խոհերն էին:

Հետգրություն՝ սկզբից

Հայոց մայրերը Մոնթեներ միշտ են ծնել: Նրանցով է հայ ժողովուրդը պատմության խորքերից հասել մինչև մեր օրերը և վստահորեն գնում է դեպի ապագա:

Մոնթեն կերպար էր հայկազյան, մեծ ազնվական՝ էությամբ պարզ ու անկեղծ, ճշտապահ ու կարգապահ, խստապահանջ, մեծ կամքի տեր ու ծայրաստիճան հետևողական, ազնիվ ու երեխայի պես միամիտ, չափազանց անմիջական, նույնչափ ուշադիր ու հուսադրող, գործուն մարտադաշտում և ամենուր: Կատարյալ էր ռազմարվեստում՝ գրեթե անկորուստ, միշտ հաղթանակով էր ավարտում կռիվը:

Մեծ ազնվականի, քաջ ու արի, տաղանդավոր և հմուտ զորահրամանատարի մասին ոչ միայն ռազմաճակատում, այլև ամբողջ հայության մեջ դեռևս նրա կենդանության օրոք արդեն լեգենդներ էին հյուսվում:

Այսպիսին է Մոնթեն, առասպելացած, լեգենդար Մոնթեն:

Ժողովուրդը չի սխալվում՝ ժողովուրդն իմաստուն է:

ԽՈՍՔ ԽՄԲԱԳՐԻ

Բազմամյա լրագրողական աշխատանքի ու զինծառայության բերումով նշանավոր շատ անձանց հանդիպելու, տեսաձայնագրելու, մարդկային փոխըմբռնումով զրուցելու բազմաթիվ առիթներ եմ ունեցել… Տարազգի պետական գործիչներ, դիվանագետներ, մտավորականներ, զորապետներ… Օրինակ՝ բախտ եմ ունեցել չորս օր ուղեկցելու Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանին:

Բայց ինչո՞ւ անձամբ չեմ հանդիպել Մոնթեին… Առ այսօր միտքս զբաղեցնող այս հարցը, հասկանում եմ, գոյացել է այն յուրահատուկ հիացումից, որ տածում եմ վառ անհատականությամբ մի մարդու հանդեպ, ով ինձ համար ստեղծարար, ազնվաբարո, հայրենանվեր հայի ճշմարիտ կերպար է՝ պատրաստ կյանքը տալու հանուն արդարության ու ազգային իրավունքների վերականգնման, չարանենգությամբ խլված հայրենիքի վերատիրման…

Մոնթե Մելքոնյան հայրենասերի անզուգական էությանը հաղորդվել եմ հեռակա՝ տանս հյուրընկալված նրա զինակցի պատմածով, ոգորող Արցախից ստացված տեսանյութերը հեռուստալրատվական ծրագրով թողարկման նախապատրաստելիս, վերջապես նրա մասին հրապարակումներ ու հրատարակություններ խմբագրելիս…

Այո, հերոսին անձնապես չտեսա, բայց հոգու տեսանելությամբ հաղորդվեցի լայնախոհ մտածողին, ով սրբազան Հայկական լեռնաշխարհից ճառագած մշակութաբարոյական ազդակները անցյալից կորզելու դժվարին ուղի էր բռնել, սակայն պատմական առիթ կար նախահայրենիքի խլված մի հատվածը ոսոխից ետ առնելու: Նա կռվելու արկածախնդրություն չուներ, միանգամայն իմացյալ զորական էր նաև ու գնահատեց պատմական պահը, դրանում էր իր դերը. «Ես այսօր այստեղ եմ, որովհետև իրավունք չունեմ այլ տեղ լինելու: Արցախը կորոշի հայության ճակատագիրը…»

Անարգ թշնամու դեմ անգամ նա կռիվ էր մղում իբրև բնիկ ազնվական («Չարության դեմ վեհսիրտ միշտ, վատի դեմ ազնիվ»՝ Վ. Տերյան), առանց մարդատյացության (եթե մարդախոշոշներն էլ մարդ են), ոչ միայն պատերազմի օրենքներին համապատասխան, այլև իր մարդեղային հոգու թելադրանքով: Այլապես ինչո՞ւ էր իր արյունը տալիս վիրավոր վիճակում գերված թշնամուն, ինչո՞ւ էր վրեժխնդիր զինակիցների ցասումից ազատում գերեվարվածներին…«Ո՞ւր է գերին, հոս էր…», հիշում եմ համառորեն կրկնված նրա հարցը Քարվաճառի ազատագրման տեսանյութից: Հանգստացավ միայն գերուն ողջ տեսնելուց հետո: Հրամանատար էր, սակայն չէր զոռում թերացած ենթակայի վրա, բայց միաժամանակ խիստ և պահանջկոտ շեշտումով հարցնում էր կրկին ու կրկին. «Զո, ինչո՞ւ չզարկիր տանկը, ինչո՞ւ չկրակեցիր…»:

Առերևույթ անծանոթ մնալով, բացակա հարազատի պես ուղեկցում է ինձ: Արցախյան ազատամարտի ընթացքում հեռուստալրատվական ծառայությունում համակարգում էի այդ թեման, ինքս այս ու այն կողմից բազմաթիվ հաղորդումներ եմ

պատրաստել, սակայն անմիջականորեն հաղորդակցվելու պատիվ չունեցա: Բայց ահա պատիվ ունեցա խմբագրելու նրա մասին հերթական գիրքը, որ հեղինակել է Սիրական Չախալյանը: Ես այստեղ տեսա մշտապես ժուժկալ, սակավապետ, քչախոս ու անմիջական, գլխավորը՝ միշտ գործնական ու նպատակամետ, ամեն ինչ ամենաէականին ծառայեցնելու ունակ հայորդուն… Այսպիսիներով է հարակայում ազգը… Հեռու մանր շահախնդրություններից, նյութապաշտությունից ու ընչաքաղցությունից:

Սիրելի՛ հայրենակից, այս է պատշաճում բարեբարո հային ու հայրենասերին՝ որպիսին էր և միշտ է Մոնթեն՝ Սրբազան լեռնաշխարհի Լեռնանուն Որդին…

Ավթանդիլ Գրիգորյան

Մոնթե Մելքոնյան (1957-1993թթ.)

(համառոտ կենսագրություն)

ՀՀ և ԼՂՀ ազգային հերոս Մոնթե Չարլզի Մելքոնյանը ծնվել է 1957թ. նոյեմբերի 25-ին, ԱՄՆ-ի Կալիֆոռնիայի նահանգի Վայսելիա ավանում:

Մորական պապերը գաղթել են Կալիֆոռնիա 1883թ., Մարզվանից: Հորական կողմը գաղթել է 1913թ.՝ Խարբերդի Խարասար գյուղից: Սովորել է Վայսելիայի միջնակարգ և երկրորդական վարժարաններում: 1969-70թթ. ընտանյոք ճամփորդել է Եվրոպայի և Միջին Արևելքի 41 երկրներում: Այցելել է Արևմտյան Հայաստան. իր պապերի ծննդավայրը՝ Մարզվան: Այնտեղ էլ նա գիտակցել է իր հայ լինելը:

1973թ., որպես առաջավոր աշակերտ, ուսուցման ծրագրով նրան ուղարկել են Ճապոնիա՝ սովորելու Օսակա քաղաքում: Սովորելու ընթացքում, իր նախաձեռնությամբ, ճամփորդել է Հարավարևելյան Ասիայի մի շարք երկրներում, այդ թվում՝ Հարավային Կորեայում, Կամբոջայում, Թաիլանդում և Վիետնամում: Այդ ընթացքում լիովին տիրապետել է ճապոներենին ու կարատեի մարտարվեստին:

Վերադառնալով Ամերիկա, ավարտել է դպրոցը և ընդունվել Կալիֆոռնիայի Բերկլիի համալսարանի Հին ասիական ժողովուրդների պատմության ու հնագիտության բաժին: Բացառիկ ընդունակությունների շնորհիվ ուսման չորս տարվա ծրագիրն ավարտել է երկուսուկես տարում:

Համալսարանում ուսանելու տարիներին մի քանի ընկերների հետ հիմնել է «Հայ ուսանողական միությունը»: 1978թ. համալսարանում «Հայ ուսանողական միության» կազմակեր-

պած հայ ժողովրդի պատմության և մշակույթի, Մեծ եղեռնին նվիրված աննախադեպ ցուցահանդեսի հիմնական նախաձեռնողներից է եղել:

1978թ. ավարտել է համալսարանը, պաշտպանելով «Ուրարտուի ժայռափոր դամբարանները» ավարտաճառը, ստանալով բակալավրի աստիճան: Այնուհետև, ուսումը շարունակելու համար ընդունվել է Օքսֆորդի համալսարան, սակայն նվիրված լինելով նորագույն հայ ազատագրական պայքարին՝ հրաժարվել է ուսումը շարունակելու ծրագրից: Նույն տարվա մարտին մեկնել է Լիբանան՝ հայրենիքին մոտ լինելու և հայերեն սովորելու նպատակով: Մի քանի ամիս անց այցելել է Իրան:

1978թ. աշնանը վերադարձել է Լիբանան և քաղաքացիական պատերազմի ժամանակ երկու տարի մասնակցել հայկական թաղամասի պաշտպանությանը: Նույն ժամանակամիջոցում, առանց հատուկ դասընթացների, ինքնուրույն սովորել է հայերեն գրել ու կարդալ: Մինչ այդ նա տիրապետում էր անգլերենին, ֆրանսերենին, իսպաներենին, ճապոներենին, թուրքերենին, իտալերենին, որոշ չափով գիտեր պարսկերեն և քրդերեն:

1978թ. ամռանը, ծնողների ամուսնության 25-ամյակի առթիվ, վերջին անգամ վերադարձել է ծննդավայր և այնտեղից անմիջապես մեկնել Իրան: 1979թ. սեպտեմբերին Իրանից վերադարձել է Լիբանան և մինչև 1980թ. մայիսը մնացել Բուրջ-Համուդում:

1980թ. միացել է Հայաստանի ազատագրական հայ գաղտնի բանակին (ՀԱՀԳԲ-ԱՍԱԼԱ) ու շուտով դարձել նրա գլխավոր գործիչներից: Գրեթե երեք տարի գաղտնի ապրել է Բեյ-

ռութի կենտրոնում, հոդվածներ գրել ՀԱՀԳԲ-ի պաշտոնաթերթ «Հայաստան»-ի համար: Այդ և հաջորդ տարիներին կատարելագործել է ռազմական գիտելիքները՝ ՀԱՀԳԲ-ի ռազմակայանում ձեռք բերելով լրացուցիչ գիտելիքներ ու փորձ: Հետագայում դարձել է ՀԱՀԳԲ-ի գլխավոր մարզողներից:

1981թ. սեպտեմբերի 24-ին եղել է Փարիզում, թուրքական դեսպանատան դեմ ուղղված «Վան» գործողության կազմակերպիչներից էր: 1981թ. նոյեմբերին 11-ին Փարիզում ձերբակալվել է՝ Հռոմում թուրք դիվանագետի դեմ կատարված մահափորձին առնչվելու կասկածով, որի հերքումից հետո, այնուամենայնիվ, բանտարկվել է կեղծ անձնագիր ունենալու մեղադրանքով և մեկուկես ամիս հետո ազատ է արձակվել: Վերադառնալով Լիբանան, ընդդիմացել է ՀԱՀԳԲ-ի ղեկավար Հ. Հակոբյանի որդեգրած քաղաքական ուղեգծին ու գործելակերպին և մի խումբ ընկերների հետ, 1983թ. հեռացել է ՀԱՀԳԲ-ից՝ հիմնելով «ՀԱՀԳԲ-հեղափոխական շարժում» խմբավորումը: Այս ընթացքում ապրել է լիակատար մեկուսացման պայմաններում:

1985թ. նոյեմբերի 27-ին երկրորդ անգամ է ձերբակալվել Փարիզում՝ հայկական պահանջատիրական բնույթի անլեգալ գործունության և դարձյալ կեղծ անձնագիր պահելու մեղադրանքով և մինչև 1989թ. հունվարը եղել է Ֆրեն և Փուասի բանտերում: Մեկուսացման և բանտարկության տարիներին հոդվածներով հանդես է եկել Փարիզի «Հայ Պայքար» և Լոնդոնի «Կայծեր» թերթերում, Սան Ֆրանցիսկոյի «Սարդարապատ» ամսագրում: 1990թ. հոդվածների մի մասը հրապարակվել է «Պայքարելու իրավունքը» վերնագրով անգլերեն գրքում: Այդ ժամանակահատվածում հայերեն են թարգման-

վել անգլերեն լույս տեսած նրա երեք աշխատությունները, որոնք 1994թ. հրատարակվել են առանձին գրքով՝ «Իրականություն» վերնագրով:

1989թ. հունվարին Մոնթեն ազատ է արձակվել: Փաստաթղթեր չունենալու պատճառով,1989թ. փետրվարից մինչև 1990թ. սեպտեմբերը, նա ապրել է թափառական և հալածական, կարճ ժամանակով՝ Եմենում, Կենտրոնական Եվրոպայում ու Հարավսլավիայում:

1990թ. հոկտեմբերին Մոնթեին վերջապես հաջողվել է գալ Հայաստան: Մինչև 1991թ. սեպտեմբերը կատարել է գիտական աշխատանքներ: «Հայաստանը և հարևանները» գիրքը գրելու և հրատարակելու նպատակով աշխատել է Հայաստանի ազգային ակադեմիայում, միաժամանակ, Վազգեն Սարգսյանի հանձնարարությամբ, սահմանների ուսումնասիրում և պատերազմական իրավիճակներին վերաբերող այլ աշխատանքներ:

Արցախյան հակամարտության խորանալուց հետո ,թողնելով գիտական գործունեությունը՝ մեկնել է Շահումյանի շրջան, մասնակցել Էրքեջ, Մանաշիդ, Բուզլուխ գյուղերի պաշտպանական մարտերին: Վերադառնալով Երևան, 1991թ. կազմավորել է «Հայրենասիրական» ջոկատը, կրկին մեկնել Շահումյանի շրջան՝ Ղարաչինար գյուղ: Մասնակցել է շրջանի պաշտպանության կռիվներին, աչքի ընկել մարտական կարողություններով ու հրամանատարական հմտությամբ: Դեկտեմբերի վերջին նորից վերադարձել է Երևան:

1992թ. փետրվարի 4-ին նշանակվել է ԼՂՀ Մարտունու պաշտպանական շրջանի շտաբի պետ, իսկ մարտին, հրամանատար: Մոնթեին հաջողվել է համախմբել ինքնապաշտ-

պանության անկախ ջոկատները և ստեղծել բանակային կուռ կառույց:

Մինչ Մոնթեն, Մարտունու շրջանը շատ թույլ էր պաշտպանված, բռնազավթված էր տարածքի որոշակի մասը: Կարճ ժամկետում Մոնթեին հաջողվեց վերադարձնել թշնամու խլած տարածքի 80 %-ը:



1992թ. հունիսին թշնամին ծավալուն հարձակումներ սկսեց Արցախի բոլոր ճակատներում: Շահումյանի շրջանն ամբողջությամբ և Մարտակերտի շրջանի մեծ մասը հայաթափվեց ու անցավ հակառակորդի ձեռքը: Համեմատաբար հարթավայրային Մարտունու շրջանում արտագաղթի մեծ վտանգ կար, Մոնթեն կանխեց՝ արգելափակող սահմաններ դնելով… Մարտունու ինքնապաշտպանության ուժերը դիմակայեցին հակառակորդի ուժգին և իրար հաջորդող հարձակումներին, հիմնովին ջախջախեցին՝ պատճառելով բազմաթիվ զոհեր ու վիրավորներ, խլելով տասնյակ տանկեր, զրահամեքենաներ և այլ ռազմական տեխնիկա: Նրա մարտավարական, հանկարծակի և կայծակնային գործողությունների շնորհիվ Մարտունին դարձել էր անառիկ բերդ, բնակչությունը իրեն ապահով և վստահ էր զգում:

1993թ. մարտին իր ջոկատով մասնակցել է Մարտակերտի շրջանի ազատագրմանը, իսկ մարտի վերջին և ապրիլի սկզբին ղեկավարել Քարվաճառի ազատագրումը՝ Արցախի կողմից: Իրականացրել է այդ շրջանում տեղաբաշխված թշնամական ռազմական հենակետերի ոչնչացման գործողությունը: Ապրիլի 4-ին վերադարձել է Մարտունի, հերթական անգամ Մարտունու պաշտպանական ուժերով ոչնչացրել հանկարծակի հարձակված թշնամուն:

1993թ. մայիսին եղել է Լաչինում: Ծրագրել է Ղուբաթլուի շրջանի ազատագրումը, որը արտաքին քաղաքական նկատառումներով չի իրականացվել: Վերադարձել է Մարտունի և զբաղվել Աղդամի շրջանի ազատագրմամբ:

1993թ. հունիսի 12-ին, երբ Աղդամի մատույցներում՝ ոչնչացվում էին թշնամու կրակակետերը, Մոնթեն դրան հետևել է Մութ սարի «08» դիտակետից և ղեկավարել գործողությունը: Մարտերն ավարտվելուց հետո զինակիցների հետ իջել է դիտակետից՝ ընդհանուր վիճակն ստուգելու և Մարզիլի գյուղում անսպասելի հանդիպել է հակառակորդի ՀՄՄ զրահամեքենային: Ընթացած կարճատև մարտում նա զոհվել է զրահամեքենայի արկի բեկորից:

Արցախյան ազատամարտի տարեգրություն

(փետրվար 1988թ. – մայիս 1994թ.)

«Եթե ժամանակին կռվեին մեր նախնիները,
հարկ չէր լինի այս կռիվը տալու»:
Մոնթե Մելքոնյան

Ոգով ուժեղ, անկոտրում ու ազատատենչ արցախցին, օգտվելով պատմական նպաստավոր պահից, այլևս չհանդուրժեց դեպի իր տարածք սողացող ազերաթուրքին: Իր ազգային արժանապատվությունը և ինքնիշխանությունը պաշտպանելու համար 1988թ. փետրվարին ոտքի կանգնեց: Արցախցիներն ամենևին չէին հաշտվել հայրենի տարածքները Ադրբեջանին բռնակցելու և Ադրբեջանի իշխանությունների իրականացրած հակահայկական քաղաքականության հետ:

Իսկ եկվորները չհանդուրժեցին արցախցու պոռթկումը և որոշեցին ռազմական ճանապարհով լուծել խնդիրն իրենց օգտին:

Եվ սկսվեց սրբազան Արցախյան ազատամարտը՝ պատերազմ խաշնարած եկվորների և բնիկների միջև: Պատերազմ, որի հաղթական ավարտին իր մեծ դերակատարումն ունեցավ նաև Մոնթե Մելքոնյանը:

12 փետրվարի 1988թ. – Ստեփանակերտում տեղի ունեցավ ժողովրդական առաջին զանգվածային ցույցը՝ ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ վերամիավորելու պահանջով: 1992թ. ԼՂՀ Գերագույն խորհուրդը փետրվարի 12-ը հայտարարեց «Վերածննդի օր»:

20 փետրվարի 1988թ. – ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների մարզային խորհուրդը որոշում ընդունեց ան-

ջատվել Ադրբեջանից և վերամիավորվել Մայր Հայրենիքի՝ Հայաստանի հետ: Արցախյան առաջին ցույցը Երևանում:

22 փետրվարի 1988թ. – Ադդամի կողմից ադրբեջանական բազմահազարանոց զինված խառնամբոխը հարձակվեց ԼՂԻՄ-ի Ասկերան ավանի վրա: Հայկական կողմը տվեց արժանի հակահարված:

27 փետրվարի 1988թ – Արցախյան շարժումը խեղդելու նպատակով՝ Սումգայիթում (Ադրբեջան) սկսվեցին հայերի եռօրյա ջարդեր (փետրվարի 27-29-ը): Արդյունքը՝ հարյուրավոր զոհեր (պաշտոնական տվյալներով՝ 32), հազարավոր վիրավորներ և քաղաքի 18000 հայության բռնագաղթ:

28 փետրվարի 1988թ. – ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը մերժեց Հայաստանի հետ վերամիավորվելու ԼՂԻՄ-ի մարզխորհրդի պահանջը:

21 նոյեմբերի 1988թ. – Բաքվից հետո Ադրբեջանի 2-րդ հայաշատ կենտրոնի՝ Կիրովաբադի (հայոց հինավուրց Գանձակի) բազմահազարանոց հայության ջարդի և բռնագաղթի սկիզբը: Ադրբեջանական վայրագությունները շարունակվեցին մինչև ամսվա վերջը:

25 նոյեմբերի 1988թ. – Գորբաչովյան վարչակարգը Երևանում և Բաքվում հաստատեց պարետային ժամ:

26 հուլիսի 1989թ. – Շահումյանի (Հյուսիսային Արցախ) շրջանային խորհուրդն ընդունեց ԼՂԻՄ-ի հետ վերամիավորվելու որոշում:

1 հոկտեմբերի 1989թ. – Գանձասարի վանքում Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյանը մատուցեց առաջին պատարագը:

1 դեկտեմբերի 1989թ. – Երևանում կայացած ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և ԼՂԻՄ Ազգային խորհրդի միացյալ նիստում ընդունվեց պատմական որոշում՝ Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին:

12 հունվարի 1990թ. – Մանաշիդի վրա հարձակման անցած ադրբեջանական մեծաքանակ հրոսակախմբերը հայկական ինքնապաշտպանական ուժերի ջախջախիչ հակահարվածով հետ շպրտվեցին գյուղի մատույցներից:

13 հունվարի 1990թ. – սկսվեց և 7 օր անընդմեջ (հունվարի 13-19-ը) շարունակվեց Բաքվի 200 հազարանոց հայության ջարդը և բռնագաղթը:

15 հունվարի 1990թ. – Հայկական աշխարհազորային ջոկատները, երկօրյա մարտերից հետո, գրավեցին Արարատի շրջանում ռազմավարական կարևոր դիրքում ապօրինաբար հիմնված ադրբեջանական Քյարքի գյուղը (այժմ՝ Տիգրանաշեն, Արարատի մարզ):

18 հունվարի 1990 թ. – ԼՂՀ Գերագույն խորհուրդն ընդունեց «ԼՂՀ պետական անկախության մասին» հռչակագիրը:

18 հունվարի 1990թ.– Հայ-ադրբեջանական զինված բախումների սկիզբը: Արարատի շրջանի Երասխ գյուղի մատույցներում հայկական աշխարհազորայինները եռօրյա մարտերում ջախջախիչ հակահարվածով, հետ շպրտեցին ադրբեջանական ելուզակներին:

27 փետրվարի 1990 թ. – ՀՀ Վայքի շրջանի Բարձրունի գյուղից հասցված շեշտակի կանխիչ հարվածով հայկական ինքնապաշտպանական ուժերը («Կոնդ», «Մեծն Տիգրան», ԱԻՄ-ի և Ջերմուկի ջոկատներ, տեղական ուժեր) գրավեցին ադրբեջանական Քյարմաչաթախ գյուղը (Նախիջևանի ԻՄ)՝

ջախջախելով այնտեղ կենտրոնացած հակառակորդի հնգապատիկ գերազանցող ուժերը:

27 մայիսի 1990 թ. – Երևանի երկաթուղային կայարանում և Երևան-Նուբարաշեն խաչուղու վրա տեղի ունեցան մարտեր՝ հայկական ինքնապաշտպանական ուժերի և խորհրդային զինվորների միջև, զոհվեցին 27 ազատամարտիկ և խաղաղ բնակիչներ:

20 սեպտեմբերի 1990թ. – Ստեղծվեց ՆԳՆ-ին կից «Հատուկ գունդը», որը դարձավ ապագա հայկական կանոնավոր բանակի կորիզը: Գնդի կազմում ընդգրկվեցին Հայաստանի շրջաններում և Երևանում գործող 26 վաշտ: Գնդի առավելագույն կազմը եղել 2300 հոգի, ունեցած զոհերի թիվը 159: «Հատուկ գունդը» մարտնչել է ՀՀ և ԼՂՀ բոլոր ճակատներում:

30 ապրիլի – 8 մայիսի 1991թ. – Խորհրդային զորքերը և ադրբեջանական ՕՄՕՆ-ը իրականացրին «Օղակ» գործողությունը և հայաթափեցին Հյուսիսային Արցախի Գետաշեն-Մարտունաշեն ենթաշրջանի 19 գյուղ:

4 մայիսի 1991թ. – ՀՀ կառավարության որոշմամբ, կառավարությանը կից, ստեղծվեց Պաշտպանության կոմիտե (ՊՊԿ):

15 հուլիսի 1991թ.– Մեծաթիվ օդուժի և զրահատեխնիկայի օգնությամբ, խորհրդա-ադրբեջանական միացյալ ուժերը (Կիրովաբադի 23-րդ դիվիզիա) ծանր կորուստների գնով (72 սպանված, 3 միավոր զրահամեքենա) գրավեցին Շահումյանի շրջանի Էրքեջ գյուղը: Նախորդ օրը ընկել էին Մանաշիդ և Բուզլուխ գյուղերը:

16 օգոստոսի 1991թ. – Արցախի Հաթերք գյուղում (Մարտակերտ) «Փառանձեմ» ջոկատի կանայք, ի պատասխան

խորհրդային բանակի խժդժությունների, իրենց լրիվ սպառազինությամբ (ներառյալ՝ զրահատեխնիկան) 5 օրով իբրև պատանդ պահեցին 43 զինվորի:

2 սեպտեմբերի 1991թ.– Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների՝ Ստեփանակերտում կայացած համատեղ նիստում հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

13 սեպտեմբերի 1991թ.– Շահումյանի շրջանում սկսվեց հայկական ուժերի հակահարձակումը: Եռօրյա մարտերի ընթացքում (սեպտեմբերի 13-15-ը) թշնամուց ազատագրվեց Էրքեջ-Բուզլուխ-Մանաշիդ գյուղախումբը:

21 սեպտեմբերի 1991թ. – Հայաստանի Հանրապետությունում անցկացվեց Անկախության հանրաքվե: Հայաստանի բնակչության ավելի քան 99%-ը կողմ քվեարկեց Հայաստանի անկախությանը:

23 սեպտեմբերի 1991թ. –Հիմք ընդունելով սեպտեմբերի 21-ի Անկախության հանրաքվեի արդյունքները՝ ՀՀ Գերագույն խորհուրդը Հայաստանի Հանրապետությունը հռչակեց անկախ պետություն:

16 հոկտեմբերի 1991թ. – Հայաստանում անցկացվեցին նախագահական ընտրություններ: Հայաստանի Հանրապետության առաջին Նախագահ ընտրվեց Լևոն Տեր-Պետրոսյանը:

17 հոկտեմբերի 1991թ. – Ադրբեջանական օդուժը, հրետանին և «Գրադ» ռեակտիվ կայանքները զանգվածային ռմբակոծության և գնդակոծության ենթարկեցին ԼՂՀ Մարտունի քաղաքն ու նրա մատույցները:

30 հոկտեմբերի 1991թ. – Արցախի նորաստեղծ ինքնապաշտպանական ուժերը (հրամանատար՝ Արկադի Տեր-

Թաղևոսյան՝ Կոմանդոս) փայլուն օպերացիայի շնորհիվ թշնամուց ազատագրեցին ռազմավարական մեծ կարևորություն ունեցող Յալգյուղը (Հադրութի շրջան):

20 նոյեմբերի 1991թ. – Աղդամից Մարտունի քաղաք թռչելիս՝ ԼՂՀ երկնքում աղետի ենթարկվեց ՄԻ-8 ռազմափոխադրական ուղղաթիռը: Զոհվեցին Ռուսաստանի, Ղազախստանի և Ադրբեջանի զինվորական ու քաղաքացիական բարձրաստիճան 21 պաշտոնյա:

26 նոյեմբերի 1991թ. – Ադրբեջանի Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց ԼՂՀ-ն «լուծարելու» մասին: Այդ որոշումը ավելի սրեց ադրբեջանա-արցախյան զինված առճակատումը:

4 դեկտեմբերի 1991թ. – ՀՀ Նախագահը վավերացրեց ՀՀ կառավարության կազմի մասին օրենքը: Այլ նախարարությունների թվում էր նաև ՀՀ պաշտպանության նախարարությունը:

10 դեկտեմբերի 1991թ. – Անցկացվեց ԼՂՀ անկախության հանրաքվե: Բնակչության ավելի քան 99%-ը կողմ քվեարկեց Արցախի անկախությանը:

10 դեկտեմբերի 1991թ. – «Մեծն Տիգրան» զումարտակի 13 հոգիանոց գրոհային ջոկատը շեշտակի գրոհով ջախջախեց ԼՂՀ Շահումյանի շրջանի Թոդան գյուղում տեղաբաշխված ադրբեջանական 450 հոգիանոց կայազորը:

21 դեկտեմբերի 1991թ. – Խորհրդային բանակի վերջին զորամասերը դուրս եկան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից:

6 հունվարի 1992թ. –Հիմք ընդունելով ԼՂՀ Անկախության հանրաքվեի արդյունքները՝ ԼՂՀ Գերագույն խորհուրդը Լեռ-

նային Ղարաբաղի Հանրապետությունը հռչակեց անկախ պետություն:

11 հունվարի 1992թ. – Հակահարձակման անցած ԼՂՀ ինքնապաշպանական ուժերը գրավեցին Ստեփանակերտը մշտապես գնդակոծող ադրբեջանական ռազմական երկու կարևոր հենակետ՝ Մալիբեյլին և Ղուշչիլարը: Առգրավվեց հսկայական ռազմավար:

20 հունվարի 1992թ. – Երկօրյա մարտերից հետո (հունվարի 20-21-ը) Արցախի ինքնապաշտպանական ուժերն ազատագրեցին Ստեփանակերտի ռազմավարական մեծ կարևորություն ունեցող Կրկժան արվարձանը:

26 հունվարի 1992թ. – Քարինտակի հերոսամարտը: Գյուղի (Շուշիից 1 կմ հարավ) մատույցներում 12-ժամյա արյունահեղ մարտում ջախջախիչ պարտություն կրեցին Ադրբեջանի պաշտպանության նախարարի գլխավորությամբ Շուշիից հարձակման անցած ադրբեջանական մեծաքանակ ուժերը:

28 հունվարի 1992թ. – Ստեղծվեց ՀՀ ԶՈՒ առաջին զորամիավորումը, 1992թ. սեպտեմբերի 14-ից՝ 1-ին դեսանտագրոհային գունդը, 1993թ. մարտի 26-ից՝ 1-ին մոտոհրաձգային բրիգադը: Գունդն առաջին մարտական մկրտությունն ստացել է 1992թ. մայիսին, Լաչինի միջանցքի պաշտպանության մարտերում: Զորամասը մշտական մարտական հերթապահություն է իրականացրել Արարատ-Վայք սահմանային գոտում: 1994թ. զորամասը մասնակցել է Մարտակերտի և Քարվաճառի մարտերին: 1992-1994 թվականներին զորամասն ունեցել է 61 զոհ:

28 հունվարի 1992թ. – ՀՀ Գերագույն խորհրդի նախագահի հրամանագրով ստեղծվեց ՀՀ պաշտպանության նախարա-

ությունը: Պաշտպանության նախարար նշանակվեց Վազգեն Սարգսյանը: Տարբեր ժամանակներում այդ պաշտոնում եղել են նաև **Նորատ Տեր-Գրիգորյանցը** (Պաշտպանության նախարարի պաշտոնակատար),**Վազգեն Մանուկյանը, Սերժ Սարգսյանը, Վաղարշակ Հարությունյանը, Միքայել Հարությունյանը, Սեյրան Օհանյանը, Վիգեն Սարգսյանը և Դավիթ Տոնոյանը:**

16 փետրվարի 1992 թ. – Շուշիից ադրբեջանական կողմը «Գրադ» և «Ուրագան» ռեակտիվ կայանքներից զանգվածային գնդակոծության ենթարկեց Ստեփանակերտը (300 արկ): Գրանցվեցին մեծաթիվ ավերածություններ և մարդկային կորուստներ:

17 փետրվարի 1992թ. – Արցախյան ինքնապաշտպանական ուժերը գրավեցին ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Ղարադաղլուի ադրբեջանական ռազմական հանգույցը (ԼՂՀ Մարտունուշրջան):

26 փետրվարի 1992թ. – ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը հմուտ գործողությամբ գրավեցին թշնամու, Շուշիից հետո, Արցախում իր նշանակությամբ 2-րդ ռազմական հենակետը՝ Խոջալուն:

2 մարտի 1992թ. – Հայաստանը դարձավ ՄԱԿ-ի անդամ:

22 մարտի 1992թ. – Նուբարաշենում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության 1-ին դեսանտագրոհային գնդի երդման առաջին արարողությունը:

29 մարտի 1992թ. – Շուշի քաղաքից, Ղայբալու, Ջանհասան, Քյոսալար գյուղերից Ստեփանակերտի վրա հարձակման անցած ադրբեջանական ուժերը թեժ մարտերում ջախջախվեցին և ետ շպրտվեցին ելման դիրքեր:

29 ապրիլի 1992թ. – Արցախյան ինքնապաշտպանական ուժերը, ջախջախիչ հակահարվածով, հետ շպրտեցին Ստեփանակերտի և Քարին տակի վրա զանգվածային հարձակման անցած ադրբեջանական մեծաքանակ հրոսակախմբերին:

8 մայիսի 1992թ. – Արցախի ինքնապաշտպանական ուժերի հրաշալի ռազմագործողությամբ ադրբեջանական 71-ամյա գերությունից ազատագրվեց Շուշին:

10 մայիսի 1992թ. – Ստեղծվեց ՀՀ ԶՈՒ կապի առաջին զորամասը:

18 մայիսի 1992թ.– Արցախի ինքնապաշտպանական ուժերի հուժկու հարվածով՝ ազատագրվեցին Լաչինի շրջանը (Սյունյաց նահանգի Աղահեճք գավառը, 13-րդ դարից՝ Քաշաթաղ) և Լաչին քաղաքը (Բերձոր) և բացվեց Մայր Հայաստանի հետ միացնող ճանապարհը, ճեղքվեց Արցախի շրջափակման մահացու օղակը: Լաչինի ազատագրումը դարձավ Շուշի-Լաչին ռազմավարական գործողության տրամաբանական ավարտը: Այս ճանապարհին ստացավ «Կյանքի ճանապարհ» անվանումը:

Մայիս 1992թ. – Ավարտվեց ՀՀ ԶՈՒ հակաօդային զորամասերի ձևավորումը: Մայիսի երրորդ կիրակի օրը, ՀՀ ԶՈՒ-ում նշվում է որպես ՀՕՊ զորքերի օր:

13 հունիսի 1992թ. – Խորհրդաադրբեջանական հսկայական միացյալ ուժերը սկսեցին և շատ կարճ ժամկետում իրագործեցին Շահումյանի (հունիսի 13-14-ը) և մասամբ Մարտակերտի շրջանների բռնազավթման գործողությունը:

4 հուլիսի 1992թ. – Նախորդ օրը 3 ուղղություններով հարձակման անցած ադրբեջանական հսկայական ուժերի (նաև

մեծաթիվ վարձկաններ ԱՊՀ-ից և Թուրքիայից) ճնշմանների ներքո հայկական ուժերը կեսգիշերին մոտ թողեցին ԼՂՀ Մարտակերտ քաղաքը: Հետագա օրերին թշնամին գրավեց նաև Թարթառի ամբողջ ձախափնյա մասը:

5 օգոստոսի 1992թ. – Ադրբեջանական բանակի կողմից Ստեփանակերտում հրետանային աննախադեպ գնդակոծության հետևանքով սպանվեցին ու վիրավորվեցին 106 խաղաղ բնակիչ:

8 օգոստոսի 1992թ. – Հնգօրյա արյունահեղ մարտերից հետո (օգոստոսի 4-8-ը) ընկավ Արծվաշենը:

30 օգոստոսի 1992թ. – Ստեղծվեց «Արծիվ» -մահապարտներ գումարտակը, որը վճռորոշ դեր կատարեց Արցախի հյուսիս-արևելյան ճակատում: Դրա գործողությունների շնորհիվ հնարավոր եղավ բեկել ռազմաճակատի այդ հատվածի իրադարձությունների ընթացքը և կասեցնել թշնամու հարձակումը:

7 սեպտեմբերի 1992թ. – Ավարտվեց ՀՀ ԶՈՒ ինժեներական զորամասի ձևավորումը: 2000 թվականից սեպտեմբերի 7-ը ՀՀ ԶՈՒ-ում նշվում է որպես Ինժեներական զորքերի օր:

2 հոկտեմբերի 1992թ. – Լիովին ձախողվեց հյուսիս-արևելքից ԼՂՀ Մարտունի քաղաքի վրա ձեռնարկվա ադրբեջանական ծավալուն հարձակումը: Վճռական հակագրոհով հայկական ուժերը թշնամուն հետ շպրտեցին ելման դիրքեր և ազատագրեցին 2 տարի առաջ Ադրբեջանի զավթած զգալի տարածքներ:

4 հոկտեմբերի 1992թ. – Երկօրյա արյունահեղ մարտերի ընթացքում, չնայած երկուստեք ծանր կորուստներին, լիովին

ձախողվեց հյուսիսից հասցված զանգվածային հարվածով Լաչինի միջանցքը գրավելու ադրբեջանցիների փորձը:

8 հոկտեմբերի 1992թ. – Ավարտվեց ՀՀ ԶՈՒ տանկային զորամասի ձևավորումը: Հետագայում հոկտեմբերի 8-ը ՀՀ ԶՈՒ - ում նշվում է որպես Տանկիստի օր:

10 հոկտեմբերի 1992 թ.– Ավարտվեց ՀՀ ԶՈՒ քիմիական զորամասի ձևավորումը: 1996 թվականից հոկտեմբերի 10-ը ՀՀ ԶՈՒ - ում նշվում է որպես Քիմիական զորքերի օր:

13 հոկտեմբերի 1992թ. – ՀՀ և ԼՂՀ կառավարությունների համատեղ ջանքերով ստեղծվեց Արցախի պետական համալսարանը: Բացումը տեղի ունեցավ 1993թ. մայիսի 10-ին՝ Շուշիի ազատագրման տարեդարձի հաջորդ օրը:

19 հոկտեմբերի 1992թ. – Ավարտվեց ՀՀ ԶՈՒ հրթիռահրետանային զորամասերի ձևավորումը: Հետագայում հոկտեմբերի 19-ը ՀՀ ԶՈՒ-ում նշվում է որպես Հրթիռահրետանային զորքերի օր:

5 նոյեմբերի 1992 թ.– Ավարտվեց ՀՀ ԶՈՒ հետախուզական զորամասի ձևավորումը: Հետագայում նոյեմբերի 5-ը ՀՀ ԶՈՒ -ում նշվում է որպես Հետախուզական զորքերի օր:

10 նոյեմբերի 1992թ. – Արցախի ինքնապաշտպանական ուժերը Մարտակերտի ռազմաճակատում սկսեցին վեց օրյա (նոյեմբերի 10-15-ը) հարձակողական գործողությունը, որի ընթացքում ազատագրվեցին թշնամու հունիս-հուլիսյան՝ մեծ հարձակման ընթացքում գրավված Վաղուհաս, Հարությունագոմեր, Կճողուտ և Չլդրան գյուղերը:

17 նոյեմբերի 1992թ. – Ավարտվեց ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական հոսպիտալի ձևավորումը: Հետագայում նոյեմբերի 17-ը

ՀՀՋ ՈՒ-ում նշվում է որպես Ռազմաբժշկական աշխատողների օր:

29 նոյեմբերի 1992թ. – Լաչինի միջանցքի հյուսիսային ճակատում ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը վճռական հարձակումով գրավեցին 4 գյուղ՝ Հայի Բազար, Լուլիդուզ, Ղոզլու և Ղարաջանլի, որով զգալիորեն ամրապնդվեց Արցախի «Կյանքի ճանապարհի» ռազմական անվտանգությունը:

25 մարտի 1993 թ. – ԼՂՀ պաշտպանության բանակն սկսեց և մինչև ապրիլի 3-ը շարունակեց Քյալբաջարի (Քարվաճառ) ազատագրման գործողությունը, որի շնորհիվ վերացվեց Հայաստանի Հանրապետության և Արցախի միջև խրված սեպը (շուրջ 2000 քառակուսի կիլոմետր), ոչնչացումից փրկվեցին հայկական հարյուրավոր հնագույն պատմաճարտարապետական կառույցներ, այդ թվում՝ 4-13-րդ դարերում ստեղծված Դադի վանքը:

1 ապրիլի 1993թ. – Քյալբաջարի շրջանի ազատագրման օպերացիայի ընթացքում՝ հայկական ուժերի առաջապահ գումարտակը շեշտակի գրոհով գրավեց Քյալբաջար քաղաքը:

28 հունիսի 1993թ. – ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը երկօրյա մարտերի ընթացքում ազատագրեցին ուղիղ մեկ տարի առաջ ադրբեջանական բանակի գրաված Մարտակերտ քաղաքը: Միաժամանակ թշնամուց ետ խլվեց շրջանի հայկական 6 գյուղ:

23 հուլիսի 1993թ. – Կասեցնելով նախորդ 2 օրվա ադրբեջանական ծավալուն հարձակումը Ասկերանի ուղղությամբ, ԼՂՀ պաշտպանության բանակը վճռական հակահարվածով գրավեց Աղդամ քաղաքը:

18 օգոստոսի 1993թ. – Ադրբեջանական օդուժը բարբարոսական ռմբակոծության ենթարկեց Կապան քաղաքը, որի հետևանքով եղան մեծ ավերածություններ:

22 օգոստոսի 1993 – Հակահարձակման անցած ԼՂՀ պաշտպանության բանակը գրավեց Ֆիզուլի քաղաքը: Հետագա 10 օրերի ընթացքում թշնամին փախուստի դիմեց Ղուբաթլուի, Զանգելանի, Ջեբրայիլի շրջաններից:

18 դեկտեմբերի 1993թ. – Ադրբեջանական 60000-անոց բանակն աֆղան մոջահեդների (1500) և այլ վարձկանների օգնությամբ ծավալուն հարձակման անցավ Արցախյան ռազմաճակատի ողջ երկայնքով: Երկուսուկեսամյա դաժան մարտերում (մինչև 1994թ. մարտի սկիզբը) հայկական կողմը ջախջախիչ հակահարվածով թշնամուն ետ շպրտեց ելման դիրքեր:

7 հունվարի 1994թ. – Եռօրյա արյունահեղ մարտերից հետո, կրելով կենդանի ուժի և զրահատեխնիկայի մեծ կորուստներ, ադրբեջանական զորքերին ու նրանց շարքերում կռվող մեծաթիվ աֆղան մոջահեդներին հաջողվեց ետ գրավել Արցախյան ռազմաճակատի ծայր հարավում գտնվող և ռազմավարական մեծ կարևորություն ունեցող Հորադիզ կայարանը:

9 ապրիլի 1994 – Սկսվեց Արցախյան պատերազմում ԼՂՀ պաշտպանության բանակի հարձակողական վերջին՝ Արեգասարի երկօրյա գործողությունը, որի ընթացքում հայկական ուժերը հմուտ զորաշարժով թշնամուց գրեթե լիովին ազատագրեցին Մարտակերտի շրջանի հյուսիս-արևելյան մասը՝ Մատաղիս-Չայլու-Թալիշ հատվածը:

22 ապրիլի 1994 – ՀՀ նախագահը օրենք ստորագրեց «Մարտական խաչ 1-ին» և «Մարտական խաչ 2-րդ» աստիճանների շքանշաններ սահմանելու վերաբերյալ:

12 մայիսի 1994 – ՌԴ և ԵԱՀԽ Մինսկի խմբի միջնորդությամբ՝ ՀՀ-ի, Ադրբեջանի և ԼՂ Հպաշտպանության նախարարներն ստորագրեցին Արցախյան ռազմաճակատում զինադադարի համաձայնագիրը:

28 հուլիսի 1994 - ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով պաշտպանական շրջանի հրամանատար, փոխգնդապետ Մոնթե Չառլզի Մելքոնյանի հիշատակը հավերժացնելու նպատակով ՀՀ ՊՆ ռազմամարզական վարժարան-ուսումնարանը կոչվել է նրա անունով: Մոնթեի անունն են կրում նաև կրթամշակութային այլ հաստատություններ:

ՋՈՐԱՎԱՐ ԱՎՈ

Մահապարտ էիր գաղտնի բանակի
Եվ եղար պաշտպան արցախյան հողի,
Ազնիվ կերպարով քո ասպետական
Դարձար սիրելին համայն հայության:

Զորական էիր հոգով ու սրտով,
Գիտական մտքով ու սուրբ երդումով:
Արցախի կանչով հայրենիք եկար,
Նրա անվեհեր պաշտպանը դարձար:

Լեգենդար Ավո՝ Մոնթե Մելքոնյա՛ն,
Դու հերոսացար կռվում արցախյան,
Ուժդ ցույց տվիր թուրքաազերուն,
Անկոտրում կամքդ՝ խիզախ արցախցուն:

Հայկյան զարկով էր հոգիդ տոգորվել,
Հին աստվածների ոգով մկրտվել:
Անձնուրաց կռվով թեպետև ընկար,
Սակայն Քո հուշը կմնա անմար...

ԱրԶո

ՍԻՐԱԿ ՉԱԽԱԼՅԱՆ

ՄՈՆԹԵՆ ՆԱՅՈՒՄ Է ԱՐԱՐԱՏԻՆ

Խմբագիր՝ Ավթանդիլ Գրիգորյան
Սրբագրիչ՝ Հասմիկ Չախալյան
Թարգմանիչ՝ Գոհար Հովակիմյան
Վերստուգող սրբագրիչ՝ Զարուհի Մխիկյան
Կազմի ձևավորող՝ Գևորգ Շառոյան

Ստորագրված է տպագրության՝ 29.05.2019:
Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ № 1:
Տպագրությունը՝ օֆսեթ: 11 տպ. մամուլ:

Տպագրվել է «Գևորգ - Հրայր» ՍՊԸ

ԼՈՒՍԱԿՆ

հրատարակչությունում

Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝011-52-79-74
Էլ. փոստ lusakn@rambler.ru